



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

14624

891.99

G-40

25

Printed in Turkey

2003

515

թ. 498

ՄՏՈՒԵՐՔ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք



7-35

ՄՏՈՒԵՐԻՔ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

891.99



2-40

Ա.Ա.

ՔԵՐԹՈՒԱԾՔ

Ի ԽՈՐԷՆ ԱՐԵՆԳԻՍԿՈՊՈՍԷ ՆԱՐ ՊԵՑ



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՄԱՅԵԱՆ

1874

3938

ԱՌ ՀԱՅՐԵՆԱԶԳԱՅ ԸՆԹԵՐՅՈՂՍ



Այս երգերը գրված են մեծաւ մասամբ հայրենի ա-
փոռներէրէ հեռու, պակեխտութեան մեջ, յԵրրոսյա,
յիջատակաւ փառաց շուսափայլ Անցելոյն, եւ Ներկայիս
սգաստուեր աղետիւրն աղեկիգելով:

Հեղինակը ներշնչված է մերթ հոյսակաւ քաղբի մը
շոխններու, եւ մերթ գիտակաւ տաղաւարի մը սերոր-
րութեանը մեջ. երբեմն սնտատաց խորհրդաւոր հովա-
նեացը ներքեւ, երբեմն բարձրաբերն յերանց իրոխ
ապառաժներու փայ ճառած, եւ այլ երբեմն կանաչագեղ
հովտաց գեփխտներու մեջ յերագելով. մերթ միմոսցող
փրփրայեղ կոնակաց առջեւ, եւ մերթ՝ գերեզմանաց
մանաւարտոտ ստուերներու մեջ թափաւելով, Հայրենեաց
խանդակաւ յիջատակը սրտին մեջ բորբոքելով, եւ գրե-
թէ միջա իւր քնարին թելերը՝ աղեկեղ արտաստօրն
ոռոգանելով:

Երկու մաս կամ գիրք բաժնած է Հեղինակն այս
երգերը. ՎԵՊԳ եւ ԵՂԵՐԳԳ: Առաջինը Անցելոյն, երկ-
րորդը՝ Ներկայիս հոտիւրեայ: Երկուրն եւս սակաւատը,
որովհետեւ ոչ մեր բոլոր անցեալ փառքերը կը բովանդա-
կեն, եւ ոչ՝ ներկայ թշուաւութիւնը: Ասոր պատճառը
ոչ միայն իւր տխարութիւնն է՝ նիւթոց անբաւ տատու-
թեանն առջեւ, այլ եւ դժբաղոյ ու անաւոր հրդեհ մը՝
որ Բերայի մեջ Հեղինակին տաւանմանց երկասիրութիւն-



106
40

ները բոլոր յաճիւն փոխարկելով, վիպերուն մեծ մասը,
որ մեր Գիւցագրանց կենսագրութիւնն էր, յափշտակեց
տարան, որիչ բանի մը հաստոր քերթորակսն են բա-
նասիրական աշխատութեանցն հետ: Իսկ այս հաստորին
մէջ ամփոփածները՝ բնորդ ունեցան ազատերո, ոմանք
ազգային օրագրաց մէջ հրատարակիւմ լինելով, ոմանք
այ բարեխանաց քով գտնվելու բարեդիպութեամբ:

Հեղինակը այսօր այն նշխարեալ մնացորդքն ի յոյս
ընծայած ժամանակ՝ յոյս ունի որ հայրենատենն ազգայ-
նաց ընդունելութիւնը պիտի քաջաչերե գիւնը որ սրտին
խորշերուն մէջ թաղիւմ ու նիրհամ յիշատակներն ար-
թնցընէ օր մը, եւ իոր սգաւոր բնորին յսննէ վերերգել
այն գոսարայալթ Գիւցագրանքն եւս, որ ստուց յոսա-
փառ Մտներնէրուն ալ Հայոց պանդխտութեանը մէջ ա-
ռաջնորդելով՝ Կերիպիս սոհունները Անցելոյն փառքովը
միջիծար եւ իրախոյս ընդունին, ու Արմենիի ոգոց մէջ
արծարծի յիշատակ եւ սեր Հայրենեաց:

Եթէ այս երգերը յաջողին վերապաց իդ մը թոցը-
նել տալ դեպ ի Հայրենիս, կայծ մը փառել հայրենասեր
եւանդեան, կամ թի մը արցունք պրոյճեցընել, ու հրա-
խանդ ան մը կարգել Հայոս մը զգայուն սրտն, — Հե-
ղինակը իոր աշխատութիւնը պատկիւմ պիտի համարի:

— — —

ԳԻՐԲ ԱՌԱՋԻՆ

— — —

ԱՄԵՐԻԿԱ

Գ.ԻՐԻՔ ՍՈՍՉԻՆ

ԵՐԳ Ա.

ՀՐԵՇՏԱԿՆ ՀԱՅՈՑ

Ա.

Ո՞ւր կ'երթաս պանդոկստ : — Ի՞նչ տըխուր այդքան
Այդ անհուն աւերց մէջ թախառական ,
Պահ մը հառաչես , կը կանդնիս պահ մ'այլ ,
ձակաս վայրահակ , խոնջած թըւի քայլ :
Ետին թէ դառնաս , թէ յառաջ գընաս ,
Ամէն տեղ սրդով սեւած կը տեսնաս ,
Շըչուկ մը խորէն ազդէ քեզ աղէտ . . .
Է՛հ , թէ դու ըզցաւս կը վնասես յաւէտ .
Տար մէջ այդ աւերց ըզքայլսըդ մոլոր .
Բայց ի՞նչ 'տի գըտնես . . . մը սուր բըռնաւոր
Չեհաս հոն զիղել աւեր ընդ աւեր . . .
Ի՞նչ կարծես լըսել այս մահու տեղեր '
Ուր միայն բուին ջայլեր կը հընչեն . . .
Այո՛ , թէ լալեաց գաւառիս միջէն
Ուղէր քոյգ քընար թըռցընել մի երգ ,
Մի կարծեր , պանդոկստ , թէ քոյին յեղերգ
Սոխակն ու սարեկ պատասխան մի տան ,
Կամ բըլուրն ու գաշտ լըսեն ու խայտան : —

Printed in Turkey

Դարձիր , մի դարձիր , մի ճընչեր ըզծոց .
Գիտես զայդ երկիր . . . — ԵՐԿՐ Ե ԼԱՅՈՑ . —

Բ

Բայց ինք ոչ դառնայ . . . զիտէ զիւր ճամբան .
Կարծես թէ յերկնի հնազանդի հրաման : —
Միրտ իւր կը թընդայ երբ կոխէ զփոշին
Ուր մերթ հոյակապ քաղաքք կանդնէին .
Չորս դին ցիրուցան տաճարք ու պալատ ,
Եւ եկեղեցիք դարձեալ յանապատ .
Պարիսպք որ ըզանթըս ծաղր առնէին՝
Արդ վրձուած խոնարհ դարձել հարթ գետին .
Հոն ուր պանծային արքայք թագուհիք՝
Գայն է դըրեր բոյն եւ աղուէս խըշտիք .
Անդրիք՝ որ քաջաց կանգնեալ անուշտով՝
Թաւալեալ , անդ իժ սողայ սուլելով :
Հոն անց դիւցազանց կործանեալ դամբան՝
Յորոց փառս եւ դործ Հայրենիք մեծցան .
Եւ արդ սրբազան ոսկերք ցիրեցան ,
Վան , խեղճ Հայք եւ ոչ ունին գերեզման . . .
Չըկայ ձեռք գըթած որ ժողվէ զնոսին ,
Ի ի քուն հանգըստեան դարձունէ շիրմին .
Չըկայ հայրասէր սիրտ մը եռանդուն
Որ գըրկէ դանոնք տանի շըրթներուն ,
Պագնէ զլոկ վըկայս այն պերճ Անցելոյն՝
Որ կայ զերդ տապալ բուրդ մ'ի խարբխոյն :

Գ

Իսկ ինքը նըստաւ . . . — Արցունքոտ աչեր
Ընկան ի փըշրեալ սըգածանգ զէնքեր .
Յերկին նայեցաւ , հառնչ մ'ետ հրավառ ,
Յուսահատ սըրտին կարծես էր պատառ .
Թընդաց օդն , ու հով՝ շունչն ի յետ քարչեց ,
Երասխ ուռեցաւ , զընդըղներ գըլեց .
Դըզըրդին հովիտք , ոսկերք արթընցան ,
Կարծեն թէ ըզփոզ լըսեն յարութեան . . .
Գոռան արձագանգք լերանց եւ ձորոց .
« Լըռէք , լըսեցէք , ՀՐԵՏՏԱԿՆ Ե ԼԱՅՈՑ » :
Առաւ ըզքնար եւ կ'ուզէր զարնել ,
Երկնուսոյց մատունք թըլին կարկամել .
Ձեռք որ են սովրած զըւարթ յալէլուս՝
Ի՞նչպէս չարժին յողը խառնեալ յարտասուս .
Ի՞նչպէս խընդութեան զարնեն մի դաշնակ
Հոն՝ ուր տան ըզգանգ շիրիմք՝ Լ աւերակ .
Ի՞նչպէս ըզյուսոյ աւետիս հընչել
Ուր յոյան ըզվերջին բարեւն է տըւել . . . :
Եւ ընկաւ քընարն ի ծոց Հրեշտակին ,
Կարծես ձայնն անուշ հատեր ի կըրծին :
Այսպէս եւ թըռչուն ոյր կըտրեր է շունչ՝
Վերջին մ'ի ծոցէն արձակէ շըշունջ .
Կը ծալլէ զթեւիկ , բըբեր կը փակվին ,
Գլուխն ի վար ծըռի , գըլըրի յովտին :

Բայց մահադիտակ պանդըխտին ճակատ՝
 Ահա կը վառի յանկարծ քան հըրատ .
 Սեւ սեւ աչքերէն բոցեր կ'արձակին ,
 Կանգնի զինչ բըլուր հասակ Հրեշտակին ,
 'Ի ակընպիչ Մասեաց հաւոր սարերուն՝
 Կարծես հին զԱղեղ խընդրէ ի յամպուն ,
 Որով հաշտութիւն Աստուած խոստացել . . .
 Եւ զԱղեղ լարողն էր ինք Գաբրիէլ : —

Եւ բարբառ հընչէր լերանց եւ ձորոց .
 « Լըռէք , լըսեցէք ՀՐԵՇՏԱԿՆ Ե ՀԱՅՈՑ » :

Դ

« Աստուած իմ , — գոչեց , նայեցաւ յերկին , —
 Լըսէ՛ դձայն պանդուխտ Հրեշտակապետին ,
 Որ թողած զեթեր , թողած զիմս երամ՝
 Եւ յերկիր իջեալ զբազըն Հայոց ողբամ .
 Իջայ՝ որ զիմ լաց չըտեսնէ՛ Երկին ,
 Եւ մի ովսաննայք յիմ հառաչ կրարին . . . —
 Ա՛յս է երջանիկն անդրանիկ Երկիր . . .
 Ո՛ւր գըլխոյն պըսակ փառաց լուսակիր . . .
 Իբր ըզ՛էք Բաբէլ անյարիր տապատ՝
 Ո՛չ եւս կ'արթըննայ յիմ ձայն մահաստատ .
 Զի , Տէր , զաջ գըթոյդ իրմէն յետ առած՝
 Զախով թօթափես հարուած ի հարուած .
 Որչափ ունէր փառս՝ սնչափ արդ նախատ ,
 Եւ ի սուգ խաւար սեւցեր է ճակատ :

Բայց դու զՀայաստան գըգուէիր ի սէր ,
 Զնա իւր օթեւան Հրեշտակդ էր կարծեր ,
 Նախանձորդ երկնից մինչ եդեր ըզ Գրախտ .
 Յայն պայծառ օրեր ինչ մեծ էր իմ բախտ
 Յոր՝ զիս հայրական գըթովք ընտրելով
 Հրամեցիր սիրեմ ու հըսկեմ զանով .
 Զի յընկերաց պար ճակատս անդ բարձր էր ,
 Ի՛նչպէս կորակոր այժմ հեծեմ , սվ Տէր . . .
 Ինչո՞ւ արդ յաւեր առնես զՀայաստան ,
 Վասն ա՛յն զի Եգեմն էր նա փափկութեան .
 Եւ որ նախ եղեւ յօրհնել ըզքո լոյս՝
 Թաւալես այսպէս ի մութ մահայոյս :
 Ինչո՞ւ յանդընդոց ընկըզմել յատակ
 Զայն որ բարձրացան այնչափ ձեռքիդ տակ :

Ո՛հ , բայց դըժընդակ յաղէտս՝ Հայաստան
 Պիտի չըմոռնայ զիւր փառս յաւիտեան .
 Անցեալ իւր չըքեղ՝ պատէ զիւր գըլուխ՝
 Ինչպէս սմըռուան ամպ կայծակնաբուխ .
 Եւ ես յապաղայն հայիմ յուսահատ ,
 Յաւոցս աճի հետ եւ սիրոյն հըրատ :

Ե

« Ո՞վ , ո՞վ ցամբեցնէ զաչացս աղի ջուր .
 Յերբ զաղեղ Հայկայ տեսնամ ես փըշուր . . .
 Ամէն տեղ աւերք մեծութեան , փառաց ,
 Ամէն տեղ ըստուերք մահնու դագաղաց :

Եւ ես զերդ սըղոյ արձան մի սպիտակ
 Յուսաբեկ ի սիրտ գըլուխ վայրահակ՝
 Դիւցազանց շիրմաց հըսկելով ի լաց ,
 Լամ եւ ես վերայ մեռեալ կենդանեաց . . .
 Լամ եւ ննջելոց՝ ոյց փառք մոռցըւեր ,
 Եւ անուանք նոյա թաղեալ են յաւեր . . . —

Սակայն բարութիւնդ որ չունի սահման՝
 Պիտի չըստովէ եւ հէքն Հայաստան . . .
 Ե՛րբ տեսնեմ ձեռքիդ կայծակներ մարուած ,
 Հայիս ու ժըպտիս գըլթութեամբ , Աստուած :
 Նայէ՛ այս կործան տանց ու պալատանց .
 Եւ զի գըլթած ես՝ ներէ՛ գէթ հիմանց . . .
 Զ՞ի հասնիր քեզ սուրբ Տաճարաց հառաչ ,
 Զէս տեսներ ջախջախ կործանեալ ըզ խաչ .
 Ո՛հ , թէ զնախատինս գիտես քո այսքան՝
 Պէտք է , Տէր , յիշես ըզհին Գողգոթան : —
 Յիշէ՛ , բարձրեալ Տէր , որ փառացն օրեր
 Հայն ի վիշտ եւ ցաւ խաչիդ է ձօներ . . .
 Եւ թէ ցարդ մոռցար՝ բայց տես դեռ երկիր
 Զըչորցաւ զանգեալ յարենէ կարմիր .
 Դա մարտիրոսաց բիւրաւոր արիւն՝
 Որ քեզ բողոքեն խընդրեն « Գըլթութիւն » :
 Բայց թէ պէտք է զո՞հ մ՛ալ ցասման քոյին՝
 Աստուած , թողութիւն տուր այս խեղճ Ազգին .
 Յիմ գըլուխ թափէ զահաւոր կայծակս . . . » —
 Ասաց ու ընկաւ ի ծունկ յաւերակս : —

Եւ ահա Մասեաց ի գլուխ Միաձան ,
 Եւ Տէր երեւցաւ ի հուր փայլական .
 Նայեցաւ ի ժպիտ առ Հրեշտակն Հայոց ,
 Եւ դոչեց Աստուած ի միջոյ ամպոց .
 « Փըրկեցի , դարձեալ կը փըրկեմ՝ ըզՀայս » :
 Իսկ Հրեշտակն Հայոց երբ որ լըսեց դայս ,
 Սիրան ի խինդ սրտիեց , ըզլայն բացաւ թեւ ,
 Սլացաւ ի Մասիս , ապ՛ յերկինս թեթեւ : —

2

Քրնարն ան տեսն պըրծաւ ի ձեռաց ,
 Եւ գըլոր յերկիր՝ տըրտմազին հեծեաց : —
 Անշարժ յահուդոզ ըզհետ Հրեշտակին
 Աչք իմ մինչ յաթոռն Անմահին ելին .
 Շըլացան յայն լոյս բիբք իմ հրաշատես ,
 Հրեշտակն , եւ տեսիլ լինէին անտես : —

Բայց բոց էր ձակատս ու բոց ի հոգիս ,
 Իբր ըզմորենին անծախ վառէր զիս .
 Բոց՝ որ սըրբեալ սիրտ յունայն ըզգածմանց՝
 Ըզսուրբ բորբոքէ անդ սէր Հայրենեաց :
 Յիշեցի յայնժամ որ եւ ես պանդուխտ
 Երկար ատենէ բոլոր սիրտս եւ ուխտ
 Նըւիրել էի յիմ քաղցը Հայաստան .
 Եւ իբրու գըտեալ գանձ փառս յաղթութեան՝

Գետնամած պաղի վեր առի գըընար ,
 Եւ ի սուրբ աւիւն թըրթուեցի լար .
 Սիրտ իմ բարձրացաւ , եւ յերկինս ի վեր
 Թռուցի եռանդուն ուխտանայս առ Տէր : —


Է

Երկար դեռ եկի ման յաւերս սըրտում ,
 Զոր կանգնեսցէ օր մ'Աստուծոյ խոստում .
 Քաջաց ու սըրբոց ոսկերաց վերայ
 Հաւատարմութիւն ցըման երգուընցայ :

Այն , աշխարհի քարոզեմ համբուն
 Ըզբաջ Հայոց վէսսս վեհ գործովք զեղուն .
 Սովրին ակն ածել յաղետից մերոց ,
 Եւ թափեն արցունք մը ի յնչ Հայոց :



ԵՐԳ Բ.



Հ Ա Յ Կ

... Tuum Nomen
 Cantantes sublime ad sidera cygni.

VIRGIL.

Ա

Հայր իմ , Հնչկ . . . նվ հարց հարանց մերոց հայր ,
 Ո՛վ դու փառաց մեր հայրենեաց հիմն ու ծայր ,
 Ո՛վ որով Հայն այսօր ունի հայրենիք`
 Եւ մարդկութեան մէջ` կընիք :

Լսւր հնչր , ըզքեղ կարդայ յետին քո որդի ,
 Որ քո շնորհիւզ անուն մի վեհ իւր ունի ,
 Անուն` յոր սիրտ իւր մեծաթուեզ որստայ
 Եւ ընդ աշխարհ նա պանծայ :

Այն , յաշխարհ համօրէն Հայն է կարող
 Խըրոխտալ , Ո՛վ ինձ պէս ունի վեհ ծընող ,
 Հըսկայ` անեղ , ում առջեւ քաջք ձեր բողոր
 Թըզնկը կն անգոր :

Նորա անուան չորս ծագք երկրի ոչ բաւեն ,
 Բոյլք աստեղաց յերկնից երես զայն հեղեն ,
 Եւ փառք նորա լըցեալ զերկիր մեծապանձ
 Խառնի ընդ զւրս յաւիտեանց :

Ազգեր , Հայուն թըշուառութեամբ մի սոնքսոյք .
 Թէպէտ բազուկքն արդ ծանրանան ի շըղթայք ,
 Բայց սիրտ նորա երկաթիւ ոչ կաշկանդի . . .
 Ազատութեան է որդի :

Ազատութիւն եւ Հայն՝ միմեանց են եղբայր ,
 Եւ զերկոսին իսկ մի եւ նոյն ծընաւ հայր .
 Միոյն՝ տըւաւ ժառանգութիւն զՀայաստան ,
 Միւսոյն՝ զաշխարհ ամենայն :

Յառաջ քան զՀայկ՝ տակաւին մարդ ոչ գիտէր
 Թէ քաջութիւն ինչ է , զինչ փառք անվեհեր .
 Սա՛ փառք կարծէր գազանաց հետ մարտընչել ,
 Նա՛ շինել խօջն ըզբարէլ :

Եկաւ Հայկ , նա սովրեցոյց նախ առաջին
 Կըռուել վանել զազատութեան թըշնամին ,
 Եւ կանգնել՝ ոչ թէ անխորհուրդ աշտարակ ,
 Այլ ըզփառանց ամբարտակ :

Ինքն առաջին ելաւ հըզօր ակոյեան
 Սուրբ իրաւանց զոր ետ երկինք մարդկութեան .
 Նորա ձայնէն ահաւոր նախ արթընցան
 Սըրտեր ընդդէմ բըռնութեան :

Երբ գերութիւն՝ երկրակործան քան հեղեղ
 Ծաւալեցաւ քանդեց օրեց ամէն տեղ ,
 Վազեց մեծն Հայկ , եւ զՀայաստան իւր վըսեմ
 Կանգնեց պատուար բըռանց դէմ :

Առաւ ըզնեան , ըզփըրկութեանըն գործի՝
 Զոր ինքն իսկ Տէր ցըցուց իրեն յերազի ; (*)
 Զարդարագատ երկին կոչեց իւր վըկայ՝
 Եւ ըզդարերն ապագայ :

Զիւր լայնալիճ քարչեց բազկաւն ահագին ,
 Եւ իբր յամպոց ըզչանթ թըռոյց սուր փըքին .
 Շեշտ տապալեց որոտընդոստ ընդ գետին
 Ըզբռնաւորն առաջին :

Եւ Զըւարթունք պահպանք ազգաց ամենայն
 Որ սըրտաթունդ խըռներ հանդէս էին յայն ,
 Հրեղէն թեւօք յաղթանակին ծափ զարկին ,
 Ըզնախկին Քաջն երգեցին :

Ապա Հայոց լերանց վերայ ել Հըսկան ,
 Իբր աշխարհի միահեծան տէր իշխան ,
 Եւ մինչ երկիր խոնարհեցոյց պարանոց
 Առնուլ ըզլուծ Հօրն Հայոց :

(*) Ազգային առանդու-լեւն է որ ցարդ ին պարտու-
 ի բերանս բնակեաց Հայոց յորոյ :

« Աշխարհ գոչեց , դու իմ բաժին ես այսօր .
 « Ահա իմ ձեռս է լինել քո բըռնաւոր .
 « Բայց ես ընտրեմ քեզ հայր լինել հարազատ ,
 « Հայր մարդկութեան մի ազատ » :

Եւ սուր աչվին ձրգեալ յերկիրն այն անհուն՝
 Գոչեց Հըսկայն , « Ե՛լ աշխարհ յազատութիւն » . —
 Լերինք եւ ծովք որոտացին ի թընդիւն ,
 « Ե՛լ աշխարհ յազատութի՛ւն » . . .

Բնութիւն անդէն իբրու թէ նոր նորոգէր՝
 Զըւարթացաւ քան ի դարուն կենսաբեր ,
 Եւ սիրաք մարդկան նոր շունչ առեալ յորդառատ
 Եւ գոչէին « Եմք ազատ » :

Եւ հաշտութեան կամարն ի գլուխ անդ Մասեաց
 Եօթնաճաճանչ ել եւ ըզշող արձակեաց .
 Արեւ , լուսին տօնեցին զօր պանծալի
 Ազատութեան աշխարհի :

Իսկ ինքըն Հայրն ազատութեան աշխարհի՝
 Ի փառաց այն բարձրութենէն գերարիի՝
 Յոր ո՛չ յառաջ ո՛չ յետոյ ոք մահացուաց
 Երբէք հասնել ժամանեաց ,

Յայն երկնամերձ գահաւանդէն ի խոնարհ
 Վըսեմափայլ յօնօք նայէր ընդ աշխարհ ,
 Եւ ի վեհին ակնարկութիւն եւ ժրպիտ
 Փայլակք ընկան խիտ առ խիտ :

Ամպ լուսավառ շուրջ ըզՀըսկայն պարլիակեց ,
 Ազատութեան Ողին ըզնա պըսակեց .
 Նա՛՝ վերջին մ՛ալ ի Հայաստան նայեցաւ
 Յանմահութիւն ծածկեցաւ :

Բ

Ո՛վ հայրդ Հայոց , երբ յերկնակէտ քոց աստեղաց
 Ըզյօնս շարժեալ լուսազդեաց ,
 Եւ սըրտաթունդ ի վայր նայիս դու յայն երկիր
 Զոր քո նետով վըրկեցիր :


Տեսնես ըզԶորն — Հայոց՝ փառացդ հանդիսարան ,
 Բերեանցն ոտից արդ կոխան
 Տեսնես զանյաղթ ձեռացդ ըզգործ կուռ Հայկաչէն
 Յերկիր կործան ի բաղդէն .

Տեսնես որդւոց քոյոց ի ձեռս՝ ո՛չ նետ սուսեր ,
 Այլ ժանդահնր ըզթաներ
 Տեսնես զազատ որդիսդ՝ անկեալ բազմաաղխուր
 Որդւոց Քամայ առաթուր


Հայր , ինչ արդեօք ըզդայ քո զինչ սիրտ որդեսեր
 Յայսչափ աղէտ ցաւոց մեր ,
 Յայսչափ անեղ թըշուառութիւն բազմադարեան
 Յոր կորընչի Հայաստան

Եւ զի՛նչ ասես, Հայր, ապերախտ այն մարդկութեան
 Որ երախտեացդ անբաւ՝ փոխան,
 Ըզքո զաշխարհ՝ զաղատութեան բուն խանձարուր՝
 Ի գերութեան արկ յանուր :

.....



ԵՐԳ Գ.



ԱՐԱՄ

« Ա.ՍԸ հայրենասեր » .
 Մ. ԽՈՐԵՆ



Ա

« Դեռ չէ՛ ծանօթ մեր Հայ անունն ,
 « Դեռ չէ՛ ծանօթ Հայ քաջութիւն .
 « Երթամք Հայեր , սովրեցընեմք
 « Որ գիւցազանց մեք որդիք եմք :

 « Աշխարհ մոռցեր է վեհ լեզուն
 « Զոր սովրեցուց Աստուած մարդուն ,
 « Աշխարհ մոռցեր մեր Նախահայր
 « Որ իւր եղաւ ազատարար .

 « Առէք աղեղ , սուր եւ նիզակ ,
 « Ծաւալեցէ՛ք վիշապ դրօշակ , (*)
 « Գունդ գունդ ելէ՛ք եւ ռազմ ի ռազմ ,
 « Շեփոր զարկէ՛ք ի պատերանգմ » :

(*) Հայկազանց եւանն եր վիշապ :

Բ

Գոչեց Արամ, — եւ գունդագունդ վաղեցին
Որդիք Հայկայ ի ձայն քաջաց այն քաջին ,
Աբօրն ու խօփ թափեցան դէզ դէզ ի կրակ ,
Եւ շանթաթոպ պոռթկացին սուր , աէզ , նիզակ :

Հայոց դաշտեր որ քան դերկու երկայն դար
Ըզարինգ հովուին լոկ լըսէին հեշտարար ,
Յանկարծ ի շօինդ մարտագոռոչ շեփորին
Գըզըրդեցան ձորք եւ հովիտք թընդացին :

Փայլուն պողպատ զըրահներէն 'ւ ի զինուց
Ասես՝ կայծակք թափին ի սեւ սեւ ամպուց ,
Եւ կրք Հայ գունդք նիզակածօձ գընային՝
Կարծես անտառք ի շարժ ելեալ խաղային :

Տեսէք ինչպէս աչքեր ցոլան Հայկազանց ,
Եռան բաղուկք տրոփին թընդան սիրաք անսանձ .
Ո՞վ հաւատայ թէ գոռ զինուորքն այն ի խազմ
Առջի անգամն է որ գընան պատերազմ :

Ո՞վ հայրենեաց սէր , ինչպէս ես զօրաւոր ,
Որ զամենայն յոր մօտենաս՝ փոխես նոր ,
Գու երկրագործ ազգ մը վառես վեհ յաւիւն ,
Եւ զազգ ընկճեալ՝ յանկարծ փոխես գիւցազուն :

101
106
104

Երէկ դեռ Հայն թըրջէր քըրտամբք իւր արտեր ,
Երէկ դեռ Հայն բըռնաւորաց տակ հեծէր ,
Եւ անա խրոխտ յանկարծ ճակատ ամբառնայ ,
Եւ բըռնաւորք իւր դողացին ակամայ :


Վաղեց Նիւքար , խըմբեց բանակ առ բանակ ,
Հայոց թափոյն դէմ խիզախել ամբարտակ .
Բայց ո՞վ կարող ճընշել ըզսէր հայրենեաց ,
Ո՞ր դէնք յաղթել բաւէ ուժոյն երկնազդեաց :

Մի Հայուն դէմ՝ բիւր Մեդացիք կանգնեցան ,
Բիւր Մեդացիք մի Հայ բազկէ հընձեցան .
Անմիտք , նոցա էր առաջնորդ բըռնութիւն ,
Հայոց վառող սըրտից սուրբ Ազատութիւն :

Ազատութիւն գոչեցին Հայք գոռալով ,
Ձուքերն ի գլուխ բըռնաւորաց դոփելով . . .
Անոյշ քամի ըզդրօշն Հայոց ծածանէր ,
Ազատութեան ձայն լեռնէ լեռ ծաւալէր :

Հայ արձագանգք որ ընդ զինուց շառաչման
Մոռցեր էին եւ ըզըռնինդն յաղթութեան ,
ԸզՀայ երկնից զըմբէթն ի թունդ հանէին ,
Եւ չորս գետոց Գրախտին ըզլուր տանէին :

Մեծ աւետիսն հասաւ ի պերճ Արմաւիր ,
Ուր սիրտք հարսանց ու մարց յերկիւղ յուսալիր
Ըստպատէին յիւրեանց փեսայն եւ յորդին ,
Եւ ասէին . « Արդեօք դառնանք սիրելին » :



Եւ սիրելիքն Արմէնուհեաց դառնային ,
 Նոր յազթութեան երգս ոգելով խընդագին ,
 Եւ թշնամեաց զաւարն ոսկի եւ զարծաթ
 Բերէին յոտըս սիրուհեաց խանդակաթ :

Եւ սիրուհիքըն վազեցին ընդ առաջ .
 Արմենակայ սօսեաց (*) ճիւղերըն կանաչ
 Փափկիկի զբրկօք բարձած բերեալ են պըսակ ,
 Քաջացն Հայոց պատել ըզգլուխ եւ նիզակ :

Մեծ էր այն տօն եւ բերկրութեան ազազակ ,
 Զի առաջին էր այն Հայոց յազթանակ .
 Զի առաջին այն օր Հայեր մըտնէին
 Յազգաց քաջաց եւ ազատաց ի կարգին :

Եւ տիեզերք՝ ահ եւ զարմանք ի սըրտին՝
 « Ո՞վ է այս ազգ՝ ո՞վ են այս քաջք հարցուցին ,
 « Ո՞վ է այս ազգ , որ դեռ երէկ կեայր անշուք ,
 « Այսօր յանկարծ ելին անյնզլթ դիւցազունք » :

(*) Արժեանքի նահապետը Արմաւրի մօտ սօսեաց անորա-
 մը փնիկէլ քառած էր , որ նախնի Հայկազունի էրենց կրօ-
 նական պաշտօնաւնէլ կը կարարէին ու հայս հայէին :
 Այս նորախան սօսեաց քառերով կը պատկէին նախնի գե-
 լուի քաջացն Հայոց :

Գ

— Սոքա որդիք են Արամայ ,
 Պատասխանէր Մեղացին ,
 Սոքա որդիք են այն Քաջին
 Որ զմեզ՝ զընկճողքս՝ ընկճեաց գերի .
 Եւ ըզհըսկայն մեր մեծ նիւքար
 Շամիրեց նա ողջ ողջ յիւր նիզակ ,
 Եւ յազթութեան իւր նըշաւակ
 Գամեց գոռող նա յԱրմաւիր :

— Սոքա որդիք են Արամայ ,
 Պատասխանէր Ասորին ,
 Սոքա որդիք են այն Քաջին
 Որ զմեր ըրաւ ազգ անորդի .
 Ու զմեր անեղ աստուած Բարշամ
 Մէկ հարուածով հար սատակեց ,
 Շանց կերակուր ըզգին նետեց
 Եւ ըզհողին ի սեւ զըթոխք :

— Սոքա որդիք են Արամայ ,
 Պատասխանէր Միջերկրեայն ,
 Սոքա որդիք են քաջին այն
 Որ զմեզ հընձեց իբրեւ ըզխտա .
 Եւ Պայապիս հուժկու Տիտան
 Ի տես Վեհին այն սարսափա՝
 Հազիւ ծովուն ի ժայռս փախաւ ,
 Զերդ յառիւժէն տայ խոյս այծեամ :

— Սոքա որդիք են Արամայ ,
 Պատասխանէր Պոնտացին ,
 Սոքա որդիք են այն ֆաջին
 Զոր մեր հայրեր ոչ գիտացին .
 Եկաւ փըրկեց սա իւր սըրով
 Բըռնաւորաց ըզմեզ ձեռքէն .
 Կապաղովկիոյ ետ բարս 'ւ օրէն ,
 Եւ ըզկըթիչ Հայոց լեզուն :

— Սոքա որդիք են Արամայ ,
 Պատասխանէր Բելորդին ,
 Սոքա որդիք են այն ֆաջին
 Յորմէ դողաց մեծ մեր Նինոս ,
 Պըսակ զըրկեց իրեն ընծայ ,
 Զի մի գուցէ նա կուռ սըրով
 Ըզթագ գըլխոյն պահանջելով ,
 Ըզկեանս ընդ թագն յափըշտակէր :

— Սոքա որդիք են Արամայ ,
 Պատասխանեն դողագին ,
 Սոքա որդիք են հըսկային
 Ում փոքր եկաւ մեծն Հայաստան .
 Զարկաւ փըլցուց լեռներն ու ժայռ ,
 Անցաւ սուրաց , եւ գտէզն հուժկու
 Տընկեց յեղերս անդ Աեւ ծովու ,
 Գոչեց . « Ա՛յս է Հայոց սահման » :


Գ

Այն , քո որդիք եմք ազատերամ ,
 Ո՛վ հայր հայրենեաց զիւցայնդթ Արամ ,
 Այն քո որդիք , եւ ըզգամք իսկ բուն
 Թէ քանի՛ պարծանք է մեզ քոյդ Անուն :


Ըզգամք թէ զոր պարտք որդուցըս վերայ
 Արկանէ անուն քոյին զիւցազնեաց .
 Ըզգամք որ թէ քո ժառանգեմք ըզփառս ,
 Հարկ է ժառանգեմք եւ ըզՎե՛ն քո բարս :

Հարկ է որ քո պէս սիրեմք մեր լեզուն ,
 Եւ տամք պատկառել ի մեր վե՛ն Անուն
 Հարկ է որ քո պէս սիրեմք Հայրենիս ,
 Եւ նըման զոհեմք ըզկեանս եւ զողիս

Զի մի երբ օտար ազգեր չըրջակայ
 Կոչեն դեռ ըզմեզ « Որդիս Արամայ » ,
 Գուր յամպոց բարձանց նայիս մեր վերայ՝
 Եւ գոչես . « Որդիք . . . չգիտեմ ըզգոսայ » :



ԵՐԳ Դ.



ԱՐԱ ՊԵՂԵՑԻԿ

եւ

ՆՈՒՎ ԱՐԳ



Ա.

Արեւն էր ծագել , արեւ հայկական ,
Կարմրուկ ցոլքերով նորահաս գարնան ,
Մասխուռ զարկեր ձակտին ըսպիտակ
Ու շուրջ կը պատէր վարդաձոյլ պըսակ .

Թըռչնոց արթընցան երգեր քաղցրուր ,
Ու լըցին լըռիկ դաշտերն ու ծործոր ,
Մաղկունք վերուցին աչեր ցօղալից ,
Ու ծաւալեցին բոյրեր խնկալից :

Արամենակայ սօսեաց ծայրերէն՝
Անուշակ քամին անցաւ հեզօրէն ,
Երասխայ ջրերն իջաւ պըսպըղուն
Ու գըլտորտըկեց՝ ալիս ծըփծըփուն : —

Այն նըւիրատունկ ծառոցն ի սաղարթ
Ըզրիբս իւր յառեր պարման մի զըւարթ ,
Մըտիկ գընէր զինչ սըլուըլան սօսիք՝
Եւ զինչ պատասխան տան դետոյն ալիք :

Գլուխն ականակուռ դըրած սաղաւարտ ,
Եւ լանջ կը փայլէր ի զրահ բաղամարտ .
Հըզօր յաջն ունէր տէգ մի զինչ գերան ,
Ու մէջքն էր կապել ըզթուր ընդ մահուան :

Հանց աղեղ լարած թուխ լայն լայն յօնքեր ,
Ճակատուն հովտին կարծես ցանկ պատեր .
Ու գռուղ հոպոպիք ոլրելով սեւ սեւ՝
Կը ծըփան մարմար վըզին ծաղկաձեւ :

Իսկ երբ բոցափայլ աչվին եռանդնոտ
Վեր առած հայէր յարկին անաղօտ ,
Կարծես դէմ ընդդէմ յերկիր եւ յերկին
Ձոյգ մի արեւներ յիրար պըշնուին : —

Այն ֆաջին ուսոց կըռթընած քընքուշ՝
Կին մի տեսնըւէր քան շուշանն անուշ ,
Ինչպէս ձիւնաթոյր հեզիկ աղաւնի ,
Թեւերն ամփոփած բոյնին քով թառի :

Արշալոյսն երբ դայ այդուց ցօղազարդ՝
Ոչ այնպէս փափկիկ ձակատն ունի վարդ ,
Ինչպէս նէրա սուրբ այտերուն վերան՝
Բոսոր ու ձերմակ վարդեր կը ցոլան :

Կապոյտ աչուքներն՝ են ջինջ աւելի
Քան թէ այն դարնան մաքուր դէմք երկնի ,
Ո՛չ չըկայ քըրքում մի այնպէս սիրուն՝
Որ նորա յաղթէ ոսկի մազերուն :

Չէ , նա մահացու կարծես թէ չէր կին ,
Այլ երկնաբընակ հրեշտակն էր քաջին ,
Որ կընոջ առել գողարիկ կերպարանք ,
Լոյս տալ աչքերուն , սըրտին՝ ըստփանք :

— Անուշակ քամին իջաւ մէյմըն այլ
Եւ ծածանեցան ծամերն ոսկեփայլ ,
Ու երկու կաթիլ այն ծաւի աչքէն
Ընկան ինչպէս շիթք ցօղոյ երկընքէն :

Լըռեցին թըռչունք , եւ սօսեաց քընքշանք ,
Լըռեցին կարկաջք , սոյլ եւ արծագանդք .
Կարծես թէ բնութիւն լըսել փափաքէր՝
Այն վեհ տարփածուաց մհ վերջին խօսքեր :

Բ

Քաջն Արա ստէր .

« Նուվանդ , մհ , տեսեր

Ինչպէս ըզգըլուխ շարժեն սօսիներ .
Հայոց դիւցազանց են այն ըստուերներ՝
Որ ջուրքք Երասխայ կուտան ինձ հրաւէր :

« Նուվանդ , ես կ'երթամ , բայց քեզի համար .
Հրեշտակ իմ անուշ , մի դու մհ , մի լար . . .
Քո սէրդ է անբիծ առաջնորդող դիւս ,
Ու սէրդ այլ ես հետ կը տանիմ սըրտիս :

« Նուվանդ , թէ չ'երթամ մահուան դիմադրաւ ,
Թէ ես չըվազեմ թուր ձեռքս ինքնարշաւ ,
Չէ , Արայդ չ'ըլլար քեզի արժանի ,
Ո՛չ վըսեմ սըրտիդ՝ ո՛չ այս արցունքի . . . :

« Նուվանդ , մհ , մի լար . թէ կ'ուղէ երկին
Որ Արա մեռնի այս պատերազմին ,
Արայի արիւն սէրդ չ'իմարեր ,
Այլ կարմրուկ կընիք դընէ ի սէր մեր :

« Թո՛ղ , հրեշտակս , երթամ . . . պարաքըս լընում արդ ,
Քեզ չեմ լըքաներ , քովդ եմ ես , Նուվանդ .
Երկընքէն կ'իջնեմ սիրարդ յողուցս թեւ ,
Ինչպէս ցօղն անուշ ի վարդին տերեւ :

« Ու թէ որ չ'ըլլաս յաշխարհ բարեբաստ՝
Ըղձաս բընակցիմք յերկնից առադաստ ,
Թեւ թեւի կուտամք ու սրանամք ի վեր՝
Ձինչ երկու ծաղկանց այգասփիւռ հոտեր . . . »

— Անուշակ քամին իջաւ մէյմըն այլ՝
Ծրփեցան հարսին հոպոպը ոսկեփայլ ,
Կապոյտ աչքերէն արցունք շիտ առ շիտ
Ի ծոց փեսային թափթըփին մարդրիտ :

Լուռ կային թըռչունք սօսեաց յոստ կանաչ ,
 Լուռ կացել Երասխ , արգիլեր կարկաչ .
 Միայն Արայի կըլըավին գըղուանք ,
 Ու քընքուչ հարսին տըխնւր հեծկըլտանք :

Գ.

Եւ Նուվարդ ասէր .

« Ո՛վ Արա , Արայ ,

Թող յետին անգամ ամուսինըդ լայ .
 Թըչունս ամուսին՝ յորոյ քեզ ծոցէն
 Երկին եւ երկիր նախանձով խըլեն . . .

« Եւ ինչպէս չըլամ՝ որ իմ արշալոյս
 Գարձաւ արդ գիշեր ու կըմարի՛ յոյս . . .
 Արա , դու կ'երթաս , չ'ուզես որ վերջին
 Վերջին արցունքս այլ տանիս ի յերկին :

« Ո՛հ , դու ինձ համար , փեսայդ գիւցադուն ,
 Կըզոհես թագեր ու կենաց գարուն . . .
 Ես ինչ տամ քեզի փոխարէն , Ա՛րայ ,
 Որ այսքան սիրոյդ արժանի ըլլայ . . . » —

« — Սէր միայն , գոչեց Արայն գեղեցիկ ,
 Սէր միայն , Նուվարդ , ինձ տուր յիշեւիք .
 Ես գո՛հ , ո՛վ հրեշտակս , գո՛հ ես կը մեռնիմ
 Թէ գիտնամ մընալդ ինձ հաւատարիմ :

« Թէ գիտնամ՝ որ իմ գերեզման , Նուվարդ ,
 Պիտի չըմընայ անոք եւ անվարդ .
 Չոր հողն իմ թըրջի սիրոյդ արցունքով ,
 Սառ քմրն իմ ջեռնու սիրոյդ համբուրով . . . » —

Անուշակ քամին իջաւ մէյմըն այլ՝
 Ծըլեցան հարսին դանդուրք ոսկեփայլ .
 Ծաւի աչքերէն արցունք կաթկաթին ,
 Ինչպէս այգուն ցօղ ի թերթեր վարդին :

Լուռ կային թըռչունք , եւ Երասխ լըռեաց .
 Միայն թէ սոխակն անտառին սօսեաց՝
 Երբեմն արձագանդ կուտայր տըխրաղին
 Վերջին հեծութեանց հարսն ու փեսային :

Գ.

Արեւն երկնից անդ բարձրացել ի կամար ,
 Կըրակ ու բոց յերկրին երես կըտեղար ,
 Ամենայն ինչ վառել էր յիւր ջերմութիւն ,
 Ու առտըւանն էր մարել զով լըռութիւն :

Յ'Արարատայ կանաչագեղ դաշտորայս
 Երկաթագէն ծածանին զօրք ընդ ըսպայս ,
 Ինչպէս հասուն ցորենի արտ ոսկեջով՝
 Յանկարծ ծածկի սեւ մարախին գունդերով :

Քամին իջեր Մասեաց մըռայլ սարերէն ,
 Կը մըռընչէր սաւառնացեալ դըօշներէն ,
 Յորս էր նախշուն Շամիրամայ Աղաւնին (*)
 Եւ Ասորի ձայնք աղխազուր հընչէին :

(*) Յոյն Պատմագիրք Կաստորեն ինչ Շամիրամ էր որոշակաց Վրայ ի նշան էր անուան Աղաւնի ինչ նկարել որոշակաց , զոր ինչնակալ Ասորեստանեայց պահեցին :

Չայն դիւաշունչ բարբառ առջի անգամ էր
 Որ Երասխայ լըռիկ հովիտ կըլըսէր .
 Ու այն նախկին էր որ լերինք հայկականք
 Ասորեստան զինուց տային արձագանդ :

Այն սեւագունդ զօրքերու գլուխն էր անցած
 Կին մ'արուատիալ թագով իւր հերք պըսակած .
 Բանակն ողջոյն դողայր ի մուռնչ իւր անեղ ,
 Աչուըներէն ցոլայր վըրէժ բոցահեղ :

Ինչպէս մի գետ որ լեռներէն սուրալով՝
 Կատաղութեամբ կ'իջնէ դաշտեր աւրելով ,
 Այսպէս եւ սիրտ նէրա լըցուած սեւ սիրով՝
 Գայր Նինուէէ Արայի վրայ վըրփրելով :

Գոչէր . « Թէ այն անգութ Արա գեղեցիկ
 Չ'ուզեց լըսել իմ սիրայիւր ձայն հեղիկ ,
 Թող արդ լըսէ զինուց իմ ձայն մահաբեր ,
 Ի երկիւղ շարժէ զսիրտ իւր՝ թէ ոչ շարժէ սէր :

« Քաջէր , ահա երկիրն Հայոց բազմաձօխ ,
 Ձեզի աւար առէք , թափէք հին ձեր զօխ .
 Ինձ պահեցէք միայն Արայն գեղեցիկ ,
 Արայի սիրտ լոկ զիս կ'ընէ երջանիկ » : —

Երբ Շամիրամ՝ Արա անուն կընընչէր՝
 Սիրոյ կըրակ մը լըսելիւր այտքըն վառէր ,
 Սիրաբ թունդ թունդ կ'իլլէր կ'իջնէր ծուփ ի ծուփ
 Ինչպէս ծովուն ջուր հողմալար շուփ ի շուփ :

Ահա հասեալ նորա յերկիր , նորա մօտ ,
 Ու աւելի այլ բորբոքէր ի կարօտ ,
 Չէր գիտէր երբ այն ցանկալին ժամ հասնէր՝
 Որ սիրտն ի սիրտ իւր սիրելոյն բարախէր . . .

— Չէ , Շամիրամ . խաբէ քեզ յոյս քո եւ զէն ,
 Քո պիղծ շըրթունք՝ նորա շըրթանց համար չէն .
 Սէր նորա սուրբ՝ արծաթափայլ ջինջ առուակ ,
 Ի՞նչպէս սըրտիդ լըցվի ի խորչ սեւյատակ :

Պիտի տեսնես ըղնորա դէմք գեղեցիկ ,
 Բայց դալկահար՝ ինչպէս շիրմայըն ծաղիկ .
 Պիտի տեսնես եւ զայն աչեր սեւ ու սեւ ,
 Բայց երբ մահուան յայն տարածի հոլաթեւ :

Պիտի եւ սիրտն այն շօշափես , սիրտ զըւարթ ,
 Բայց ինչպէս յանկարծ ի սառոյց պատեալ վարդ .
 Տի չըարօփէ նա քո սըրտին դուժ սիրով ,
 Ու սէր նորա պիտի չըտայ սըրտիդ զով :

Այն մաքրակէզ սիրտ եւ շըրթունք եւ աչեր՝
 Ուրիշ կընջ հարըստութիւն եւ զարգն էր .
 Նէրա զըրկէն զայն խըլեցեր , անգնթ կին ,
 Ա՛ն եւ խընդա . . . Ի՞նչ է առածդ . ցնւրա մարմին :

Ե

Իրիկունն էր եկել , արեւ ի մար մըտած ,
 Վերջին մըն ալ կը բարեւէր ըզգլուլս Մասեաց ,
 Որ տըխրագին կը տարածէր իւր ըստուերներ
 Չերթ դագաղին ծածկոյթ ձորերն ու հովիտներ :

Արարատայ դաշտ խընկաբոյր՝ որ յառաւօտ՝
Կարմրուկ՝ ւ ոսկի ծաղկօք խայտայր կանաչ յարօտ,
Արդ ողողած արեան գետովք էր ահաւոր,
Ու ծածկըված զինուք զիօք կոտոր կոտոր:

Հոն որ թըռչնոց կըլըսվէր նախ հեշտ ճըռուընչիւն՝
Վիրաւորաց արդ կըհընչէր ի թառաչիւն . . .
Ապա եւ այն դադարեցան ճիչք, մըրմունջք, մահ,
Ու ծայրէ ծայր թագաւորեց լըռութեամբ մահ:

Այլ որպէս կռինչ տըխուր բուին սեւադուշակ
Որ ընդհատէ գիշերն ի մոռնչ իւր սառնորակ,
Երբէք երբէք հառաչանաց լըսվէր մի ձայն, —
Շամիրամայ սէգ թագուհւոյն ողբնւմն էր այն:

Յոսկի գահոյս զըրած մարմինն էր Արայի՝
Ու ծիրանեաւ շուրջ պարփակեալ քաջն արքայի .
Խոռնկ եւ հալուէք բուրեն ծըխեն հոն բարդ ի բարդ,
Աստուածարար պատուել զայն վեհ երիտասարդ:

Ահա դիմացն իւր գեղեցիկն այն զիւցազուն՝
Որոյ սիրով նէ չըզխտէր հանգիստ եւ քուն .
Եւ թէպէտ արդ՝ իբր ըզկոտորած անկեալ շուշան,
Բայց եւ կոտորածն իսկ այն շուշան՝ էր աննըման:

Գըլխուն պըսակ նետեր գետին հէգ Շամիրամ,
Մազ կը փետէր, կ'անիծէր զօրն այն եւ ըզժամ
Յոր վառեցաւ ի սէր անըրծն իւր Արայի,
Սէր՝ որ թըշուառ ըզնէ ըբաւ, որբ եւ այրի . . .

— Բայց Արայի հողին զըւարթ յամպ լուսահրատ՝
Երբ իւր մարմնոյն քով լըսեց ողբն այն յուսահատ,
Եւ ըզվաւաչ տեսաւ զըլխոյն՝ քըստմընեցաւ . . .
Բացաւ թեւերն ու վեր յերկինըս սըլացաւ:

9

Գիշերուան մութն հասաւ խաւար թեւերով,
Ու մառախուղ երկնից երես պատելով,
Արարատայ մահու դաշտին տեսարան
Ծածկեց որ մի յայն Հայ աստղեր թալկանան:

Հով մը փըրթաւ յանկարծ ամպոց խորերէն,
Իջաւ անցաւ սօսեաց ծրփուն ծայրերէն .
Եւ շառաչմունք ահեղալուր հընչեցին,
Կարծես թէ մոռնչք ուրուականաց լըսվին:

Եւ Երասխայ անդուստ ալիք փըրփրելով,
Սօսեաց կարծես թէ պատասխան առնելով,
Լալահառաչ զընան որ զգոյժ այն օրուան
Տանին բոլոր հառաչեցնեն Հայաստան:

Ո՛չ . — տակաւին անյպէս տըխուր մի զիշեր
Մեր Հայրենեաց վերայ երբէք չէր պատեր .
Դեռ աղետից՝ էր անսովոր Հայաստան,
Որ իւր բաժին պիտի լինէր անբաժան:

Խեղճ Հայաստան, այն օրուընէ մինչ ի մեր
Քանի՛ քանի անգամ տեսաւ իւր դաշտեր,
Ձոր, գետ, լեռներ ծածկած յորդուց իւր մարմին . . .
Ո՛րչափ լացաւ . . . լայ . . . եւ տի լնյ տակաւին . . .

Է

Բայց մի է նա որ՝ հեռուն կ'երեւի ,
 Մահու դաշտին մէջ՝ զերդ շուք յերերի .
 Արդեօք նա կենաց հրեշտակ լուսարօց ,
 Որ ըզյարութիւն՝ դայ տալ մեռելոց :

— Արային է նէ այրի ամուսին ,
 Իէմքն է շողշողուն հանց դարնան լուսին .
 Այլ ս՛հ , լուսնի պէս արխուր եւ թօնուտ ,
 Եւ յարցունք լըցված են աչք իւր կապուտ :

Թէպէտ դիականց նէ ման գայ միջուկ ,
 Սակայն աներկիւղ թըւի 'ւ անխըռով .
 Սէր՝ իւր կանացի սըրտէն վախ մերժեր ,
 Ու մեռելոց մէջ է զինքն իջուցեր :

Թողեալ զարքունիս եւ ըզքունն անոյշ
 Գայր յԱրմաւիրայ սախքըն քընքոյշ .
 Գայր որ զանձկալին իւր փընտուէ Արա ,
 Զի գիշերն եկաւ՝ եւ ս՛չ դառնայր նա :

Ասել էր . « Զինուց լըռեցին ձայներ ,
 « Ըզձայն սիրելուցս ինչո՞ւ չեմ լըսեր .
 « Թըւչունք ամենայն դարձեր են իբոյն ,
 « Արծիւն իմ ինչո՞ւ ոչ ի գիրկ սիրոյն . . . »

Ասեր ու թողեր պալատ մըշտակիր ,
 Մահու դաշտն իջեր սըրտով մահակիր .
 Ու ծաւի բըբաց արցունք միշտ սըրբէր
 Որ տեսնէ հեռուանց զիւր ցանկալին սէր :

« Արա՛ , նէ գոչէր . Ա՛րա , ս՛հ , ս՛ր ես . . . »
 Եւ խոր արձագանգն որ կըրկնէր « Ո՞ւր ես . . . »
 Կարծես տարիելուցն անուշիկ ձայնն էր ,
 Որ իրեն գիմաց կըրկնէր ըզհրաւէր :

Ը

Այն պահուն կ'երնէր ամպերէ լուսին ,
 Կարծեց Արայի թէ այն էր հողին .

« Արա՛ , մընչեց , ս՛հ , Ա՛րա , իմ քով չես .
 Արա՛ , դու յերկին , յերկիր՝ լինակ ես . . . »

« Ա՛հ , այս առաջին գիշեր , առաջին
 Յոր հողւնոյս հատոր , այրի՛ է քո կին .
 Առաջին գիշեր անվերջ ցաւերոյց ,
 Առաջին գիշեր որ ինձ չըկնայ լոյս :

« Ուր դու իմ մօտ չես՝ ազըբւր եմ պասուք ,
 Ուր դու իմ քով չես՝ դաշտ եմ ուր չիք շուք .
 Երբ ես միայն եմ՝ ծաղիկ եմ անրոյր ,
 Դո՛ւ էիր իմ ջուր , ըստուեր , խունկ եւ թոյր . . . »

Արան, դու երբ որ սրբացար յեթեր՝
 Ո՞չ հետ քո տարիւր եւ մեր թըշուառ սէր .
 Արան, դու զիմ սիրա քաղեցիր, Արան,
 Ե՞րբ կ'առնուս 'ւ ոգիս, ս՛հ Արան, Արա . . . » —

Ու կըրկնեցին՝ բըլուրքն ու դաշտեր,
 « Ո՞հ Արան, Արան . . . »


Եւ շունչ վերջին հարսին հեծեծէր
 « Ո՞հ Արան, Արան . . . »

Թ

Այն ժամն երկընքի պատուեցան ամպեր,
 Ու զոյգ մի փայլել ըսկըսան աստղեր .
 Կ'ըսեն թէ մէկն է Արայն թագազարդ,
 Միւս՝ աստղ ոսկեհեր Հայ զըշխոյն Նուվարդ :



ԵՐԳ Ե .



Ջ Ա Ր Մ Ս Յ Ր

ԵՒ

Շ Ո Ւ Շ Ա Ն



Ա .

Հայաստանի արեւմտեան ծայրերու .
 Բանակ մ'է տանն հաղար կանգներ քաջերու ,
 Աչք եւ զէնքեր կըփայլըլին բոցավառ
 Յարեգական ճառագայթից նորավառ :

Արդեօք բանակ է դադանաց խուժադուժ
 Որ գան Հայոց վերայ զիւրեանց կըշուել ուժ .
 Թէ՛ զՀայաստանն արդէն արեամբ հեղեղած ,
 ձոխ աւարօք դառնան , վըրէժ կըշտացած :

— Ոչ . եռանդուն սոցա աչքեր չըցուար
 Յոխ թըշնամի , եւ ձեռքերնին չէք աւար .
 Դրօշն որ իրենց զըլխուն սըփոէ հովանի՝
 է վիշապն արփիաթեւ Հայաստանի :

Քաջերուն գըլուխ անցել էր յառաջ
 Վըսեմ հասակաւ դիւյազանց մէկ քաջ ,
 Որ ըզտիգազէն դաջ կարկառելով՝
 Փառաց նոր ուղի ցոյց տայր անլրդով :
 Յահիպարանոց էր բազմած նըժոյզ ,
 Հեծեալն եւ հեծող ռնորա համազոյզ .
 Կարծես մին առ միւս կ'ազդէին խրախոյս
 Վազել ի վըտանդ եւ փառաց ի լոյս :
 Գըլխոյն արծուաթեւ ոսկի սաղաւարտ
 Շողշողայր նորա յաներկիւղ ճակատ՝
 Յոր սահէր կընծիւ տըխրութեան թեթեւ ,
 Զերդ լըծին յերես՝ ազուաւի մութ թեւ :
 Եւ բիւն որ ըզրոց թափէր ի նայեաց՝
 Երբեմն ըսքօղէր ի կաթիլ մի թաց ,
 Ինչպէս յամառուան ամպեր վազվազուկ
 Մածկի արեւուն ճառագայթ կարմրուկ :
 Կեցաւ , մէյմըն ալ նայեցաւ ի վեր
 Ի տապանակիր Մասեաց վեհ սարեր ,
 Ու սըրտէն թըռաւ մի բոց հառաչմունք ,
 Որպէս ի հրաբուխ լեռնէ կայծակունք : —
 Ո՞վ էր այն կըտրիճ , ու ինչո՞ւ արդեօք
 Սըրտէն արձակէր զայն շունչ հրաբորբօք .
 Ինչո՞ւ ճակատին վերայի ըստուեր ,
 Աչքերէն ինչո՞ւ արցունք կըսահէր :

Նա Հայաստանեայց էր Զարմայր իշխան ,
 Որ իւր քաջագունդ զօրօքն արամեան
 Ըզդրօջ եւ ըզփառս Հայոց վեր առեր
 Եւ ի հայրենեացն էր սահման իջեր :

Բայց ինչպէս ծիծառ ճըմբան հասնելուն
 Կըժողվէ ձագեր որ երթայ տաքուն ,
 Բիւնն ու դողդոջուն կըդարձընէ թեւ ,
 Բոյնին իւր վերջին տալ տըխուր բարեւ :

Այսպէս եւ այն քաջ՝ դընդին հետ մէկտեղ
 Անցեր Հայաստանն , երբ հասեր այն տեղ
 Որ դէմն՝ օտար դաշտք , ետին՝ հայրենիք ,
 Ու հայրենեաց հետ՝ սըրտին սիրելիք .

Կարծես իւր ամէն նոր քալլ առնելուն
 Սըրտառուչ ըզձայն կըլըսէր նոցուն .
 « Զարմայր , ո՞ւր կ'երթաս , ո՞ւր քաջօք այսքան ,
 « Ինչո՞ւ , եւ որո՞ւ թողուս Հայաստան . . . » : —

Կեցաւ նա , եւ զիւրն ըզլանջ անվեհեր
 Որ այն առաջին անգամու տրոփէր՝
 Աջոյն իւր անեղ ոյժ տըւաւ ճընջեց ,
 Ու աչքին արցունք սըլաքաւ ջընջեց :

Մէյմ'ալ սիրելեաց բողոք ցաւազին
 Հասաւ նորանոր յականջըս քաջին ,
 « Զարմայր , ո՞ւր կ'երթաս , որո՞ւ զՀայաստան ,
 « Որո՞ւ ըզքո հարսըն թողուս Շուշան » :

Գ.

« Զհարսն իմ Շուշան՝ թողում յԱստուած . . . »

Գոչեց յանկարծ սիրան այլայլած .

« Եւ զՀայաստան՝ թողում Հայոց ,

« Կարչնեղ բաղկացն եւ հո՛ւր ողւոց .

« Իսկ ես կ'երթամ ուր ի բարձանց

« Վարեն ըստուերք զիս զիւցազանց ,

« Կ'երթամ ի վրէժ արդարութեան՝

« Որ ինձ քաշել սուր ետ հրաման :

« Կ'երթամ զրօշիւք մեր աննրկուն

« ԸզՀայութեան տանել զանուն ,

« Եւ բարձրաձեմ յաչս աշխարհի

« Կանգնել ըզմեր փառս հայրենի .

« Կ'երթամ ի մեր զինուց չըոխդ

« Հայոց լեզուին հանել տալ թինդ .

« 'Ի օտար երկնից ըզմեր անուանս

« Սովրեցընել եւ ըզպարձանս :

« Կ'երթամ ի քէն ո՛հ , ես կ'երթամ ,

« Բայց մեծափնս եւս այլ դառնամ ,

« Որ պըսակաց յիմ ի դափնիք

« Պատեմ ճակատդ , ո՛վ Հայրենիք :

« Հարսն իմ անուշ , քեզմէ կ'երթամ ,

« Մի լար , փութով գիրկըդ դառնամ .

« Ու երբ եղնես բացեալ ինձ ծոց՝

« Գըանես անշէջ Զարմայրիդ բոց . . .

« Բարեաւ կացէք , ո՛վ Հայաստան ,

« Բարեաւ մընա , հարսն իմ Շուշան .

« Դառնամ , դառնամ նախ քան տարին ,

« Թէ ոչ դարձայ՝ ելայ յերկին . . .

« Բարեաւ կացէք լերինք Հայոց ,

« Հովիտք եւ դաշտք իմ ծաղկածոց .

« Երասխ , Եփրատ , բարեաւ կացէք ,

« Դրախտին Հայոց միշտ ջուր տըւէք :

« Բարեաւ մնացէք , ո՛վ իմ նախնեաց

« Շիրիմք՝ ոսկերքք ձեր կենսաղբեաց ,

« Եւ զքաջութիւն ողւով ձեր սէզ

« Ի սիրտ որդւոյս ձեր թափեցէք :

« Բարեաւ մընա , իմ Հայաստան .

« Բարեաւ մընա , քաղցր իմ Շուշան .

.

Գ

Բայց քաջին սըրտէն յայս անուն վերջին

Հառաչք հրատոչորք ըզձայն խեղդեցին ,

Ու ձիոց ի դափր օտից անհամբեր ,

Փոչին ամպի պէս զիղդիղեալ ի վեր ,

Ծածկեց այն գիւցաղն իւր պարմանեաց հետ,
 Մինչեւ հեռացաւ բանակն հետ ըզհետ .
 Եւ դեռ լեռն ու ձոր հընչէր Հայոց ձայն ,
 « Ողջոյն քեզ՝ ողջոյն մայր մեր Հայաստան . . . »

Այն յետին անգամն ըզվերջին ողջոյն
 Հայաստան լրոեց իւր այս քաջերոյն ,
 Որոց քիչ գալով լայն դաշտք Հայրենեաց՝
 Յասպարէզ բաղկի եւ սրբաին իւրեանց ,

Կ'երթային ծարաւք փառաց քան արեան ,
 Կ'երթային անվախ յօտարին սահման ,
 Որ եւ զօտարին ժողովէն պլրսակ
 Եւ իւրեանց անմահ թողուն յիշատակ :

Այս՝ ընկալան պլրսակս եւ համբաւ ,
 Բայց ո՛հ , եւ ըզմահ յայն դաշտ հիւրադաւ .
 Եւ ի դավնիդեայս իւրեանց ճակատին՝
 Աւանդ , Հայրենիք խընդալ չըկըրցին :

Օտար երկնից տակ նոքա քաջացան ,
 Օտար երկնից տակ հալեցան՝ ընկան ,
 Ու խեղճ Հայաստան տանն հազար որդւոց
 Եւ ո՛չ զոսկրներ ժողովեց ի ծոց :

Իսկ օտարն՝ որոյ օգտին եւ յօճան
 Զէնք ու կեանք արւին այն բիւրք հայկական ,
 Օտարն , ո՛չ միայն չեզաւ շնորհակալ ,
 Այլ եւ ո՛չ անուանքն է նոցին պահեալ :

Այն անեղ կըռուին՝ ամէն քաջ իշխան
 Ունեցաւ իրեն երգիչ՝ գովաբան ,
 Ա՛հ , Զարմայր միայն եւ տանն հազարեակ՝
 Զ՝ունեցան եւ ո՛չ մի փոքր յիշատակ . . . :

Ո՞վ գիտցաւ թէ յայն խուռն ազգաց ժողով՝
 Որ տարան իւրեանց զէնքեր Տրոյոյ քով ,
 Եւ բիւր մի քաջ Հայք յասպարէզ իջին ,
 Եւ յանուռն Հայոց գաչխարհ սարսեցին :

Ո՞վ գիտաց երբէք թէ Հեկտորին հետ
 Կայր քաջ քան զԵաս , Աքիլլեայ հանդէտ՝
 Որ բիւր յոյն քաջաց զարեւ խաւարեց ,
 Եւ յուղարկաւոր իւր շիրիմ նետեց :

Ո՛չ . զայն ո՛չ յիշեաց ոք եւ կամ գիտցաւ ,
 Եւ ո՛չ ոք յանուռն Զարմայրի լացաւ .
 Ո՛չ ոք Հայ վեհից ոսկերաց վերայ
 Բուռ մը հող ցանեց՝ գըթալով նոցայ . . . :

Հայեր , երբ պիտի ան դուք երբ սովրիք՝
 Որ ձեր շուռն՝ միայն Հայրենեաց պարտիք . . .
 Ի՞նչ միշտ աշխատիք ի փառս օտարին .
 Օտարն՝ ոչ տայ քան մ'ալ ձեր ոսկերոտին . . . :

* * *

Ե

Սակայն անցան օրեր , անցան ամիսներ ,
 Լըցաւ տարին զոր էր Զարմայր խոստացեր .
 Եւ թագուհին Հայոց ձիւնեանըն Շուշան
 Վազեց գրրկել ըզփառասքանչ իւր փեսան :

Հաղել էր նէ ոսկեճամուկ ծիրանի ,
 Գրլուխն առած պըսակ ի քօղ վարդենի .
 Խաժակ աչքեր վառին սիրով եւ յուսով ,
 Զի այն օր Քաջն իւր տի դառնայր իրեն քով :

Կեցաւ այն անդ ուր ըզբարեւըն վերջին
 Տըւաւ Զարմայր ու ծածկեցաւ ի փոշին .
 Սիրան ի կարօտ եւ կէս յերկիւղ էր ի ծուփ ,
 Զեփիւռին մէջ ինչպէս վարդին ծաղկաթուփ :

Յանկ օրծ հեռուստ ականջն հասաւ զըզրրդիւն ,
 « Սէրս է , մընչեց , այս իւր քայլիցն է տրտիւն » .
 Ու զեղաթոյր այտք դեռահաս այն հարսին
 Իբբ արշալոյս ծիրանեփայլ շողացին :

Յոյս իրեն թեւ տըւաւ , փութաց բնդ առաջ ,
 Բացաւ ծըղիս որ սիրելին գրրկէ Քաջ ,
 Եւ ըզճակատ նորա՝ այրած արեւէ՝
 Կապոյտ աչքին իւր յօղերով զովացնէ :

Բայյ յանկարծ ետ ետ քաշուեցաւ դալկազոյն .
 Աւանդ , առջեւն էր ոչ հատոր իւր հոգւոյն ,
 Այլ էր Վըստամ՝ քսջ արքային զինակիր ,
 Որ դող ի դող գայր աչք խոնարհ ի յերկիր :

« Վըստամ , դոչեց հէզ թագուհին շընչասպառ ,
 « Ո՞ւր է Զարմայր , Հայոց արեւ լուսափառ . . . »
 — « Զարմայր , կըրկնեց հեծեծելով պատանին ,
 « Գըշխոյց Հայոց , սոջ լեր . . . արքայդ է . . . յերկին » : —

Կարծես թէ շանթ դարկած սըրտին՝ ընկաւ վայր ,
 Վարդ շըրթուհեքէն ելաւ միայն « Ա՛հ , Զարմայր . . . »
 Ընկաւ ինչպէս մի լըրթագոյն մանուշակ՝
 Որ յարեւուն թռամի մարի բոց կըրակ :

Զ

Կ'ըսեն թէ Հայերն երբ երկրորդ օրին
 Եկան որ իրենց փընտուեն թագուհին ,
 Հոն՝ ուր փակեց աչք նազելին Շուշան՝
 Գեղաշող միայն մի ծաղիկ գըտան :

Թագուհւոյն ձիւնի պէս գէւթին նըման
 Ունէր նա սպիտակ շըղարչ լուսերիեան ,
 Եւ տերեւներուն անուշիկ բուրուժ
 Գըշխոյին մաքրիկ սըրտին էր բըղխում :

Իսկ ճակտին վերեւ մարդարտի ցողեր՝
 Անշուշտ խեղճ հարսին վերջի արցունքն էր . . .
 Որով հեղափայլ ծաղիկն այն օրէն
 Ըզ Շոշառն անուն առաւ զըշխոյէն :

* * *

Հայեր , երբ ճերմակ զայն ծաղիկ տեսնէք ,
 Չըքնազ թագունին ձեր ի միտ բերէք .
 Ու գէթ ձեր աչքէն կաթիլ մ'ընդունին
 Չարմայր եւ նորա թըշուճա Ամուսին :



ԵՐԳ Զ.

Տ Ի Գ Ր Ա Ն Ո Ւ Հ Ի

Tu decus omne tuis .
 VIRG. Ecl. v.

Ա.

Գեղեցիկ էիր , ո՞ Տիգրանունի ,
 Մեծափառ յերկրի քան ըզլիցո՞հի .
 Ասիոց բոլոր գեղանեաց ի հոյլ՝
 Էիր զերդ լուսին յազթող յաստեղց բոյլ :

Ձինչ գարնանափայլն վարդ փաղաքուչ
 Ծաւալէ ըզհոտ հովտին մէջ անուշ ,
 Այսպէս եւ գողտրիկ ուրիշ խիունի՝
 Սըփուէր զիւր շընորհան ո՞ Տիգրանունի :

Հայոց աշխարհին չըքնազ դու պարծանք ,
 Թագաւոր եղբօրդ սրբոտալառ հըրճուանք ,
 Քո մծոտ մուսնայր նա վիշտ եւ ըզքիրտ ,
 Եւ սըրաէդ առնոյր մըխիթար իւր սիրտ :

Փափուկ խորհըրդոց ուրիշ քո խօրան ,
 Ա՛նդ առանձնանայր եղբայր քո Տիգրան ,
 Եւ ի կուսանիդ շըրթանց սիրակաթ
 Բըղխէին Հայոց պատգամք մեզր ու կաթ :

Դու անդ յասպարէղ երկնից հայկական
Գեղեցկաճաճանչ հաշտից ծրածան .

Երբ երևէիր բըբօքդ հեշտալոյս՝
Ոգիք Հայկազանց հըրճուէին ի յոյս :

Քո ըսքանչելի դեղոյդ ի տարիանս՝
Ըզթաղն Ասիոյ քեզ բերին վարձանս ,
Բայց դու անձկանօք հայրենի օդոց՝
Վազեցիր վակժոյժ քո եղբօր ի ծոց :

Կոյս գացիր , գալ ձար դու Տիկնանց Տիկին ,
Այլ անբիծ մնացեալ էր կոյս քո ոգին .
Ի գալ քո սյնպէս խընդաց Հայաստան՝
Ինչպէս բընութիւն ի դառնալ գարնան :

Ի կարօտագին համբոյր քո սիրոյ
Բաբախեաց սյնչափ սիրտ վեհ եղբօր քոյ՝
Զի նոր մի խրախոյս ըզգաց ի ծոցուն ,
Եջ ի պատերազմ , եւ ել զիւցազնն :

Թէ դու ոչ էիր , ս քոյրդ աննրման՝
Հայաստան չ'ունէր արդեօք զիւր Տիգրան .
Թէ դու ոչ էիր , ս Տիգրանուհի ,
Հայաստան լինէր օտարին գերի :

Քո խորհրդաւոր չըքնաղ կերպարան՝
Իբր աստուածունոյ ի հայ պատմութեան ,
Պատկեր է քընքունչ , ս Տիգրանուհի՝
Թէ զինչպէս պարտ է գոլ Արմենուհի :

Բ

Ո՛ Արմենուհիք ,

Գիտէք ինչո՞ւ այժմ Հայաստան
Ոչ եւս ունի զիւր քաջ Տիգրան : —

Ո՛ Արմենուհիք ,

Զի Հայաստան ոչ եւս ունի
Զիւր գողար ու վեհ Տիգրանուհի

Ո՛ Արմենուհիք ,

Զեր վեհ քըրոջ լերուք նրման ,
Եւ զմեղ ըրէք մէն մի Տիգրան :



Արթընցաւ . . . նաւուց տեսաւ գումարտակ .
 Որ դայր սուրայր թափել յերկիրն ասպատակ .
 Արձանացաւ Հըսկայն Հայոց եւ գոռաց ,
 Ձինչ կարկտաբեր ամպրոպ ի գլուխս անդ Մասեաց :

Երբ Հըսկային մըռնչիւն նաւք լըսեցին՝
 Սարսափեցան , կարծեն տեսնել մահերնին .
 Առագաստից գող պարզեցին ուռուցիկ ,
 Ըշտապ խուճապ իբրեւ ի սեաւ փոթորիկ :

Կատաղեցաւ Տորք , դիզան հերք զերդ նետեր ,
 Յապառաժից յարձակեցաւ ի կողեր .
 Քանդեց գըրկեց ըզըլլրաձեւ մի խարակ ,
 Թափ անդ տըվաւ ու շեշտ պարսեց զինչ գընտակ :

Շոխնդ ի շառաչ պատանեցաւ ծով Պոնտոս ,
 Փեռեկտեցան անդընդոց վիհք լայնափոս .
 Անհողմ անամպ՝ ճըփին կոհակք լեռնապէս ,
 Ինչպէս յամառն ի փոթորկաց անդ հանդէս :

Ճարճատին կայմք , ջաղխի ցընդի նաւաց գունդ ,
 Ձէնք եւ զինուոր սուզին թափին գլոր յանդուռնդ ,
 Գընալ գուժել եւ վիրապացն այն խորոց
 Զոյժ ահաւոր բաղկի Սկային մեծ Հայոց : —

Ձէ , Սեւ ծով , չէ , երերածուփդ ալիքներ
 Ոչ միշտ ըզչայ նըկուն գերի չ'են տեսեր . . .
 Գոռս Սեւ ծով , գոռս ճըփն մի լըներ ,
 Մինչեւ ի մռունչ քո արթըննան իմ Հայեր :

ԵՐԳ Ը .

ՎԵՐՁԻՆ ՀԱՅԿԱԶՆ

Honneur au courage
 malheureux !
 NAPOLEON.

Ա .

Գիշերուան առել էր զերկին խաւար ,
 Ծածկէին լեռներն ու ձորք հաւասար .
 Հայոց դաշտերուն՝ մահ ու սուգ տիրէր ,
 Եւ իբր անապատ ամենայն լըռէր :

Բարձրածայր սօսեաց սաղարթուց միջէն
 Հոտ մահու առեր սոխակն ի բոյնէն ,
 Դող ի դող ըզձայնն էր քաղել անուշ ,
 Ու զարկեր թեւին զիւր ճըտիկ քընքուշ :

Լուսնակն ամպէ յամպ փախչելով մըռայլ՝
 Ըզտըխուր զիմաց կ'ուզէր ծածկէ փալլ ,
 Որ մի հայկական դաշտին տեսնէ սուգ ,
 Ու նըշոյլն հասնի լոյս տալ յարտասուք :

Միայն պահ ընդ պահ մի խոր մըռնչիւն
 Կըլըավէր դաշտէն խառն ի խըղըլտիւն .
 Կարծես հեռաւոր ծովու կոհակաց
 Շառաչն էր փըշրած ժայռից եզերաց :

Եւ հոգին որ քովի սարէն թաւալզլոր՝
Խառնէր հեծութեանց նըւազս անաւոր,
Կարծես արտասուաց 'ւ ողբոց էր Ոգին
Որ իջեր ու լայր յաղէտս աշխարհին :

Այս, աղետից անեղ սըզաբեր
Հայաստան երկրին այն օրն էր ծագեր,
Այն օր՝ պանծալի դարուց երկտասնեան
Հայկազանց փառաց աստղունք մարեցան . . .

Բ

Պահ մը լուսինն ըզկիստիայլ ձրգեց քող,
Ու դալկահար ամպէն սահեց զիւրն ըզշող,
Ինչպէս վերայ սեւատըխուր դագաղին
Մահու լապտերն արձակէ լոյս մըթագին :

Այս ժամուն՝ դաշտն այն անաւոր առաւ տես,
Մայրէ ի ծայր զիակներով խառնադէզ .
Ինչպէս ամռան Գողթան արտեր փըթթազարդ՝
Յորայս հընձոց չեղջակուտեալ բարդ ի բարդ :

Սուր եւ տէգեր, ոսկի 'ւ երկաթ զըրաններ,
Վահանք ջախջախ, պարապ ու լի կապարճներ,
Եւ ապաժոյժ արեանց լըճեր հոն դոնդող՝
Տըխուր մէկ փայլ առին լուսնին յայն ի շող :

Գիակներուն հոն ի բըլրակ մի շարժուն
Տեանըվեցաւ յաղթահասակ Գիւցազուն,
Որ ըզբըլունն ի վեր առաւ ծանրազին,
Եւ չորս քովերը ման բերաւ ի դաշտին :

Այն դիակներն ոյց էր վերան տարածվեր՝
Իրեն ձեռքին հարուածներովն էր զիզեր,
Ու ինք կարծես յողնած՝ հանդիստ հոն կ'անուր,
Ինչպէս հընձող հանդէի խոտոցն ի բըլուր :

Ապա աչերն ածեց Գիւցազն այն ի վեր,
Ու զատող Հայկայ յերկնից կամար կըփընտէր .
Բայց նա սըգոյ առեր ըզքող մի զիւրեւ,
Ու ծածկըվէր էր ի գիշերն այն ի սեւ :

Մըտիկ ըրաւ, բայց այլ ինչ նա լըսեց ոչ՝
Քան մահամերձ Հայոց հառանչըս դողդոջ .
Ապա եւ ինք սըրտի վերջինն հեծութիւն՝
Իւր քաջերուն խառնեց մահու ի մընչիւն :

Գ

« Վահ իմ, դուցեց, քըսան հազար իմ քաջեր,
Այս օր ուրեմն յետին կընքեալ օր էր ձեր .
Այսօր թըշուառ թագաւորիս ձեր բաղդին
Ձոն տալ ձեր կեանքին :

« Ահա նըման այն մըշակին սըզազգեաց՝
Որ կարկտահար տեսնէ ըզյոյս իւր դաշտաց,
Եւ ես ընկած ձեզ կը տեսնեմ, իմ քաջեր,
Ի մահ աննըւէր :

« Կուգամ եւ ես, հայրենասէրդ ընդ երամ
Եւ ես ձեր հետ առ քաջ նախնիս մեր կ'երթամ .
Կ'երթամ, սակայն սո՛ւ, զի՛նչ թողում Հայաստան . . .
Ըզլուծ գերութեան . . . :

« Հայկ եւ Արամ երբ խոր վերքեր մեր տեսնան՝
Պիտի ճանչեն որ չենք իրենց անարժան .

Ու մեր ձեռքէն բրունած՝ ցուցնեն մեծապանձ
Խըմբին զիւցազանց :

« Բայց ապագայ Հայք՝ որ զարիւն մեր չ'տեսան ,
Գովէն պիտի զՎահէ՝ զհազար իւր քըսան ,
Թէ՛ գերութեան շառաչելով շըղթաներ՝

Գոչեն անէծքներ . . . : » —

Այս սեւ խորհուրդ ընկաւ քան ժայռ մ'ահաւոր ,
Ու զՎահէի ընկճեց ըզսիրտ զօրաւոր .

Զ'էր թըշնամւոյն նետ որ քաջին մահ տըւաւ ,

Այլ խորի՛ն այս ցաւ :

Եւ ահա ձայնըն Գիւցաղին կըտրեցաւ ,

Ու հառաչանք մ'աղելտորով լըսվեցաւ . . .

Աւանդ , վերջին էր այն սըրտին տըրտիմանց

Վերջնոյն Հայկազանց :

Դ

Լուսին թանձր ամպոց մըտաւ ի կըռնակ ,

Մըշուշն ու խաւար տիրեց բովանդակ .

Քիչ մ'ատեն երկինք՝ Լ երկիր լըռեցին . . .

Բայց ապա յանկարծ յամպրոպաց մըթին

Որտ ընդ որտ թընդմամբ գոռալով

Թօթախեցան շանթք զերկին պատուելով :

Մըռընչեն տարերք ահեղ ի տարափ .

Երկիր այն ժամուն բըռնեց խոր սարսափ ,

Կարծես այն քըսան հազար Հայկազանց

Ոգիքն ի ծոցոյ հրածօձ կայծականց

Ի գլուխ թըշնամեաց յերկնից կ'ուզէին

Թափել վրէժ զոր հոս կիսկատար թողին :

Քանզի ոչ միայն երբ յերկրի է Հայն

Սիրէ զՀայրենիս ու զո՛հ լինի յայն ,

Այլ եւ նահատակ երբ երթայ յերկին՝

Հայրենեացն ըզսէր տանի հետ սըրտին .

Եւ յերկնից՝ նորոգ զօրութեամբ երկնի

Հայրենեաց իւրոց վրէժխընդիբ կանգնի :

Ե

Ապագայ Հայք՝ յոր վերջին ժամդ ի սըրտէ

Այդպէս տըխուր միտք կ'ընէիր , սլ Վահէ ,

Որդիք են քո : Ի՞նչ , նոքա քաջդ անիծեն ,

Որ զիւցազանց հաւսար ընկար ձեռքըդ զէն :

Քեզ անիծեն՝ որ քո զարիւն փառաւոր

Նըւիրեցեր քո հայրենեացըդ բոլոր .

Ու ցուցուցեր ի զարմացումն աշխարհի ,

Լէոնիդաս մը Հայաստանն ալ ունի :

Դու թըշնամւոյն բիւրուց զօրաց մըշտաբաղդ

Դէմ կըշռեցեր զողիդ ազատ եւ անյաղթ ,

Մակեդոնեան դէմ յորձանաց բըռնավար

Կանգնեցեր սիրտըդ հայրենեաց ի պատուար :

« Ըսիր . « Թէ այս կանք են երկնից ՝ թող գոռն այն
 Զիս նախ կոխէ եւ ապա թէ զՀայաստան .
 Ի՛մ նախ աչաց լոյս խաւարի մահազգեաց ,
 Որ ըզխաւար չըտեսնեմ իմ հայրենեաց : »

Ըսիր , ու դէմ մահու անվախ վազեցիր ,
 Ու ապառու մն Սլեքսանդրի ցուցուցիր ՝
 Որ թէ ընտրել պարտ է չըղթայն կամ ըզմահ ՝
 Հայը չըղթայն չ՛նուղեր , կ՛առնու զմահն՝ անան՝ . . . :

Ո՛վ Վահէդ քաջ , այո՛ , մեք եւ ապագայք
 Պիտի պարծինք քանի որ մեք կ՛ըսվինք « Հայք » .
 Պարծինք ի քեզ ոչինչ ընդհատ ի նըւազ ՝
 Քան թէ ի Հայկ , յԱրամ , Տիգրան եւ Վահագ :

Ինչո՞վ , ինչո՞վ քան ըզնոսա դու պակաս ,
 Ո՞չ նոյն յաջու՞մդ անընկճելի եւ անկաս .
 Ո՞չ նոյն կըրակ եւ յերակներդ քալէր ,
 Ո՞չ ձեռքըդ նոյն հայրենավրէժն էր սուսեր :

Այո՛ , որչափ այն մեր անմահ դիւցազունք ՝
 Եւ դու սիրոյ մեր ունիս նոյն իրաւունք .
 Բայց գուցէ դու , Վահէ՛ , եւ քիչ մ՛աւելի՛ ,
 Որչափ թըշու՞ռ քաջ մ՛որ ի մէր սէր մեռնի :

Այո՛ , մեռար դու մեր սիրոյն , ո՞վ դիւցազն՝ ,
 Եւ չնորհապարտ են քեզ բոլոր սիրաք Հայկազն .
 Ոչ . քանի որ Հայու մը սիրտ դեռ ողջ է ՝
 Կ՛երդնո՞ւմք որ դու անմահ մընաս , քաջ Վահէ :



ԵՐԳ Թ.

Ա Ր Տ Ա Շ Է Ս Մ Ե Մ Ն

Տ Ի Ե Ձ Ե Ր Ա Կ Ա Լ

... οὐποὶ ὁμοίης ἔμμορε τιμῆς
 σκηπτουχοῦ βασιλεὺς, ὅτε Ζεὺς κύδος ἔδωκεν.
 ΙΑΙΑΔ. Ραψοδ. Α. 278 (*).

Ա.

Ոչ , քան ըզնա չ՛եղաւ երբէք մեծ արքայ ,
 Զ՛եղաւ ձակատ որ յայնչափ թագ շողշողայ .
 Զ՛ունեցաւ դահ մեծ քան ըզնա գահակալ ,
 Ոչ երբէք աջ քան ըզնորս քաջակալ
 Ընդ մականին ոսկեկուռ
 Եւ դահաւոր տարաւ սուր :

Քան դից պատգամ՝ անդիմադարձ իւր հրամանք ,
 Յերկրէ յերկիր սրբութիւն մահ կամ ըզկեանք .
 Իսկ երբ զըւարթ աչերն ածէր ի ժըմիտ ,
 Եբբ ի գարուն արեւուն փայլ լուսախիտ՝
 Ազգաց ազանց սըրտաթինդ՝
 Ծաւալէր յոյս եւ ըզխինդ :

(*) . . . երբէք ոչ ի նոյնգունակ եհաս պատիւ
 թագաւոր մականակիր՝ որում ըզփառու ետ Արամազդ .

Յոտիցն ի շարժ՝ գարշապարին իւր յաղթող
 Երկրպագու մատչէին ազգք ազգք ի դող .
 Փառք չըզըտին երբէք ոգի մեծագոյն ,
 Յոր եւ որչափ լըցան՝ թըւէր քիչ՝ ոգւոյն .
 Իբր Ովկէան՝ զոր չ'բաւեն
 Լընուլ երկրի ուխք ամեն :

Գարձաւ հիւսիս՝ հիւսիս առջեւն իւր անկաւ .
 Գարձաւ հարաւ՝ հարաւ չըղթայն իւր առաւ .
 Վազեց ի Պարս , եւ ի բիւրուց բիւրուց մահ՝
 Խարիսիս եւ հիմն եդ աթոռոյն նախագահ .
 Գոռող ճակատք արքայից՝
 Իւր պատուանդան են ոտից :

Եւ դարձ առնէր յիւր անձկալին Հայաստան
 Ահեղագորն այն թագաւոր յաղթութեան .
 Եւ ժողովուրդն իւր ընդ առաջ եռանդնուտ ,
 Քան ընդ այնքան թաղաց գահուց կողոպուտ՝
 Մեծազըւարձ խընդային
 Ի տես իւրեանց Գիւցազլին :

Վեհ Արտաշէս , յոր բարձրութիւն դու ելեր՝
 Եւ զՀայրենիս ի թեւս ոգւոյդ ամբարձեր .
 Զայս առաջին անգամ որդին Արամայ
 Լըսէ զիւր տէր կոչել « Արքայից արքայ » .
 Զայս առաջին՝ Հայաստան
 Է աշխարհի գերիշխան :

Բ

Ահա դարձեալ նա պատենէն հանէ զսուր . . .
 Ո՛վ մեծ , չ'են բաւ քեզ յաղթանակըդ երկնալուր .
 Կամ թէ փառաց քոց ի ճաճանչ հրաշաղան
 Ո՞չ բաւական ողողեցաւ Հայաստան՝
 Որ նոր փառաց ի խընդիբ
 Արքայդ լինիս զինակիր :

Բայց նա խորհուրդ վեհ անդաճէ ի սըրտին ,
 Խորհուրդ արժան այնքանոյ մեծ Գիւցազլին .
 Գիտէ թէ փառք՝ որչափ իցեն մեծագոյն ,
 Մեծ եւս յաւէտ են պարտք նորա վեհագոյն .
 Որչափ թէ ոք ի վեր ել ,
 Այնչափ եւ պարտք են փայլել :

« Թէ զգահն ունիմ ես Արքայից արքայի ,
 « Հարկ է , ասէ , ես ինձ լինիմ արժանի » : —
 Կարծես՝ Սերքսեայ եւ Գարեհի ըստուերներ
 Թեւածէին ըզնովաւ տիւ եւ զիչեր ,
 Զանույժ ըզվրէժըս իւրեանց
 Պահանջելով ի թախանձ : (*)

(*) Գարեհ և Քսերքես և վերջին Գարեհ Պարսից թագաւորը յաղթուեցան ի Յունաց , և մեռան առանց կարենալու վրէժնին առնուլ :

Ասիական իւր յաղթութիւնք՝ որոց կէս
Շատ էր այլոց ի փառս՝ չ'էր ինչ յԱրտաշէս .
Սուր աչք ոգւոյն ի Յունաստան նըշմարէ
Դավնիրս փառաց դեռ ոչ քաղեալս յուսեքէ .

« Թէ յայն դավնիրս պըսակիրմ՝
« Յայնժամ անմահ ես լինիրմ » :

Ասաց , եւ փոզ եհար անեղ գոռալով ,
Եւ սիրտք Հայոց արծարծին նոր ի կորով .
Գունդք գունդք վագեն յոսն ի մատին ընդ առաջ ,
« Ո՞ւր քո հրամանք են արշաւեմք քաջաց քաջ .
« Ո՞ւր մեր թափեմք հայ նետեր ,
« Ո՞ւր տանիրք քո շըղթաներ » : —

Ահեղ յունքերըն լարելով սեւ ի սեւ ,
Դէպ յարեւմուտ դարձուց աչքերըն Պարթեւ .
Ինչպէս արծիւ որ դիտեալ զօրսն ի բարձանց՝
Եւ ցուցանէ կորովաբիր իւր կորեանց ,
Զի խոյացեալ իբր ըզջանթ՝
Յարձակին շեշտ առ ի սպանդ :

Յարձակին շեշտ եւ քաջք Հայոց արծուապէս ,
Գիտեն զ'ի փառս տանի զնոսա Արտաշէս .
Փութան յամէն կողմանց արքայք թեւակից ,
Խառնել ընդ Հայս՝ փառացըն գոլ մասնակից .
Զինչ ջուրք ի գետ մեծ թափին
Առնուլ դանունըն նորին :

Ելաւ համբաւ , տարածեցաւ մեծ շրոխդ ,
Գողաց երկիր գոռ բանակին յոտից թինդ .
Քան զարծուէնիչ հայ զըրօշներ բարձրագէտ
Արտաշիտին անուն գընայր կարապետ .

Աղդ եւ ազինք ի սարսափ
Մընան մահուն սըրտաթափ :

Բանակ այնպէս մեծ երեւեալ չ'էր երբէք ,
Երբէք արեւ չ'էր ցոլացեալ յայնչափ զէնք .
Երբէք այնչափ նետ չ'էր զերկին մըթազներ ,
Երբէք այնչափ վահանք չ'էին կուռ դոփեր ,
Եւ ոչ յայնչափ քաջաց գունդ
Լերինք տըւեալ էին թննդ :

Յառաջապահ վաշտն երբ յաշխարհ մեծ անցնէր ,
Դեռ վերջապահ գունդ ի սահման մըտեալ չէր .
Գետք յաղթաջուր ցամաքեցան քան յերաշտ ,
Գոռոզ բըլուրք յաղթին հարթին իբր ըզգաշտ .
Գաշտաց ծոցէն յանկարծ լեռ
ձակատ յաստեղըս տանէր :

Զօրութեան՝ որ եւ տարերց նախանձընդդէմ՝
Յական քըթիթ հուածէր ըստ կամս բազմադէմ ,
Ո՞վ յանդըզնէր դիմակալել ախոյան ,
Ո՞ր ազատել կարէ զգըլուխսըն վահան՝
Ի կայծականց գոռ եւ վէս
Զոր թօթափէր Արտաշէս :

Հասաւ հեղեղն այն ահաւոր զեռալով
 եւ քո յեղերս սանձել եւ քեզ , անամնձ ծով :
 Ընկճին ալիք ի յաղթաբերձ եղեւնեաց ,
 Շարժուն ցամաք յանկարծ գործի զիւրընթաց .
 Կայմք եւ նիզակք ահագին
 Ըզծով յանտառ փոխեցին :

Փարսախս հազար լի էր ցամաք դեռ ի զէն ,
 եւ ոչ բաւէր ծով դեռ տանել համօրէն ,
 Երբ ծայր նաւուցն արդէն հասեր ի յԱթէնս՝
 եւ Յոյն արիւն օծեր Հայոցն էր ըզզէնս .
 Եւ յանառիկ բերդս ի վեր
 Հայ զըրօշակ ծածանէր :

Գ

Ի վեհավայր այն մեհեան՝
 Ուր Արամազդն Ոլիմպեան (*)
 Փիղիասայ հրաշակերտ՝
 Առնոյր պաշտօն վեհապետ ,
 Անդ՝ աստուածոյն բազնին զոյգ
 Յոսկեկուռ բարձր ի գահոյք
 Յաշխարհախուժը ի հանդէս
 Բազմեալ էր մեծն Արտաշէս :

(*) Փիղիաս , հին ժամանակաց ամենէն անուանի անդրիա-
 գործը , Ոլիմպեան Արամազդայ արձան մը շինած էր՝ որ հրա-
 շալիք կհամարուէր :

Թէ զթագաւորս՝ հին ազգեր
 Համարեցան դից պատկեր ,
 Ո՞քան ըզՀայ դիւցազն այն
 Վեհ այդ փառաց էր արժան :

Ի սպիտափառ ճակատուն
 Վերանըստէր զօրութիւն ,
 Զոր պըսակէր լուսածեմ
 Արշակունի թագ վըսեմ :

Յայն մեծութիւն վեհափառ՝
 Յաչացն ի լոյս բոցավառ ,
 Շըլացեալ աչք յունականք ,
 Ծըփին սիրտ յահ եւ զարմանք :

Ընկեր յընկեր իւր հըծծէ ,
 « Ո՛չ , մահացու ոք սա չ'է ,
 « Այլ հայրն է սա Ոլիմպեան
 « Իջեալ փառօքն աստուածեան » :

Յոսկի բազինս անդ շըքեղ
 Դաս դաս զըրմաց զարդագեղ
 Անուշ խընկեր ծըլսէին՝
 Դիցանըման արքային ,

Եւ զըրմուհիք աչագեղ
 Փունջ փունջ ծաղկանց գունագեղ՝
 Պըսակ ի ձօն բերէին
 Աստուածակերպ Պարթեւին :

Եւ ժողովուրդ գունդագունդ՝
 Ի ծունկս անկեալ սրբաթոռնդ ,
 Գըթալ խընդրեն մեծեռանդ ,
 Մի բարկութեան տեղալ շանդ » :

Եւ գըղըրդէր մեհեանն այն
 Բաղմարարբառ անդ ի ձայն ,
 « Կեցցէ ընդ Զեւս (*) լուսապէս
 « Կեցցէ աստուածն Արտաշէս » :

Դ

Աստուածն Արտաշէս . . .
 Բայց անա ի գլոր ի պերճ գահոյից
 Աստուածն Արտաշէս
 Թաւալի յարեան իւրում մահալից :

Նա կիսակենդան
 Կանգնեցաւ ի վեր ծընկօք դողդոջուն ,
 Աչք արծարծեցան
 Ի հուր մի վըսեմ , ոչ ի վրէժ մահուն :

Ի վեր նայեցաւ՝
 Ի փառաց իւրոց անհնա բարձրութիւն .
 Ի վայր նայեցաւ՝
 Ի գերեզմանին ընդունայնութիւն . . .

(*) Զեւս (յունարէն Ζεύς) էր հայրն աստուածոց Արամազդ :

Պահ մի կեցաւ լուռ ,
 Խորհուրդք ի սրբաին ծըփէին իւր խոր . . .
 Եւ ապա տըխուր՝
 Գոչէր նա . « Աւանդ փառացս անցաւոր » . . .

Վերջին էր այն բան
 Զոր անեղ չըրթունք խօսեցան Վեհին .
 Լըռեաց ի տապան ,
 Բայց դեռ արձագանդ տան բանք այն վերջին :

Ե

Ո՛չ , ոչ երբէք վըսեմագոյն ի չըրթանց
 Վըսեմագոյն ելին բառք .
 Ո՛չ բնաւ քան յայդ բարձրութենէն գերազանց
 Դատապարտեալ եղեն փառք :

Մեծ եղար դու , մեծ ի գահ , գնդ Արտաշէզ ,
 Յամենայն կեանքս քո մեծ .
 Բայց մեծագոյն եղար եւ քան ինքդ ըզքեզ
 Ի սրբառուչդ յետին հեծ :

Եւ թէ չ'էիր յերկրի աստուած երկնաճեմ՝
 Զերդ Ելլադա քեզ պաշտէր ,
 Այլ զուարթուն ոմն անշուշտ չըրթամք քո վըսեմ
 Զայդ վեհ պատգամ բարբառէր :

Եւ զոր ոչ զէնք քո մըշտայաղթ տըլին քեզ՝
 Եւ փաղաքուչ ոչ խուժան ,
 ԶԱնմահութիւն , — զայն քեզ չնորհեց Ա՛րտաչէզ՝
 Մահուդ վերջին անմահ բան :



ԵՐԳ Ժ.

ԱՐՏԱԻԱԶԳ ԱՌԱՋԻՆ
 ԲԱՆԱՍՏԵՂԾ ՓԱԿԱԻՈՐ

En erit, ut liceat totum mihi
 ferre per orbem,
 Sola Sophocleo tua carmina digna
 coturno?
 VIRGIL. BUCOL. VIII. (*)

Ա.

Բանտ մահաստուեր , բացվէ հոգւոյս իմ առջեւ . . .
 Ես պատերէն քո չ'եմ սարսիր թանձր ու սեւ ,
 Ես խորչերէն քո չ'եմ խորչիր գէճ խաւար ,
 Ես չ'եմ փախչիր շրղթաներէդ ժանգահար . —
 Բանտ մահաստուեր , բացվէ հոգւոյս իմ առջեւ :

Եգիպտական ոչ զիս վաճառք ոսկեգանձ ,
 Ոչ արքունիք զիս հրապուրեն Պըտղոմեանց .
 Այլ գամ տըխուր ի Հայրենեաց իմ պանդուխտ ,
 Գամ ես գերի թագաւորիս ոտն ի յուխտ . —
 Բանտ մահաստուեր , բացվէ հոգւոյս իմ առջեւ :

(*) Իցի՛ւ լինէր ինձ տարփողել յաշխարհ համայն
 ԸզՍփփփկէան սօլերց արժան տաղս քո միայն :

Հոն ուր արքայն իմ կայ թըշուտն Արտաւաղ՝
 Քաղցր է դիմել ինձ տարիանճք սըրտավաղ .
 Ես զիմ մոռնամ պանդխտութիւն եւ ցաւեր՝
 Երբ զիմ պանդուխտ տեսնեմ արքայն յիւր վըշտեր . —
 Բանտ մահաստուեր , բացվէ հողուոյս իմ առջեւ :

Բ

Գիշեր է , եւ այն օթեւան ցաւոց
 Կըրկին խաւարի մէջ երերակոծ ,
 Ոչ մէկ գըթալիր աստեղ գող ի գող
 Կամ լուսնին անուշ սըպըրդի հոն շող :
 Ալեքսանտրիոյ վառ ի վառ ջահեր
 Կարծես յօր փոխել ջանան ըզգիշեր .
 Եւ ուրախալից գոչիւն ամբոխին՝
 Բանտին պարըսպաց զերդ հողմունք բախին :
 Լնու էր այն բանտ , լնու իբր ըզգերեզման . . .
 Բայց երբ թընդաց օդ խուժանին ի ձայն ,
 « Կեցցէ Մարկ-Անտոն , կեցցէ թագուհին ,
 « Մեռցի՛ր Արտաւաղդ Հռոմայ հայ գերին » : (*)

(*) Մարկ-Անտոն , կամ Անտոնիոս , Հռոմոյ եռապետաց
 մին , չկարենալով իւր հզօր զէնքերովը մեր Արտաւաղդ Ա.
 քաջ ու իմաստուն թագաւորին յաղթել , աղաչանքներով ու
 սուտ երդմունքներով քովը հրաւիրեց , ու շղթայակապ տա-
 րաւ զնա յԵգիպտոս , մասնելով Կլէոպատրոյ թագուհւոյն՝
 որ իւր տարփածուն էր : Այն անօրէն թագուհին որ արդէն
 ոխ ունէր Արտաւաղդայ դէմ , հանդիսի օր մը երիտասարդ
 Արշակունւոյն գրուէր կտրել սուտաւ :

Այն ժամուն բանտին նըսեմ կամարանք
 Մի խուլ հեծութեան տըւին արձագանգ .
 « Հռոմայ հայ գերին » . . . վայ զարկաւ ձակախն ,
 Եւ շառաչեցին շըղթայք իւր կըրկին :

Պահ մը մըտայոյզ գըլխով գեանայեց ,
 « Այ՛ն Արտաւաղդ , գերի՛ ես , գոչեց .
 « Գերի՛ ես , վըկայ շըղթայդ ի դաստակ ,
 « Գերի՛ ես , վըկայ ձակատդ անպըսակ :

« Գերի՛ . . . Ես գերի՛ , որդիս Տիգրանայ՝
 « Որ իւր պատուանդան ունէր զԱսիայ . . .
 « Գերի՛ , ես արքայս Հայոց այն մեծաց
 « Որ գողացուցին զարքայս փառազգեաց :

« Հըռոմայ գերի՛ , ես որ քաջապէս
 « Նորա դէմ փառաց իջայ յասպարէս ,
 « Եւ Արծիներովս իմով մարտագոռ
 « Գերեցի նորա զԱրծուխ անաւոր (*) . . .

« Բայց անա յաղթողս եւ ես գերեցայ . . .
 « Այլ հայր իմ Տիգրան , քո արեւ վըկայ ,
 « Որ զայս շըղթաներ չեա ինձ վատութիւն ,
 « Այլ հոռմէական դաւաճանութիւն » : —

(*) Թէ՛ Հայ Արշակունեաց և Թէ՛ Հռոմայեցւոց դըռանիչը
 Արծին էր :

Գոչեց , եւ աչվին ի կրակ բոցավառ
 Վերցուց երկաթներն առ երկինս արդար ,
 եւ մըռնչելով զերդ ամպ երկրասաստ՝
 Գողացոյց ըզբանտ առիւծն Արտաւաղդ :

Գ

Առլւծդ հրդօր , քան լեր , թէպէտ ի բանախս՝
 Բայց դու մեծ ես քան զվատդ ոտիս յարքունիս .
 Թէպէտ կապված են ձեռքդ՝ Հայոց սանձակալ ,
 Բայց քան զկապողն այն ձեռք՝ հրդօր են դարձեալ :

Մերկ է ճակատդ , անխառունակ սակայն չ'է .
 Արքայական փառքդ ի յաչաց քոց ցայտէ .
 եւ թէպէտ աջդ ի մականէն է թափուր ,
 Այլ ոչ եթէ եւ յիւր ուժոյն ամրակուռ :

Ո՛վ Տիգրանայ մեծ արժանի դո՞ւ ծընունդ ,
 Թէ՛ նա զբողո՞ր Ասիա կոխեց հանեց թունդ ,
 Գու՛ ճն բաղդին ել Արտաւաղդ ախոյեան ,
 եւ վերացիր ի մահուանէդ յազթական :

Այո՛ , արքայ մը ոչ միայն ի գահու ,
 Այլ մեծ է նա մեծ եւ նրսեմն ի մահու .
 Որչափ ջանայ բաղդ քեզ ընկճել զիմակալ ,
 Ո՛վ քաջ , կարես յանմահութիւն խոյսնալ :

Գ

Արեւն ելեր եւ ճոխացեր պերճափառ ,
 եւ ծաւալէր զըւարթ ցոլքեր վառ ի վառ .
 Բնութիւն համայն զըւարճանայր լուսապանձ ,
 կարծես տօնէր ըզյիշատակ դերապանձ
 Նահապետին Հայկազանց :

Այն գեղեցիկ օր թեւերով բոցարծարծ
 Բզկիառանհեղն այն կը բերէր տարեդարձ ,
 Յոր առաջին բըռնաւորին զիմադրաւ .
 Հայկ աշխարհի դազատութեան ձայն տըւաւ ,
 եւ մեղ՝ զանուն իւր անբաւ :

Այն սըխրալի օր անմոռանցն յաւիտեան ,
 Յարձանազիրս անդ բոցատառս աստեղեան ,
 երկին , առ քեզ ես բողոքեմ ցաւալից ,
 Պէտք էր այն օր դառնալ ի սուգ լալծնից
 Հայկայ որդւոցըս սըրաից :

Պէտք էր յայն օր , յազատութեան օր վըսեմ ,
 Հայկայ յաջորդն իբր ըզգերի ոք նըսեմ՝
 Շըղթայակապ՝ յօտար երկիր դաւաճան՝
 Զո՞ն լինի զո՞ն կընճջ միոյ ոխութեան ,
 եւ Հոովմական մատուութեան . . .

Նըստած էր կլինն այն հոմանունն հետ ի գահ ,
 Եւ շուրջ՝ որդիք եւ գունդ զօրաց անձնապահ .
 Եւ բազմութիւն ի թագունւոյն մեծ հրաւէր
 Յարքունական դահլիճ վազեր էր խըռներ ,
 Տեսնել ըզմահ քաջին մեր :

Այն թագունին՝ կընոջ յանուշ կերպարան՝
 Օձի մը սիրտ թագունցանէր ժանտական .
 Ոչ , նա չ'ունէր կընոջ ըզսիրտ քաղցուենի ,
 Այն՝ որ բաշխէ կեանք եւ շընորհս աշխարհի .
 Սա՛ մահ միայն հընարի :

Ի՛նք միայն ինք անգութ աչօք քինաւոր
 Ծաղկահասակ զայն կը դիտէր թագաւոր ,
 Մինչ ամբոխին սիրտ յայն ողորմ տեսարան
 Գորովելով աչքեր լըցուած ծըխական ,
 Հայ պարմանւոյն աւանդ տան :

Բայց եւ քաջին սիրտ երեւէր այէկոծ . . .
 Արդեօք մահուան է այն երկիւղ ոգէկոծ . . .
 Է՛հ , ոչ . զի բիւր անգամ նա դէմ յանդիման
 Տեսեալ էր մահն եւ ընկըրկեալ յաղթական
 Հըզօր բազկաւ հայկական :

Ո՛չ , մահունն ո՛չ տեսին ըզքաջ զըզըրդէր ,
 Այլ հեռաւոր իւր սիրելեացըն պատկեր .
 Գիրգ ամուսին մը զսր թողուր նա այրի ,
 Գնատըր մի որբ . . . զուրկ ի թագէն մէկ որդի ,
 Եւ Հայրենիք մի գերի . . . :

Ո՛վ Հայրենիք , դու արքայից իսկ սըրտին
 Թագէն ալ քաղցր ես դու ի ժամն այն յետին .
 Ոչ գահ , ոչ ցուպ ողբայր ի մահն Արտաշէզ ,
 Այլ զի չ'կարէր տեսնել ըզծուիւ բարձրագէզ
 Ի քո խըրճիթս եւ յերէզ : (*)

Եւ Արտաւազը ոչ լայր ծաղիկ իւր ըզտիք ,
 Ոչ կարճատեւ զիւր փառք , այլ քեզ , Հայրենիք .
 Եւ արտասուք մըթագնէին խիտ առ խիտ
 Այն սեւ աչքեր՝ որ փակէին անժըմիտ
 Կարօտ վերջին ողջունիտ :

Բայց թագունին եւ իւր անարդ տարիածուն՝
 Իբր ըզգազան որ խաղայ հետ իւր որսուն ,
 Երբ ձաղանօքն այն բաւական կըշտացան՝
 Սիրտն արիւնոուշտ ծարաւահիւժ էր արեան ,
 Մահունն ետուն ըզհրաման :

(*) Մագիստրոս կը գրէ թէ Արտաշէս Բ. սիրայիշատակ թա-
 գաւորը՝ մեռնելու ժամանակ յիշելով կենաց և տարւոյն գա-
 րունը որ այնքան քաղցր է Հայրենեաց մէջ , միմեջած ըլլայ մեր
 ազգային վիպասանից սա սրտաուռչ խօսքերը .

- « Ո՛ տայր ինձ զժուի ծխանի
- « Եւ զտուաւօտն նաւասարդի ,
- « Զվազելն եղանց և զվագելն եղջերուաց .
- « Մէք փող հարուարք և թմբկի հարկանեարք : »

Ամբոխն յայնժամ դարձուց աչլին եւ 'առ քօղ . . .
 Այն արտասուեաց մէջ իբր ըզվարդ յայդուն ցօղ՝
 Ընկաւ խարտէշ գլուխ պարմանունն գեղեցիկ ,
 Գեռ մընչելով զիւր ամուսին եւ որդիք ,
 Ու գըեղ ո՛վ քանցր Հայրենիք . . .

Սակայն արիւն իւր ըզվըրէժ գոչելով
 Յայտեց յերես չար այն կընոջն ի նըզո՛վ .
 Սարսափեցաւ նէ եւ հոռոմ հոմանին ,
 Եւ պաղ քրրտունք նոցա ճակատ ծածկեցին . . .
 Մահ եղ կընիքն ի նոսին : —

Անցան օրեր . մոռցըվեցաւ օրն եւ ա՛ն .
 Բայց ոչ եթէ եւ ըզնոսա մոռցաւ մահ .
 Նոյն տեղ Հոռոմն ալ իւր արեամբ լըւացաւ ,
 Նոյն տեղ եւ կինն այն չար վերջին շունչ տըւաւ . . .
 Մահ վրէժն առաւ , հանդչեցաւ : —

Ե

Ո՛վ Արտաւազդ , քո բնիզն ողբանք թէ գմերըս բուն ,
 Որ քեղ նըման քաջ արքայէ եւ իմաստուն
 Չըմնաց ուրիշ ժառանգութիւն ի ձեռքս մեր
 Բայց քո շըղթաներ :

Ո՛վ բանաստեղծ հըզօր , (յ) ինչո՞ւ արկածքդ յաւէտ
 Շարժեն մեր սիրտ եւ ոչ քերթուածք քո վեհաւէտ ,
 Որ զօտարաց ալ վառէին սիրտ եւ զոգի՛ .
 Յաւիւն խանդիդ Չերմոգի :

Ո՛հ , երբ դանմահ մեր դիւցազունս Հայաստանեաց
 Հանեալ ի թատր ողբերգութեամբք քո սըզագդեաց ,
 Նըկարէիր կիրս եւ արկածսըն մահացուս ,
 Շարժեալ ըզՀայս յարտասուս .

Ո՛վ ողբերգուդ , ո՛հ , գիտէ՛իր թէ դու ինքնին
 Ի մեծագոյն օր մը անցեալ թատր աշխարհին ,
 Տըխուր բաղդիդ կատարածիւ պիտի առնուս
 Չապագայիցս արտասուս :

Ընկա՛լ , ընկա՛լ զոր սըրսկեմք դանն յիշատակիդ ,
 Չըկարելով ցօղել ի հող գերեզմանիդ .

Ո՛վ ողբերգակդ արքայ , քեղ զայս քոյդ ազգ հանուր
 Ընծայէ հարկ սիրատուր :

(*) Արտաւազդ մեր այն թագաւորաց մին է որոց յիշատակը ցանկալի պիտի լինի միշտ : Հռոմայեցի պատմիչք մեծ գովու-
 թեամբք կը յիշեն զինքը : Նա գիտցաւ արքունական մտկանին
 Տետ գրէչ լծորդել , ու սրոյն Տետ նաեւ քնար շարժել : Իւր
 քերթուածքն , ողբերգութիւնք և ճառեր կը Տետցընէին նոյն
 իսկ զՀռոմայեցիս , և զորս կը կարգայր Պլուտարքոս : Ափսո՛ս
 որ անգութ ժամանակը մեզ զրկեց նոյն բաղդէն , և այս մեր
 թագաւորական Տայրենի ժառանգութենէն :

Գիտեմ որ զայն կ'ընդունի մեծ ոգիդ սիրով .
 Բայց եւ ըզտաղս իմ այս սրկար՝ ախորժելով . . .
 Քեզ արժանի երդս ոգելոյ , պէ՛տ թագակիր ,
 Հարկ է ունել զքոյդ փանդիւ :

Բայց եթէ սիրտք բանաստեղծից իբրեւ ըզքեզ
 Ըզսիրտ միայն ախորժեն եւ սէր աղեկէզ ,
 Ըզսուր քո բիւ թափանց ի սիրտս արկ , մեծ քերթող ,
 Մի յանարուեստ իմ յայս տող :



ԵՐԳ ԺԱ.

ԱՐՏԱԻԱԶԳ ԵՐԿՐՈՐԳ

ՀԱՅՈՑ ՎՐԻՃԱՀԱՆ

« Արտաւագդ ցայժմ կենդանի կայ ,
 « և նա ելանելոց է և ունելոց զաշ-
 « խարհս » : ԵԶՆԻԿ. Ա. ԻԲ.

Ա.

Ազնտ Մասիս ,

Ո՛վ դու Հայոց մեծաց յաւէժ ալընկալիս ,
 Մերժէ պահ մը , մերժէ նրսեմ քո ըստուերներ ,
 Ու մուժ աչքիս ջահէ փառաց քո փայլակներ :

Ազնտ Մասիս ,

Թող ահնարկեմ ի մուայլըս քո խորհրդալիս ,
 Որ մեծապանծ Հայոց քաջին ծածկեն զանուռն ,
 Ապագայիցըս յոյս ի ծոց վընիցդ անհուռն :

Ազնտ Մասիս ,

Ո՛վ յաւիտեանց հըսկայդ անեղ , տէր աշխարհիս ,
 Կամ երկնապիշ բարձրութենէդ խոնարհէ յիս ,
 Կամ բարձրացո՛ ի վսեմութիւնդ քընարս ու զիս ,

Ազնտ Մասիս :

Բ

Ամառուան խաղաղ եւ անուշ գիշեր
Հայոց աշխարհին հովանին արկեր ,
Եւ գեղածիծաղ աստեղք ի յերկնից՝
Հայրենեաց մերոց գըլեն ժամս հեշտից :

Ջովուկ մէկ վըչէր սիւք ծաւալ ծաւալ ,
Ջառուակին սահէր ջուր թաւալ թաւալ .
Տերեւն ու ծաղիկ սարսին հեզ ի հեզ ,
Կազդուրին ի ցօղ ախօսք տօթակէզ : —

Անուշակ այնպէս եւ խաղանգ գիշեր՝
Ո՛հ , ինչո՞ւ սակաւ են ունել Հայեր .
Ինչո՞ւ ոչ նոյնպէս ազատ , անվըրդով՝
Ոչ քունն է թեթեւ՝ ոչ վաղն ասպահով :

Ինչո՞ւ ոչ նոյնպէս միշտ իրենց երկիր
Չ'են գըրեր ըզգլուխս ի նինջ հեշտակիր . . .
Վահ . . . ինչո՞ւ ինձ պէս պանդո՞ւխտ վըշտագին ,
Խեղճ Հայեր , հանգիստ գիշեր մը չ'ունին . . .

Ինչո՞ւ . . . — լըռեցէք խորհուրդք տըրտմութեան ,
Մի զիմ մի խռովէք միշտ սիրտ եւ ըզձայն .
Թէ ներկայս՝ Հայուն տայ միշտ արտասուել՝
Թողէք գէթ ժամ մի յանցելոյն վայել :

Գէթ ժամ մի թողէք որ պանդուխտ գերին
Մոռնայ զիւր այժմու վիճակ ցաւագին .
Գէթ ժամ մ'ի նախնիս փոխվի փառաշատ ,
Գէթ ժամ մի ծըծէ , ժամ մի զօղն ազատ :

Գ

Յարքունական ապարանից պատըշգամ
Քաջն Արտաւազդ անքուն նըստած էր յայն ժամ .
Եւ ի յանդոյր յայն ի հանգիստ աշխարհին՝
Ջըւարթանայր սիրտ ազդախնամ արքային :

Եւ զաչս յերկին վերցընելով աստղալոյս ,
« Ո՛ տայր , ասաց , որ ըզհանգիստ այս ժամոյս
« Մըշտաչընորհ կարէի տալ հայրենեաց ,
« Թէ եւ արիւն իմ յայն պիտէր ընդ կենաց » :

— Կեանք եւ արիւն՝ այս պիտին , Արտաւազդ , —
Ծանրը մէկ ձայն գոչեց նըմին աստուածագը .
Նա աստեղացն էր Մոգպաշտէ մեծ թարգման ,
Ոյր պատգամաց լըսէր բոլոր Հայաստան (*) :

Ձեռքի բարսմունքըն կարկառեց ի յերկին ,
Եւ զապագայս խոր գիտելով ծերունին ,
« Արքայ , կրկնեց , կը տեսնես մեծ զայդ վարսամ .
« Որ ի գըլուխ Մասեաց ծագէ ի բոց ծամ » :

Դարձոյց գըլուխն արքայ , տեսաւ հիանրաչ
Կարակնածեւ շողշողայր աստղըն խարտեաչ .
« Քո՛ւրմդ աստուածոց , գոչեց , ո՛հ ի՛նչ այդ նըշան ,
« Արդեօք իսընդայ թէ թընդայ իմս Հայաստան» (**)

(*) « Ի վերայ բազնացն կացուցանէ զընտանի Արաաշէսի . . .
Մոգպաշտէ անուն : ԽՈՐԵՆ. Բ. ԽԸ .

(**) Արտաւազդայ երկրորդի օրերը մեծ վարսամ կամ գիւ-
սաւոր աստղ մը երեւցաւ , ըստ աւանդութեան :

Խոր հառաչեց անդ ձերուներն , լուռ կեցաւ ,
 Թըւէր թէ սիրտըն կեղեքի յահեղ ցաւ . . .
 Զայնու գողգոջ , « Աստեղք , հեծեց , լուսաբոց ,
 « Հիմ ձեզի պէս չ'է մըշտալոյս բաղդ Հայոց . . . :

« Ինչո՞ւ խաղաղ այս երջանիկ գիշերաց
 « Յանկարծ օրեր գան յաջորդեն խաւարաց ,
 « Զինչ կանգուարայ յարտեւանէն սեւաստուեր
 « Գոռ փոթորիկք թափեն խաւար եւ աւեր :

« Աւեր , ահա սպառնան աւեր յիմ երկիր . . .
 « Ահա լըսեմ՝ կոփին չըղթայք ծանրակիր . . .
 « Ահա ճայթին մահածորան աղեղներ . . .
 « Ահա շկահեն փայլակնացայտ սուսերներ . . .

« Երկինք , արկէք ըղհովանիդ գըթութեան ,
 « Պաշտպանեցէք հէքն ու անոք Հայաստան . . .
 « Թըշուառ Հայուն հեծութեանց խնւ է երկին ,
 « Երկինք փակեն զաչս որ ի գութ չըշարժին :

« Ահա գէղ գէղ զինչ հունձք ընկած Հայք ի սուր ,
 « Դիակներով ձորեր փոխուեր են բըլուր .
 « Ծըխուն հեղեղ այն բըլրերէն վէտ ի վէտ
 « Թափի զեռայ , — ս'հ Հայ արեան է այն գետ :

« Ահա քաղաքք մեր բաղմամարդ՝ անապատ . . .
 « Ո՞ւր Արմաւիր , ո՞ւր էք Մըծբին , Արտաշատ . . .
 « Քարանց գիտեմ կոյտ , այս մեր գահ տէրութեան . . .
 « Ո՛հ , ինչ գահոյս փընտուեմ , մընաց Հայաստան :

« Մնաց Հայաստան , մընացին հայ Հայրենիք ,
 « Մընաց մէկ Հայ . . . — Ահա գունդ մը խեղճ գերիք՝
 « Որ ցան եւ ցիր՝ սիրտ եւ բազուկ ի չըղթայն ,
 « Ո՛չ անուն , ո՛չ երկիր ունին . . . այս է Հայն . . . »

— Ա՛յս է Հայն , այս . . . գոչեց անդուստ Արտաւաղ ,
 Ինչպէս առիւծ Լիբիականն ի յաւաղ .
 Ի վեր վաղեց լի բարկութեամբ քաշեց սուր ,
 Զայնն՝ որոտումն էր , եւ փայլակ՝ աջոյն թուր :

« Ա՛յս է Հայն , այս . . . ո՞ւր են Հայուն թըշնամիք ,
 « Յուցէք , թափեմ ի գլուխ նոցա հայ շանթիք՝
 « Երդուեան յաղատ Մասիս , վարսամ ի քո բոց՝
 « Որ վրէժն առնու՞մ , կոտորեմ չըղթայն իմս Հայոց » : —

Այն հայկական որոտընդոստ բարբառէն
 Իբր ի նոր սիւք արծարծի դից մարգարէն .
 Ապագատես աչք իւր ցողան վառ ի վառ ,
 Հայրենասէր սիրան անդ տրոփէ վեր ի վար :

« Ո՞վ է այս Հայ զինեալ ի սուր ահաւոր .
 « Խըրոխտ ճակտէն դա երեւի թագաւոր ,
 « Որ հայրենեաց կարկառէ զաջ իւր պաշտպան .
 « Երկինք գնա կընքեն Հայոց վրիժահան :

« Ահա ի սեաւն իւր բոցաշունչ վերասլաց՝
 « Շանթ թափելով ճախրէ ի սարս անդ Մասեաց .
 « Այս օթեւան է դից ի վինս անդընդոց . . .
 « Զինչ այս . . . պատեց ըզնա յանկարծ ամպ եւ բոց . . .

« Հայեր , 'տի գան գերութեան դարք երկնակամ ,
 « Բայց երբ տեսնէք զԱրտաւազդայ մի՞ Վարսամ '
 « Բացէք սրբոերդ ի յոյս , երկինք առնեն ազդ ,
 « Ահա կ'եղնէ Մասեաց վըհէն Արտաւազդ .
 « Վըրէժ , գոչէ , վրէժ , վըրէժ , լի՛ վըրէժ . . .
 « Արեանց Հայոց տոյժ պահանջէ բիւրավէժ . . .
 « Աւետիս , Քաջին բազուկ վրիժահան
 « Ահա կանգնէ զիմ ցանկալի Հայաստան :
 « Երանի որ յայն օրեր ծընանին ,
 « Եւ տեսանեն զԱզատութիւնն ազգային . . .
 « Իսկ ես՝ քաշեմ թըշուան գըլուխս ի տապան ,
 « Թո՛ղ չոր ոսկերքս յայնժամ հողուն տակ խայտան :
 Ասաց , լըռեց խորհըրդաւորն այն բարբառ ,
 Ու գիշերուանըն ծածկեցաւ ի խաւար ,
 Մինչ խորասոյզ յիւր ի խորհուրդս Արտաւազդ՝
 Կարծէր լըսել դեռ եւս ըզձայնն աստուածազդ :
 Ի վեր յանկարծ դարձոյց աչկունքն առ վարսամ ,
 « Ո՛վ հրաճաճանչ , զոչեց , երկնից ինձ պատդամ ,
 « Քաջ է , երթամ անա ծածկել ի Մասիս ,
 « Մինչեւ Հայոց երկրորդ անգամ դու ծագիս » . . . —

Գ

Առաւօտեան խաղաղական լըռութիւն
 Լուծաւ յանկարծ ի շեփորին շառաչիւն .
 « Ազատք Հայոց ելէք ի ձի , առէք զէն ,
 « Արքայն Հայոց յորս ելանէ ասպազէն » : —

Ազատք Հայոց ելին ի ձիս օդապար ,
 Ի զրահ ի զէն վառին խոպան պար ի պար .
 Եւ ճանապարհք Արտաշատայ դըզըրդին
 Ի տրոխական դոփիւն քաջացն այն գընդին :
 Իսկ ինքն արքայ ըզփառացին արկեալ զարդ ,
 Երբ 'առ ի գլուխ եւ զոսկեթագ սաղաւարտ ,
 Համբոյր տըւաւ , — վերջին էր այն , — սիրուհւնն ,
 Եւ գըզուելով ըզվարդահոյլ այտ նորուն ,
 « Ո՛հ , բաժնըվիմ , ասաց , ի քէն Ե՛րանեակ . . . »
 Եւ Երանեակ փարեալ բազկօքն ի մանեակ՝
 « Մի զիս այսօր թողուր իմ քաջոր ամուսին ,
 Հեծեց , սիրտ իմ գելու աղղմամբ երկնային » :
 Եւ արցունքներ իւր յորդէին շիթ առ շիթ . . .
 Հէք Երանեակ , կարծես քընքուչ քո ոգիդ
 Էր նախազգած թէ այն անգամ էր յետին
 Որ ցօղք աչացդ ընկնէր ի ծոց քո փեսին : —
 « Մի մոռնար զիս » . . . կըրկնեց արքայ ոգեմոռնչ ,
 Կամէր յետին տալ ըզբարեւ . . . գելաւ շունչ .
 Փըրցուց կըրծէն մի լուսավառ ադամանդ ,
 Պաղաւ , նետեց հարսին , սրացաւ քան ըզչանդ :

Ոստեաւ ի սեաւն իւր ամեհի մըրըրկոտ ,
 Փոչին դիզաւ ամպ , գըզըրդէր թունդ որոտ .
 Արշաւասոյր քաջք յեկեւել վարդէին ,
 Եւ քաջ արքայն էր միշտ քաջացն առաջին :

Ե

Գոռաց փող կերկեր
 Խիզախ քաջալեր .
 Ճախրեն սուրան ձիք
 Թօթափեալ շանթիք ,
 Եւ փառաց վակժոյժ
 Քաջք առնուն աշխոյժ :
 Դափր անդ ի դրնդիւն ,
 Նժուգից վրնջիւն ,
 Որսորդաց գոչիւն ,
 Բարակաց հաչիւն ,
 Երէոց բաջիւն ,
 Զինուց շառաչիւն ,
 Աղեղանց ճայթիւն ,
 Նետից ճարճատիւն ,
 Շրոխդ ընդ բոմբիւն ,
 Անդ յընդոստ թընդիւն .
 Յանտառ , ձոր թըմբիւն
 Դըզըրդեն գանգիւն :
 Քաջք անդ քան ըզքաջ
 Խիզախեն յառաջ .
 Ոչ մայրիք , մացառք ,
 Ոչ խորք եւ կամ սարք
 Զարիս սիգալանջ
 Ընկըբկեն նըհանջ :

Արքայն շահատոկ ,
 Իւրոցն օրինակ ,
 Երեցըս լըցոյց
 Կապարճ մահարբոյց ,
 Երիցս ըղիւքինս
 Պարպեց ահագինս :

Դէզ դէզ անասունք
 Ընկան արագունք .
 Այլք փախչին դրահեռ ,
 Մահ հասանէ հեռ .
 Ոչ եւս այլ բաւեն
 Մայրիք յապաւէն ,

Արիւնուռչտ վարագը ,
 Այծեամբ քաջավագը
 Վազվագեն խուճապ
 Անյոյս ի տաղնապ ,
 Շեշտ ի սուր փըքին
 Թաւալ տապալին :

Զ

« Ի վեր , գոչեց Արտաւազդ , անք աղեղանց ,
 « Կը տեանէք զայդ փախըստական ջոկ եղանց ,
 « Ահա թեթեւ սուրան Մասեաց ի սարեր ,
 « Օ՞ն ետեւենէն դիմնմբ եւ մեք , չնայ քաջեր » :

Քաջերն ըղկուշտ երիվարաց մըտրակեն ,
 Եւ արքային ըզհետ ի վեր արչաւեն ,
 Եւ լըռութիւնք բազմագարեան սուրբ Լերին
 Զայն առաջին ի շուինդ վեհից դըղըրդին :

Մէն մի փըքին թուոցեալ ի հայ աղեղանց
 Հար շեշտակի զմէն մի ճապուկ յայն եղանց .
 Եւ պըղընձի շեփորն ի նուազ յաղթական
 Մասեաց ի սարս որսոց փողէր ըզվախճան :

է

Ճոխ աւարաւ ի շխանք ի մի համադունդ
 Հասեալ կային վըհի մը քով խորանդունդ ,
 Ահեղ ժայռեր , ուր չէր յայնչափ դարուց հին
 Յանդըզնեալ ոտք մահացուին :

Այն բարձրերէն ըզմայլէին նայելով
 Հայոց աշխարհըն ծաւալեալ անվըրդով .
 Շէնք եւ քաղաք եւ արտօրէք եւ հովիտ
 Շողշողային խիտ առ խիտ :

« Ո՛վ երջանիկ մեր Հայրենիք սիրեցեալ » ,
 Գոչեց արքայ ըզլըռութիւն ընդհատեալ .
 Եւ քաջք Հայոց անդ կըրկնեցին անձկալիք ,
 « Ո՛վ երջանիկ Հայրենիք » :

Զայն ցընծալից բարբառ գոչեն երեքնեն ,
 Կարծես սըրտերն ընդարձակին ի ծոցէն .
 Եւ արձագանդք գոռան յազատն ի Մասիք ,
 « Ո՛վ երջանիկ Հայրենիք » : —

Սակայն անդուստ մըթնի ճակատ արքային ,
 Ինչպէս յանկարծ ի սեւաստուեր ամպ՝ երկին .
 « Ո՛հ մանաւանդ , հեծեց , լացէք սիրելիք ,
 « Ո՛վ մեր թըշուան Հայրենիք :

« Թըշուան , որ զայս իւր հանգըստեան կարճ օրեր
 « Պիտի տուժէ երկայնագոյն , սն , դարեր .
 « Այս ամէն փառք , քաղաքք այդ պերճ եւ բերդք ձեր
 « Տապալիսցին հիմն ի վեր . . . :

« Աղւտք Հայոց , պարծանք Հայոց աշխարհին ,
 « Գիտէք որդւոցդ ինչ բաղդ կընքեալ է երկին .
 « Ա՛հ , ոչ ըզհարց փառք՝ ոչ ըզդանձ՝ ոչ երկիր ,
 « Այլ շըղթաներ ծանրակիր » . . . : —

Լըռեց արքայ , եւ նախարարք լուռ կային ,
 Աչքեր լըցված եւ սեւեռեալ ի գետին ,
 Կարծես սըխուր բաղդի աւուրց մեր պատկեր
 Նոցա գիմաց նըկարէր :

Հեծաւ արքայ , կապարճ ուզեց նետալից ,
 Զըզեց իւր ուս , վահանն առաւ փառակից .
 Ըշկահեց թուր , ճօճեց նիզակն անդին ,
 Եւ նայեցաւ ի յերկին .

« Քաջեր , գոչեց , երկինք կոչեն զԱրտաւազդ ,
 « Ի դից հրաւէր՝ թագաւոր ձեր է պատրաստ .
 « Երթամ լինել աղաչաւոր Անմահից
 « Գըթալ Հայոցդ իմ բաղդից :

« Ողջամբ կացէք . . . երթայք պատմել Հայրենեաց

« Թէ Արտաւազդ զանձ իւր իրեն նըւիրեաց .

« Երթայք ասել թէ ի խաւար գերութեան

« Երբ հեծեծէ Հայաստան ,

« Այն խաւարէն աչվիդ յերկին վերուցէք ,

« Հոն երբ ծագեալ զիմ մեծ վարսամ տեսնէք՝

« Խրախոյս առէք , վերջ է հասեր գերութեան ,

« Յնչ Արտաւազդ վրիժահան :

« Գայ Արտաւազդ քակել կոտորել ըզըղթայս ,

« Յազատութիւն վըսեմ հանել բաղձր ըզՀայս .

« Գայ Արտաւազդ կանգնել ըզխառս Հայկական ,

« Գայ նորոգել Հայաստան » : —

Ասաց , եւ աչք իւր վառեցան բոցահրաչ ,

Եւ մինչ աւագք Հայոց կային հիահրաչ ,

Ի սոյլ նըչան հաւատարիմ իւր ետ շանց ,

Ըզնըժուգին եթող սանձ :

Ոստնոյր ի վինն արքայ զիմօք անխըռով ,

Եւ վերջին մի իւր քաջերուն նայելով՝

« Ողջոյն , գոչեց , ձեղ եւ Հայոց բովանդակ ,

« Ողջոյն առ իմս Երանեակ » : . . .

Ա՛մպ սեւաթոյր յանկարծ իջաւ հրաթաղանթ ,

Ծածկեց զանդունդն որոտալով բոցեռանդ .

Ձանլախ վեհիցն այն սիրտ սարսափ անդ կալաւ ,

Աչացն արցունք պաղեցաւ . . .

Եւ դառնային լըռիկ մընջիկ տըխրաղէմ ,

Անդէսք թէ լմն զիւրեանց արքայն թէ տօնեն .

Եւ դեռ յականջս հընչէր Քաջին յուսոյ բան ,

« Յուչ Արտաւազդ վրիժահան » :

Ը

Օ՛ն իմ Հայեր , զաչվիդ յերկին ճն ամբարձէք .


Գուշակութեանց մօտեցաւ ժամ .

Ասացէք ինձ , Հայոց որդիք , ահ , երբ տեսնէք

ՉԱրտաւազդայ մեծ վարսամ :



Ե Ր Գ Ժ Բ .



Ն Ա Խ Ա Վ Կ Ա Յ Ո Ւ Հ Ի Ն

Ս Ա Ն Գ Ո Ւ Խ Տ

. . . Manibus date lilia plenis:
Purpureos spargam flores (*)
VIRGIL. AENEID. lib. VI.



Ա .

Հայոց կոյսեր ,
Շուշան վարդեր
Փունջ փունջ առէք , տարէք յուխտ
Առ թագունին ձեր Սանդուխտ : —

*

Ինքն այլ ձեզի նըման էր կոյս ,
Աչքեր իւր քաղցր իբրեւ ըզյոյս .
ձակատ լուսնին պէս շողազարդ ,
Այտերը ծիւ ծիւ վառ ի վարդ :

(*) . . . Շուշանը սուք բընապիր .

Հեղին ծագումնըս ծիրանիս :

ՎԻՐԳԻԼ . ԷՆԵԻԿ . ԳԻՐԷ 2 .

Մարմար զուլամբն՝ ոսկի մազեր ,
Շուշանագեղ հասակ նազեր .
Ձեզի պէս էր ինքն այլ քընքուշ ,
Հրավառ սըրտից փափանք անուշ : —

Հայոց կոյսեր ,

Շուշան վարդեր

Փունջ փունջ առէք տարէք յուխտ

Առ թագունին ձեր Սանդուխտ :

Հայր . իւր Հայոց տէր էր բաղդին ,
Եւ մայր՝ Հայոց վեհ թագունին .
Ինք հօրէն միտք , մօրէն ըզգեղ ,
Յերկնից , առեր սիրտ լուսանեղ ,
Թագաւորին էր սիրելի
Քան ըզբոլոր փառս աշխարհի ,
Եւ թագունեոյն՝ քան զիւր դըստրիկ
Չըկայր գոհար չընաշխարհիկ : —

Հայոց կոյսեր ,

Շուշան վարդեր

Փունջ փունջ առէք տարէք յուխտ

Առ թագունին ձեր Սանդուխտ :

Թէ գլուխն ի քօզ ոսկերեհեղ
Յարբունական ձեմէր պարտեղ ,
Չըկայր ծաղիկ մի գեղաթոյր
Որ նէրա պէս վառէր ի բոյր .
Եւ երբ գարնանն ի դարթ գիշեր
Յերկինս ուղղէր պայծառ բըբեր ,

Շիկնէր շողշողն իսկ արուսեակ

Ի լոյս աչաց այն հրակայլակ : —

Հայոց կոյսեր ,

Շուշան վարդեր

Փունջ փունջ առէք տարէք յուխտ

Առ թագուհին ձեր Սանդուխտ :

Ուր երեւէր կոյսն այն անմեղ՝

Կարծես թէ շնորհն էր երկնահեղ ,

Ախտ եւ ցաւեր սըրտից ամէն

Փարատէին իւր բուրմանէն ,

Ինչպէս ամուսն ի բոց արեւ

Քաղցր է ծաղկանց սիւք հեշտաթեւ ,

Այսպէս Հայոց մեծացն այն կոյս

Էր բաղձալի տեսողաց լոյս : —

Հայոց կոյսեր ,

Շուշան վարդեր

Փունջ փունջ առէք տարէք յուխտ

Առ թագուհին ձեր Սանդուխտ :

Հայոց մայրերը կ'ըսէին .

« Զ'եմք նախանձիր զթագ մեր Տիկնին ,

Այլ զի այդպէս ունի աղջիկ » : —

Հայոց հայրերն ալ կ'ըսէին .

« Ի՞նչ բաղդ է մեր թագաւորին .

Հոռոմ եւ Հայ աշխարհ մէկտեղ

Զ'արժեն ըզգանձ այս հրաշագեղ » : —

Հայոց կայսեր ,

Շուշան՝ վարդեր

Փունջ փունջ առէք տարէք յուխտ

Առ թագուհին ձեր Սանդուխտ :

Թագաւորներն այլ կ'ըսէին .

« Մեզմէ որո՞ւն արքայորդին

Երանանայ գըգուել ի ծոց

Զայն աննըման բամբիշն Հայոց » : —

Պարթեւ , Հոռոմ , Հընդիկ թագեր

Մի ըզմիով գահ եւ գանձեր ,

Նախանձընդդէմ յիրեար թափին

Առ ոտս Հայոց մեծաց կուսին : —

Հայոց կոյսեր ,

Շուշան վարդեր

Փունջ փունջ առէք տարէք յուխտ

Առ թագուհին ձեր Սանդուխտ :

Բայց նա փափկիկ ոտքերուն տակ

Զարկաւ կոխեց գանձ ու պըսակ .

Ո՞հ , չ'են ստքա , չ'են Սանդըլտի

Արժանաւոր փափաք սըրտի .

Նէրա մաքուր սիրտ եւ աչեր

Երկնակարօտ դարձեր ի վեր ,

Ո՞ր սիրտ յերկրի , որ պատանի

Սըրտի կուսին այն արժանի : —

Հայոց կոյսեր ,

Շուշան վարդեր

Փունջ փունջ առէք տարէք յուխտ
Առ թագուհին ձեր Սանդուխտ :

« Հայր իմ , — գոչեց , — ես ինձ փեսայ
Մեծ քան զամէն ունիմ արքայ .
Նորա պըսակ՝ սուր սուր փուշէ ,
Ինձ քան զամէն թագ անուշ է .
Նա խոստանայ ինձ փառս անանց ,
Խաչ մը նորա մէկ հատիկ գանձ .
Եւ ես վազեմ այնու յուսով ,
Սիրտ իմ վառած իւր վեհ սիրով » : —

Հայոց կոյսեր ,

Շուշան վարդեր

Փունջ փունջ առէք տարէք յուխտ
Առ թագուհին ձեր Սանդուխտ :

Օրիորդին յուզեցաւ հայր ,

Եւ շատ արցունք հոսեց իւր մայր .

« Մի զայդ ասեր , աղջիկ սիրուն ,

Մի հօրդ ու մօր փախչիւր ծոցուն .

Թէ քիչ վըզիդ մանեակք ոսկի ,

Բերեմք զոսկի բոլոր երկրի .

Թէ Մըծբին փոքր է քեզ զարպաս՝

Օժիտ քեզ տամք բոլոր ըզՀայս » : —

Հայոց կոյսեր ,

Շուշան վարդեր

Փունջ փունջ առէք տարէք յուխտ
Առ թագուհին ձեր Սանդուխտ :

— « Դարպաս տըւէք ինձ սեւ այն բանդ
Ուր վեհ թագէն կայ պարաւանդ .
Ինձի մանեակ կամ ապրանջան
Խընդրեմ զերկաթ շըղթայ նորան .
Ինձ թէ զաշխարհ այլ տաք՝ քիչ է ,
Սիրտ իմ զերկին օժիտ խընդրէ » :
Մընչեց , թողուց մօր գիրկն անյոյս ,
Վազեց ի բանտ փախիկն այն կոյս : —
Հայոց կոյսեր ,
Շուշան վարդեր

Փունջ փունջ առէք տարէք յուխտ
Առ թագուհին ձեր Սանդուխտ :

Բ

« Սուրբ Առաքեալ , — գոչեց ի բանտ մըմնելով , —
Լըցաւ բաղձանքըս կէս , հասայ քուկին քով .
Ե՞րբ իմ լըցվի իդձ կատարեալ , երբ հասնիմ
Առ երկնաւոր Փեսայն իմ » . . .

Հեծեց Սանդուխտ , ու կարօտոյ տաք արցունք
Կաթկըթէին զինչ շաղ զօր տան աստեղունք .

« Սուրբ Առաքեալ , — կ'ըսէր , — սն , երբ ես փարիմ
Ընդ խաչակիր Փեսայն իմ » :

— « Վաղը, ո՞վ կոյս, վաղը, — կրկնեց Առաքեալ, —
 Վեհ բաղձանքիդ վաղիւ հասնիս կատարեալ .
 Քեզմէ պակաս չ'է կարօտեր յերկնի լոյս
 եւ քո փեսայն, անբիժ կոյս » : —

Ասաց Թադէ, եւ ըզհրեղէն շըրթունքներ
 Խոնարհեցուց Կուսին յահեղ շըղթաներ .
 եւ ըզվըսեմըն զայն համբոյր սըրբասէր
 Արցունքներով իւր կընքէր :

Խառնըվեցան երկու աչաց արցունքներ,
 Զինչ շուշանին ու վարդին թաց տերեւներ
 Երբ հոյն այգուն ծոցերն սըրէ դող ի դող,
 Թափեն խառնեն հոտն ու ցող :

Թափէր արցունք եւ Կուսին մայր ի գահոյս .
 Բայց ո՞չ նոյնպէս անուշ էր այն, այլ անյոյս .
 Ա՛հ, առաջին էր այն զիշեր՝ ուր հէգ մայր
 Իւր գըստրիկէն սրբ մընայր :

Թըշուան այն մայր, լացաւ, հեծեց ու լացաւ,
 Կանչեց աղջիկն . . . այլ պատասխան մը չ'առաւ .
 Մաղեր փետեց, « Սանդո՛ւխտ, Սանդո՛ւխտ իմ » գոչեց .
 Լացաւ արիւն, հառաչեց :

Սըրտէն մարեր յոյս, եւ ընկճել էր խեղճ մայր,
 Նըւաղեցաւ, ու երբ վերջին շունչ կուտայր՝
 Դեռ հեծեծէր. « Ո՛ւր ես, աղջիկ իմ սիրուն » . . .
 — Տիրեց մահն լըռութիւն : —

* * *

Գ

Երբ առաւօտուն ծագեց ի բանտ լոյս՝
 Գըտաւ սուրբ Թադէն հըսկող ընդ սուրբ կոյս,
 Որ գիշերն ի բուն սաղմոսաց դըրուակ
 Անուշ երգէին հրեշտակ ընդ հրեշտակ :

Արեւուն ճաճանչ շողաց բոցահատ,
 Պըսակ բոլորեց պերճ Կուսին ճակատ .
 Ապշեցաւ Թադէ, եւ պահ մը ինքզինք
 Կարծեց Սանդըխտոյ հետ նըստիլ յերկինք

Բանտին ահաւոր ճըռնչէն դըռներ,
 Ու ներս խուժեցին մահանոտ զէնքեր .
 Անէժք հայհոյանք՝ հոն սաղմոսներուն
 Զուգախառնեցան ընդ սուրբ ալէլուն :

Գունդ մը զինուորաց՝ զինչ ժանտ բաղէներ
 Հեղիկ աղաւնոյն հետ կըռուել եկեր .
 Բայց քան ըզնոցայն սիրտ ծարված յարիւն՝
 Կուսին սիրտ ծարաւ էր բուն իւր մահուն :

Քարչեցին բամբջան ձիւնաթոյր ըղթեւ,
 Նէ ծանրը շըղթայն գըտանէր թեթեւ .
 Քան զիւր հալածչաց քայլերն առաջէր,
 Կարծես մօրն ի գիրիկ գառնուկն էր զիմէր :

Նոքա կարծէին՝ թէ ի մահ տանին,
 Այլ յերկնի ճամբան առաջնորդէին .
 Երկնի՝ որ բացված էր իրեն առջեւ,
 Հրեշտակք ըզլուսոյ պատրաստեր են թեւ :

Վազեր են վազեր ծերք՝ տըղայք բոլոր ,
 Մայրեր՝ աղջիկներ ողբան սըգաւոր .
 « Ո՛հ , ծաղիկ տեսքիդ թէ դու չ'ունիս դուրս՝
 « Սանդուխտ , մեզ գըթա , մի՛ գըրկեր տեսուդ » :

Հայրը . . . — Դհ , ինչպէս տամ սուրբ զանուն հօր
 Յայն՝ որ էր գաղան դարձեր ահաւոր , —
 « Ի՞նչ գըթայք , գոչեց , զարկէք , մեռուցէք ,
 « Մօրը ետեւէն զանգուլթն յըղեցէք » :

Կարգ կարգ կը շարվին երկու գունդ զինուոր ,
 Սանդուխտ՝ աղեղանց ի մէջ բիւրաւոր .
 Շառաչեն նետեր քան շանթ փայլականց ,
 Բայց զիրար պատուեն գաղանք մարդախանձ :
 Երբ մահուանց այն դէզ տեսաւ Կոյսն արի ,
 Յողոց եհան , « Տէր , մըրմընջեց , բարի ,
 « Մի՛ գվրէժ իմ առնուր , ինձ թըշնամի չ'են ,
 « Սոքա շընորհել ինձ ըղբեզ կ'ուզեն :

« Առ քեզ գամ , Դհ , բնց գիրկդ անուշ , Յիսուս ,
 « Ընդունէ՛ ֆեսայդ ըզհողին իմ կոյս » . . . —
 Յերկին վերացոյց լուսակաթ դաշվին ,
 Ընդ երկին խառնէր եւ կարմրակ հողին :

Այն ժամուն մէկ սուր՝ քան ըզշանթ թռուցիկ
 Իջաւ շեշտ յանբիծ յայն ճերմակ ծոցիկ .
 Ո՛հ , բոսորափայլ ցայտեց կոյսն արիւն ,
 Զինչ ցուուն վարդեր թերթաթափ ի ձիւն . . . —

* * *

Հայոց կուսաններ ,
 Շուշանն է ընկեր .
 Ելէք քաղեցէք ,
 Ոգւոյդ զարդ առէք :

Գ

Իսկ դու , վեհ Կոյս , որ արդ յերկնից ի խորան
 Անմահ ֆեսիդ ի ծոց խայտաս անբաժան ,
 Ո՛վ սուրբ Սանդուխտ , նայէ՛ մաքուր յայն կոյսեր
 Որ հարագատ են քու քոյրեր :


Սոցա ալ սիրտ այն քնդցր արիւն խոխոջայ
 Զոր քեզ տըւաւ մայր Հայաստան եւ նոցայ .
 Անոնց ալ սիրտք Դհ բուսցընեն Հայրենեաց
 Քո ծաղկըներ վարդազգեաց : —

* * *

Հայոց կոյսեր ,
 Շուշան վարդեր
 Փունջ փունջ առէք տարէք յուխտ
 Առ թաղուհին ձեր Սանդուխտ :



ԵՐԳ ԺԳ.



Ա.Ռ. ԿՈՅՍ

Հ Ռ Ի Փ Ս Ի Մ Է

« Մայր հողույս կուսութեամբ . »

Մ. ԽՈՐԵՆ .



Գարնան վարդերուն մեր բոսորագեղ
Ըզմայլեցուցիչ բուրմանց հետ մէկտեղ՝
Հասաւ , Հռիփսիմէ , քոյ գիրդ յիշատակ ,
Ու լըցաւ իմ սիրտ հոտովք անուշակ :

Պանդըխտիս ոսկերք ու լանջ ել ի թունդ՝
Երբոր լըսեցի քո սիրուն Անունդ .
Պահ մը զիմ արխուր շըրջակայս մոռցայ՝
Իբրու Հայրենեաց թէ ի ծոց մըտայ :

Կարծեցի տօնիդ քո գերդ քաղցրալուր
Լըսել անդ հընչեալ բըլուր առ բըլուր .
Ու իբր ի քո սուրբ թէ կացեալ գաւիթ՝
Լըսել զիմ եղբարց օրհնութեան շըռինդ :

Կարծեցի տեսնել քո հասակակից
Արմենիկ կուսից ըզդաս հըրճուալից ,
Խայտալ Կուսանիդ ի վեհ յաղթութիւն՝
Որով յաղթանակ կանգնեց Կուսութիւն :

Կարծեցի տեսնել Սեղանոյդ վըրան՝
Ծաղկիդ , նըւիրեն վարդեր ու շուշան ,
Ծաղկունք՝ ոհ թոռունք ծաղկանց այն կարմիր
Զոր արեան ցօղով քով ոռոգեցիր :

Եւ իմ սիրտ արտիկեց , լուծվեցաւ լեզու ,
Եղբարց հետ խառնել ձայնիկս յալելու .
Հռիփսիմէ . . . գոչեմ , բայց աւանդ իմ ձայն
Օտար աստեղց տակ ցըրվեցաւ ունայն :

Եւ ահա սըրտէս գընաց խընդութիւն ,
Կըտրեցաւ շըրթանց զըւարթ օրհնութիւն .
Սչերս հոսեցին ու դիտունջն այն թացին
Զոր կապեր էի քո սուրբ Խորանին :

Ո՛հ , թէ կ'ընդունիս զեղբարց սիրտ ուրախ՝
Ո՛վ Կոյս , կընայլիս եւ յիմ ահուվախ .
Արդեօք չնս ցաւիր պանդըխտիս բաղդին՝
Որ լամ՝ երբ երկիր խընդայն ընդ երկին :

Եւ քնչպէս չըլամ երբոր չ'եմ արժան
Համբուրել զնըշխար քո եւ սուրբ տապան ,
Որ ցաւած աչքիս կաթի քո սուրբ եզ
Ու ցամքեցընէ վըշտանց զիմ հեղեղ . . .

Այլ դու թէ տաճար ունիս զՀայաստան ,
 Սակայն տիեզերք փառացդ է կայան .
 Թէ ես Հայրենեաց եմ աքսոր ընկած `
 Միթէ քո սիրոյդ եմ դուրս մընացած :


Ո՞ դքեղ կըսիրէ քան զիս յորդագոյն ,
 Ո՞ քեղ ամէն օր ի ծունկ տայ ողջոյն .
 Ո՞վ քան ըզպանդուխտս ի քեղ է կարօտ ,
 Ո՞վ զայս դառն ըղգաց ցաւ այս առաւօտ : . . .

Ա՛հ . . . այս արտասուք հասնէին քեզի ,
 Ու չըցընդէին ի հողմն օտարի .
 Հասնէին քեզի , ու կոյս բըբերուդ
 Իջեցընէին նըշոյլ մի գըթուդ :

Ո՛հ , լսկ այն ասեհն կըցընծայր ոգիս ,
 Ու կըմոռնայի ըզցաւ պանդըխտիս .
 Պանդըխտիս ` ում չ'իք յերկրի մըխիթար ,
 Ո՛չ գըլխոյն ` ըստուեր , սչ սըրտին դադար :




ԳԻՐԲ ԵՐԿՐՈՐԴ




ԵՂԵՐԳԻՔ

ԳԻՐԿ ԵՐԿՐՈՐԴ



ԵՐԳ Ա.



ՀԱՅՈՒՆ ԿԵԱՆՔԸ

« Շատ է աւուրն չար իւր . »

ՄԱՏԹ. ԳԼ. Զ.

Ո՛հ , բաւական իսկ դձուն են կեանք մահացուին ,
Բաւականէն առաւել կեանքն ազգային .

Անուշցընէնք , ս՛վ Հայեր ,
Յաստուածաշունչ ի սուրբ սէր :

Եղբարք , ս՛վ որ դանուն կրէ հայկական՝
Ըզրազը Հայուն պիտի կրէ անպայման .

Ո՛ւր եւ երթայ՝ հետ ինքեան
Տանի զՀայ շուք անբաժան :

Հարուստ ,աղքատ , յիշեցէք մէկ ունիք հայր ,
Ու ամէնքնիզ ալ մի եւ նոյն լացաւ մայր .

Հայկ ամենուզ է ծընող ,
Եւ ազգութիւն՝ օրօրող :

Հայք, հիմ խեթիւ հայիք յեղբարս հարազատ .

Ո՞չ նոյն ըզդրոշմ ունիք անջինջ ի ճակատ .

Ո՞չ նոյն ըզխաչ բեռն ի յուս

Շալկեց Աստուած ամենուս . . .

Ի՞նչ աւելի կ'ուզէք միմեանց ընկճել վիզ .

Ո՞ր Հայ այսօր կարէ պարծիլ բարձրավիզ .

Ամեննուս ալ նոյն երկաթ

Չը ջախջախեց վէս դադաթ :

Ի՞նչ աւելի ջանայք արտասունք թափել տալ .

Միթէ աչվիդ ո՞չ միշտ լեցված են ի լալ .

Ինչո՞ւ զկաթիլն ազգային

Կ'ուզէք ցընդել ձեր կըրքին :

Ի՞նչ աւելի փութայք միմեանց տալ ցաւեր .

Միթէ ո՞չ շատ իսկ ունիմք ցաւս, ո՞վ Հայեր .

Ո՞ր Հայուն սիրտն է անվէր ,

Ո՞ր մասն անտի ողջ հասեր :

Ի՞նչ աւելի խրոխտայք կոխել ըզմիմեանս .

Չէ՞ բաւական այսչափ ազգաց գոլ կոխանս .

Օտարք ի շունչդ են խնայեր ,

Դձուք զայն մարէք, ո՞վ Հայեր :

Ի՞նչ աւելի աւրել միմեանց խեղճ անուռն ,

Երկրիս երես մնացեր անուռն է Հայուն .

Ո՞հ, թող այլ լաւ է կորավի ,

Քան բանբասամբ ձեր պըղծվի :

Ի՞նչ աւելի հեռ էք զիրեար կործանել ,

Ամէնքս յաւեր, ամէնքս ի հող եմք դարձել .

Թէ ոք յաւերց շինէ տուն ,

Չըդիմանար նա հողուն :

Հայեր, զամէնքս երկին հաւասար է նայեր ,

Հաւասար լուծ, ամօթ եւ ցաւ է բաժներ .

Զի անբաժանք իրարու

Մընանք եղբարք սիրարկու :

Իսկ ով կ'ուզէ Հայութենէ բաժնըվի՜

Նըման ճիւղոյն է զոր կըտրեն ի յԱպրիլ .

Չ'ունի արմատ՝ կըցամբի ,

Եւ ի հընոց կընետվի :

ԸզՀայ արմատ չ'է՞ չորցուցած դեռ Աստուած ,

Այսչափ դարեր՝ ո՞չ յայն ի դուր են խնայած .

Մեր հողն է Դրսխտ . — Օր մը նոր ,

Կըրնանք ծաղկիլ զօրաւոր :

Հայեր, Հայեր, երբ կ'առնուք սուր անխընայ ,

Ու կ'արձըկիք վերայ եղբօրդ Հայ առ Հայ ,

Վախցէք, անդու՞թ ձեր տապար

Յերկնախընամ զարնէ ծառ :

Ամէն տերեւ զոր թօթափէք այն ծառէն՝

Բարձրեալն համբեր է մի առ մի երկընքէն .

Որդն որ ծառոյն կըկըռվի՜

Ունի զմըշակ թըշնամի :

Երկնի Մշակէն վախցէք . — զխտէ մը կերպով
Պիտի մեծնայ ճիւղն ու տերեւ ատենով .

Կըրնայ արմատ տալ յոստիկ ,

Ըզքեզ փոխել ի դըժնիկ :

Ո՛հ , շատ են շատ հողմունք որ դմեզ են ցաներ .

Մի Հայն Հայուն դէմ գըրդուէ նոր մըրրիկներ .

Ո՞ր մասն երկրի մընացեր

Ուր Հայ պանդուխտ չ'է լացեր : . . .

Ո՛հ , թէ ցըրված եւս եմք յիրեարց հեռաւոր՝


Ո՛վ Հայկազունք , լինինք սըրտով միաւոր .

Թէ քիչ տերեւ ենք մնացել՝

Շատ ենք ի պսակ մի հիւսել :



Ե Ր Գ Բ .



ՊԱՆԴՈՒԽՏ

Ա Ռ Ա Մ Պ Ն



Ա՛մպ . . . դէպ ի մեր այդքան ըշտապ ,

Ի՞նչ կըվազես բուռն ի տաղնապ . . .

Արդեօք առեր տանխս պատգամ՝

Երկրիս մէկ կողմը տարածամ :

Ա՛մպ . . . քո երես տըխուր է սեւ .

Ասան , վըրէժ մ'ունիս ներքեւ ,

Թէ՛ տըրտմութիւն մը վըշտահար

ձերմակ դէմքիդ ամէ խաւար :

Արդեօք երկնից բընիկդ ի դեհ

Հով մը հասաւ վարեց նըժդեհ .

Եւ դու՝ ցաւով քո հայրենեաց

Ի՞նձ պէս գընաս աչօք ի լաց :

Ի՞նձ պէս՝ որ լոկ եւ ի յերեր

Միայն ըզցանս ունիմ յընկեր .

Եւ հայրենեաց իմ կարօտով՝

Հալիմ մաշիմ ընդ հող ու ծով . . .

Ա՛մպ . . . թէ լըցված դու սիրտ ունիս՝
 Յօղ եւ անձրեւ հեղուս , հանդչիս .
 Թէ դու լըցված ցասմանդ է չափ՝
 Յորոտ եւ շանթ թափես սարսափ :

Ի՛մ ալ լըցված վըշտօք է սիրտ ,
 Ծանրեալ ճակատս է դառնաքիրտ .
 Բայց ո՛ւմ աչքիս դետեր զեղում ,
 Պանդըխտիս ցաւ թափեմ ես ո՛ւմ :

Ա՛մպ , անպ . . . քան զիս շատ երջանիկ ,
 Տեղ մը չ՛ունիս քեզի բընիկ .
 Հիւսիս եւ կամ հարաւ վազես՝ ,
 Երկի՛նք բոլոր քեզ ասպարէս :

Իսկ ես՝ որչափ առնում մի քայլ՝
 Թափեմ արցունք , զի քայլ մըն այլ
 Ի հայրենեաց իմ հեռանամ . . .
 Քայլ մ՛ալ ի մահ յառաջ գընամ :



ԵՐԳ Գ.

ՀԱՅ ՄԱՅՐ ՄԸ

O l'amour d'une mère !
 VICTOR HUGO

Ա.

Ձըմբան տըխուր այն գիշեր
 Սեփ սեւ մըթնած էր երկին՝ .
 Յուրտ մէկ քամի կըփռչէր ,
 Եւ սառ պատեր էր գետին :
 Ծառոց ճիւղեր մերկ ու չոր՝
 Անպատըսպար դողալով ,
 Շառաչէին սրգաւոր
 Սոսկու՛մն ի սիրտ ազդելով :

Ձըմբան տըխուր այն գիշեր
 Երկնի ծագեալ էր արեւ .
 Ձըմբան տըխուր այն գիշեր
 Հրեշտակ՝ մարդիկ՝ թեւ ի թեւ ,
 ՁԱստուածորդւոյն տօնէին
 Վայրաբերել ի յաշխարհ ,
 Փարեալ ի գիրկ սուրբ կուսին՝
 Իբր ըզմանակ մի խոնարհ :

Զըմբան տըխուր այն գիշեր
Տըներ բոլոր մութ էին ,
Բայց տաճարին լուսանցեր
Բոցաճաճանչ շողային :
Բոլոր տըներ լուռ կային
Իբրեւ մէյմէկ գերեզման ,
Բայց բարձրագոչ թընդային
Յարկը տաճարին աստուածեան :

Հաւատացեալք այն գիշեր
Իբրու զաշխարհ մոռնալով ,
Ամէն հասակ էր վազեր
Երկնից Մանկան մըսրին քով :
Կէսք զըւարթնոց երգակից
Աղաղակեն սմբաննայ .
Եւ այլք հովուաց դասակից ,
Սըրտեր բերեր են յընծայ :

Զըմբան տըխուր այն գիշեր
Ամենուն սիրտ էր ուրախ .
Փայլ շընորհաց երկնաբեր
Մերժեալ էր ցաւն ու ակալախ :
Կարծես յայն սուրբ տաճարին
Զերկրի սիրտմանց անապակ
Մահկանացուք ըզգային
Զոգեպարար ըզճաշակ :

Բ

Այլ հրեշտակային երգոց զուզահեա
Եւ եկեղեցւոյն օրհնից բերկրաւէտ ,
Նաեւ վըշտակից ձայն մը այն գիշեր
Հիւղի մը մէջէն կըթըռչէր ի վեր :

Զայն մըն էր՝ մոռցված բոլոր մարդկանցմէն . . .
Բայց ոչ ընդհատ քաղցր ալէլուներէն
Եւ զայն ձայն բեկբեկ կըլըսէր յերկնից
Այն՝ որ միակ յոյսն է կտորած սըրտից :

Որ խընկոց անսուշ անուշ բուրմունքէն՝
Որք ամպ ամպ ծըխին ի սուրբ Աեղանէն ,
Առաւել սիրով յեթերց հոտտախ
Ի դստըն զըմուռ թըշուտը մէկ սըրտի :

Թըշուտը մէկ սըրտի մըրմունջ էր եւ այն ,
Մօր մը հառաչանք էր կողկողաճայն ,
Որ քըսան տարուան ի ծաղիլին հասակ
Այրի մընացած էր որդւով միակ :

Արդ եւ այն մատաղ գեղաբոյս որդին ,
Մօրը բոլոր դանձ եւ յոյս սըրտեկին ,
Դեռ հազիւ դարունն ըսկըսեր կենաց՝
Ընկած էր զինչ վարդ ի շունչ փոթորկաց :

Մանկանն օրոցքին քով ծունկ ընկած մայր ,
 Պաղեալ անդամոց նորա շունչ կուտայր .
 Փափկիկ նորա թաթ ի ծոցին ծածկէր ,
 Չերմրիկ արցունքոյն ըզնա ողողէր :

Թէ շունչ զիւր համայն լինէր կարելի
 Սըրաէն անցընել յայն սիրտ փարելի ,
 Ո՛չ , ոչ դանդաղէր մայրն այն տալ զողին ,
 Շատ էր թէ ապրէր խանդակաթ որդին :

Ո՛հ , ինչո՞ւ գաւկին՝ մայր մը բարեխնամ
 կարող է տալ կեանք միայն մէկ անգամ . . .
 Ինչո՞ւ տաք շընչուն՝ տաք արցունքներու
 Չըտըւաւ Աստուած ոյժ կենդանատու . . . —

Մէյմ՝ ալ անդիէն մօրն այն ցաւազին
 Յականջ հասաւ թինդ ժամու զանդակին .
 կարծես հրեշտակին լըսէր ըզհրաւէր ,
 Արթընցաւ . . . ցաւէն ըզտօն մոռցել էր :

Մածկեց ըզճակատն ի քօղ սըգապատ ,
 Յանձնեց իւր մանկիկն Աջոյն երկնառատ ,
 Եւ գողգոջ քայլիցն ուժ տալով յետին՝
 Հասաւ ու մըտաւ սուրբ Եկեղեցին :

Տեսաւ որ երկիր եւ երկին բոլոր
 Երանի կուտան Մօր մը երկնաւոր .
 Ինքն ալ ցանկացաւ ասել բան մ՝ ուրախ ,
 Խեղճ մայր , ու սըրաէն թըռաւ սուր մէկ սխ . . . :

Գ.

« Մայր երկնաւոր , քեզմէ լաւ ո՞վ կըրնայ՝ ո՞վ
 Մօր մը սըրտին ըզգալ ցաւեր ու խորով . . .
 Ո՞վ քեզմէ զատ կարող է , Մայր որդեսէր ,
 Չորցընել մօր մ՝ արցունքներ :

« Որ դո՞ւ այլ նոյն վիշտ ու վէրքեր քաշեցիր .
 Որ դո՞ւ այլ նոյն լեզի արցունք թափեցիր . . .
 Որ դո՞ւ այլ քո Որդւոյդ տեսար մահն ի խաչ . . .
 Մօր մը լըսէ դանն հառաչ :

« Քո մայրենի սըրտիդ խօսի մօր մը սիրտ ,
 Քաշածներէդ իմ քաշածներս առ ի վրտ .
 Գու՛ որ Որդւոյդ վերայ այնչափ գողայիր ,
 Ի Աստուծոյ մը մայր էիր :

« Ըզքեզ՝ զւարթունք կ'ըստիտիէին մըտերիմ ,
 Ես ինչ ընեմ , խեղճ կինս որ մէկն այլ չ'ունիմ .
 Մէկն այլ չ'ունիմ՝ բայց զերկնատուր այս որդիս ,
 Եւ մահ փութայ զըրկել զիս :

« Մի , սո՛ Մայր , մի՛ . դու որ զխոես ինչ անբաւ
 Մօր մը սըրտին որդւոյն իւր մահ կուտայ ցաւ .
 Քո մայրութիւնդ ինձ բարեխօս ու ցաւեր ,
 Մանկիկս ինձ մի՛ բաժներ :

« Եթէ անմահ Որդիդ վըճուած է յերկին՝
 Որ հրեշտակաց հետ քովն աննու զիմ որդին ,
 Ո՛վ Մայր , դնւ այլ ողորմէ՛ մօր մը վերայ ,
 Զաւկիս հետ շունչս այլ երթայ :

« Թէ չըկրցայ սովորեցնել ըզքայլել ,
 Գէթ ցուցնեմ նրմա յերկինըս թըռչել .
 Հոն քու անուանդ յօրհներգութեանց ալէլու .
 Աւերնամք հեզ ձայնք երկու » :

Դ

Այսպէս հառաչեց մայրն այն վըշտակիր ,
 Եւ արցունքներով ողողեց զերկիր .
 Եւ երբ բաւական հեծեց ու լացաւ ,
 Տըխուր էր եկած՝ ըստփեալ դարձաւ : —

Ազօթք . . . ոհ , ինչպէս հէզ մահկանացուի
 Դու ըսքանչելի պարզեւ ես երկնի .
 Ո՞ր ցաւ է սըրտի զոր ոչ բըժըչկես ,
 Ո՛ր բեռն այնչափ ծանր զոր ոչ թեթեւես :

Այո՛ , ի գահէն մինչ յորբն ու աղքատ՝
 Իքո գիրկ զիմնն զըթած եւ առատ .
 Եւ երբ թըշուառին յոյս կըտրի ամէն ,
 Ո՛վ Ազօթք , յետնն ես դու ապաւէն : —

Ե

Զըմբան տըխուր այն գիշեր
 Անցաւ , եւ նոր ծագեց օր .
 Օրն այն ճըմբան տըխուր չէր ,
 Արեւ փայլէր անսովոր :


Զի երկրէ ճիչ մը պակսած ,
 Ու մայրենի մէկ հառաչ ,
 Բայց էր յերկին աւելցած
 Երկու ողոց քաղցր աւաչ : —

Իրիկուան դէմ վառեցան
 Մեռելոց մութ լապտերներ .
 Ու հանդըստեան լըսվեցան
 Շարականներ , սաղմոսներ :


Եկեզեցւոյն առաջեւ
 Սեւ մէկ դագաղ անցուցին ,
 Երկու զարթունք թեւ ի թեւ
 Անուշ հոն քունն լինէին :

Մէկմէկու գիրկ պըլըված
 Ելեր էին դէմ մահուան ,
 Մահ նոյն սըրով էր կըարած
 Վարդն ու կոկոն անբաժան :

Ո՛հ , անբաժան իրարմէ
 Երկուքն ի նոյն հանգչին հող .
 Զերկուան այլ նոյն խոտ ծածկէ ,
 Երկուքն այլ նոյն կ'ըմպեն ցող :



ԵՐԳ Դ .



ՆՈՐԱՄԻԼ ՏԵՐԵԻՔ

Հազիւ լուսոյ դողդոջ փայլ
 Պատուեց զամպոց սեւ մըռայլ .
 Մեր զաշտերուն՝ հազիւ ձիւն
 Դարձոյց զիւրեանց սեւութիւն .
 Եւ դուք վակժոյժ ի փըթիթ
 Գայք մեզ ժըպիտ ի քըթիթ .
 Նախածիլ տերեւք ,
 Բարեւք ձեզ , բարեւք :

Դեռ մարգերուն մեր ցըրտիկ
 Զ'եկաւ այցող ծիծառնիկ ,
 Դեռ սոխակին հեշտավանդ
 Զ'եսուն ծործորք արձագանդ ,
 Եւ դուք փութայք սիրալիր
 Խընդից հրեշտակք ի յերկիր .
 Նորածիլ տերեւք ,
 Բարեւք ձեզ , բարեւք :

Կանաչ երանդ ձեր փափկիկ ,
 Ձեւ եւ իրան ձեր մանրիկ ,
 Ո՛հ , աչերուն մեր ծարաւ
 Ի՛նչպէս անուշ փայլեցաւ .
 Տըխուր ոգիք ձեր տեսքին
 Կըղւարթանան ՚ւ ըսփոփին .
 Նորաբոյս տերեւք ,
 Բարեւք ձեզ , բարեւք :

Եկէք , եկէք մեր հովտաց
 Շողալ ի ծոց մըթաղլեաց .
 Եկէք ծառոց մեր ի դող
 Ձըզել ի գլուխ կանաչ քող .
 Եկէք արբուում բընութեան
 Նոր շըպարել կերպարան .
 Առաջին տերեւք ,
 Բարեւք ձեզ , բարեւք :

Եկէք , դարնան նորաբոյս
 Ծաղել վարդից արշալոյս ,
 Եկէք հրաւեր տալ առ սիք
 Խաղալ ընդ ձեր խոպոպիք .
 Ծաղկանցն ասէք քաղցրահոտ՝
 Գան , ո՛հ , կարօտ եմք կարօտ .
 Նախածին տերեւք ,
 Բարեւք ձեզ , բարեւք :

Եկէք , եկէք ո՛հ տերեւք ,
 Եկէք յուսոյ յանուշ թեւք
 Մեր սիրելեաց տապանին
 Ծածկել ըզնող արխարազին .
 Ա՛հ այն ոսկերց անձկալի
 Եղէք սըսակ ցօղալի ,
 Նորածիլ տերեւք ,
 Ո՛վ հրեշտակաց թեւք :



ԵՐԳ Ե .

ԱՌ ՏԱՃԱՐՆ ՀԱՅՈՅ

ԱՌԷՆ ՊԱՆԿԻՏԻՆ

« Քահանայք նորա հառաչեն . . . »
ՈՂԲԲ. ԵՐԵՄ. Ա.

- « Ե՛լ , ժամանակն է եկել ,
- « Ե՛լ , Հայ պանդուխտ , ել ի դուս .
- « Ե՛լ , ժամանակն է եկել
- « Որ դու տաճար զայս թողուս . . .
- « Ելիր , դու հոս չ'ունիս այլ ինչ՝ բայց քրնոր ջախջախ .
- « Ա՛ռ զայն իյուս ու ել ի դուրս՝ թէ կ'ուզես տալ անն » :

* * *

Ու ելայ՝ նրման աղքատին խեղճիկ՝
 Զոր հուրն ըստիպէ թողուլ զիւր խրդիկ .
 Կ'ելլէ ու չ'ելլեր , քայլեր չ'էն շարժիր ,
 Կըստիպէ վըտանդ , սիրտ չըբաժնուիր :

Ծընկուըններս ի դող՝ հասի զըրան մօտ ,
 Անկայ ի գետին , պաղի անձկարօտ .
 Եւ շատ թափեցի արտսուհք ուղխօրէն .
 Կարծէի զողիս ի կըրծից քաղեն :

Ո՛հ , ինձ երանի՛ թէ ի ժամն այն սեւ
 Համէր մահ , խըլէր սըրոյն զիս ներքեւ ,
 Որ զեկեղեցւոյն մեր սըրբանուէր
 Զըտեսանէի՛ աչօք իմ գաւեր . . .

Տէր , Տէր , դու զարտօսր իմ սակայն տեսար ,
 Տեսար , եւ ինչպէս ինձ չ'ողորմեցար .
 Ինչո՞ւ հեծութեանցս ետեւէ յերկին
 Զընրամայեցիր որ գայ իմ հողին :

Արդեօք զի տեսնեմ սըրբաշնորհ զայն տուն՝
 Զոր դու կընքեցիր յերկնալիրդ Անուն ,
 Ծաղը ու ստընհար եղեալ թըշնամեաց ,
 Եւ փակեալ յերես քոյց սիրեկեաց :

Արդեօք զի Սեղանն՝ ուր կըզենվէիր՝
 Տեսնեմ զինչ բազին տապալեալ յերկիր .
 Կամ գերդ կոյս անբիծ զորոյ պատուեն քող՝
 Տեսնեմ ես ըզնա մերկ յամօթ ի հող :

Արդեօք զի ըզսուրբ կանթեղ պըսպըզուն՝
 Որ մեղ բարեխօս հըսիէր միշտ արթուն ,
 Տեսնեմ չիջուցեալ ի շունչ անփաւեր ,
 Իբրեւ ըզսարեկ որ խըփէ զաչեր :

Արդեօք զի զանուշ ծուխ Հայ մեր խընկոց՝
 Որ այգունն այգունն խառնէր ընդ ամպոց ,
 Տեանեմ ցընդեալ յօդ զերդ ծուխ մահաղբեաց
 Որ յամպարըշտին զիզանայ յարկաց . . .

Տեսայ զայս ամէն , տեսայ ես , Բանձրեալ ,
 Տեսայ , եւ արտտունք իմ զեղան ծաւալ .
 Տեսայ , եւ հառաչք իմ լըցին զայեր . . .
 Արդեօք մինչ ի քոյդ ախանջ հասին , Տէր :

Արդեօք մինչ ի քոյդ . . . զի մարդիկ : ան , խոււ
 Խնւլ եղան յամէն աղերս մեր անդուլ .
 Խնւլ յամէն յորդոր , արտօսր ու պատճառ ,
 Եւ չըխնայեցին ի քո վեհ տաճար :

Մարդիկ . — Ինչ յիշեմ ես զանունն նոցին .
 Միթէ քեզ ծանօթ չեն ծածուկք սըրտին . . .
 Բայց դու ողորմէ , ողորմէ Աստուած ,
 Զի իմ ազգայնոց է եւ այս յանցուած . . .

* * *


Սնւրբ տուն , որ ինձ միշտ եղար հիւրընկալ ,
 Ըզվերջին սըրտիս գոհութիւնս ընկալ .
 Եւ ինչպէս ըզգւարթ երբեմն ազաչանս՝
 Արդ զիմ յուսաբեկ հընչէ հառաչանս :

Յատակ տաճարիդ եւ սըրբազան հող ,
 Առէք զարտասուաց իմ վերջին ըզցող .
 Եւ դուք սնւրբ որմունք , զայս իմ ողբ յեաին
 Ո՛հ , բարձրացուցէք մինչեւ ի յերկին :

Բայց հընչեցուցէք ծաւալ եւ յերկիր ,
 Հասուցէք յախանջ եղբարց զուգակիր .
 Ու թէ եւ նոցա կաթիլ մի ցօղվի՝
 Պանդըխտիս գէթ սիրտ յանց լոկ ըսփոփվի :

1859 ի Փարեզ





ՀՈՎԻԿ ՀԱՅՐԵՆԻ

Ո՞ւր ես Հայրենեաց իմ հովիկ անուշ . . .
 Գարունն է եկեր ծաղկամբ իւր քընքուշ,
 Արեգ կը ժրմտի բընութեան առջեւ,
 Ա՛խ Հայոց հովիկ, չըտան մեզ բարեւ . . .

Օտար երկնի տակ, զնւրկ մեր աստղերէս,
 Երբ գարուն փայլի՝ ախ, կ'արտասուեմ ես . . .
 Պանդըխտին համար արեւ փայլ չ'ունի . . .
 Ո՞ւր ես, ա՛ն սուր ես հովիկ հայրենի:

Գարուն՝ յորոյ ծոց չըչողար ծաղիկ
 Որ բուսած լինի ի Հայ եղեմիկ,
 Գարուն չ'է Հայուն, ճըմեռ կ'երեւի . . .
 Ո՞ւր ես ախ սուր ես հովիկ հայրենի:

Ո՞ւր ես, քեզ կարօտ եմք հովիկ Մասեաց,
 Կարօտ քեզ հրծծիւն Արմաւրեան սօսեաց .
 Մոռցար թէ մենք քեզ կ'ըսպասենք ի սուգ . . .
 Ո՞ւր ես, ախ սուր ես Հայրենեաց իմ սիւգ:

Անա բընութիւն հեշտ հրաւեր կարգայ
 Տօնել յաղթութեան նորա զոտընկայ .
 Հալեցան սառոյցք, զարթեր են ծաղկունք .
 Ո՞ւր էք Հայրենեաց իմ սոյլք անուշունք:

Հովիկ, ախ յերկար ոգւոց մեր ձմերուն
 Եկնուր մեզ բերել ըզՀայոց գարուն .
 Եկնուր արթնցնել մեր վեհ պարծանքներ . . .
 Հովիկ հայրենի, մոռցար դու զՀայեր:

Մոռցար մեր աչեր, մեր սըրտեր մոռցար,
 Ինչո՞ւ չես խառնիր մեր յողբ եւ յաշխար .
 Ինչո՞ւ մեր քընար հեծէ յարտատուք
 Եւ դու չ'ես թրթուր զայն սով Հայոց սիւք:

Ա՛խ, մեր Հայրենեաց բեր աւերներէն
 Փոշեակ մը մեր պերճ Հարց ոսկրներէն .
 Բեր նոցա հառաչ, հրծծէ մերին հեռ,
 Ո՞վ Հայաստանեայց հովիկ կենսաւէտ:


Բեր Հայաստանի գէթ մէկ յիշատակ,
 Յափանց Երասխայ հասցնուր մէկ կայլակ .
 Խառնին մեր Հարց հեռ արտաունք եւ ծիծաղ,
 Ո՞ւր ես հայրենի սիւք կենսախաղաղ:

Ո՛հ , գըրգէ զՀայուն դու ճակատ եւ ծոց ,
 Արծարծէ ինա հայրենաւառ բոց .
 Հասիւր մըխիթար զգացմանց ազգասէր . . .
 Ո՞ւր ես հարց ծըծեալ հովիկ կենսաբեր :

Ո՞ւր ես . . . Հայ բամբուսն շքնէ՛ գօրութիւն ,
 Գողթան քերթողաց բեր սոյլ եւ գաւիւն .
 Հայոց սրբաբերուն ազգէ՛ նոր խրախոյս ,
 Հովիկ հայրենի արթընցսւր մեր յոյս



ԵՐԳ Է .



Թ Է Տ Ա Յ Ի Ն Ի Ն Մ Ի

Թէ տային ինձի
 Թագ եւ աղամանդ գաւազան ,
 Քէզ զայն ձօնէի ,
 Թագուհեաց զըշխոյ Հայաստան :

Թէ տային ինձի
 Ծիրանի շողշող պատմուճան ,
 Քո՛ յուս ձըգէի ,
 Ո՛վ իմ մայր թշուառ Հայաստան :

Թէ տային ինձի
 Հուր բոց զիմ աւուրց պարմանեան ,
 Քէզ պարգևէի
 Զաւիւն իմ եւ խանդ , Հայաստան :

Թէ տային ինձի
Դարերու հոյլ 'ի հոյլ շըրջան ,
Սիրով քեզ տայի
Զիմ կեանք եւ հոգին Հնչաստան :

Թէ տային ինձի
Սիրտ եւ սէր կուսանի շուշան ,
Ես քեզ ընտրէի
Սըրտիս միակ սէր Հնչաստան :


Թէ տային ինձի
Պըսակ յիմ ճակատ մարդարտեան ,
Զաչքիդ ընտրէի
Արտասուաց մի շիթ Հնչաստան :

Թէ տային ինձի
Գոռ ազատութիւն անսահման ,
Ես վերընտրէի
Քո վեհ գերութիւնդ Հնչաստան :

Թէ տային ինձի
Հայրենիք շըքիդ Եւրոպան ,
Ես քեզ խնդրէի
Բոլոր ցաւերովդ Հնչաստան :

Թէ տային ինձի
Սըրտիս իմ ընտրել օթեւան ,
Զաւերսդ ասէի
Ինձ արքայութիւն Հնչաստան :

Թէ տային ինձի
Հրեշտակի քընար բոցադեան ,
Ես քեզ երգէի
Բոլոր իմ շընչով Հնչաստան :



ԱԶԳՈՒՐԱՅ ՀԱՅԵՐ

Երէկ մեր մէջ , այսօր՝ արդէն օտարցած ,
Ա՞յսպէս դուք շուտ էք ձեր ըսկիզբ մոռացած .
Ո՞վ էք դուք վատք , որ ըզձեզ բան մը կարծէք .
Հայկայ դուք խոնրթ որդիքն էք :

Հայաստանի վիժած ծընունդք ասղբատմբ ,
Ձեզ Հայուժիւնը կը նայի սարսափմամբ .
Բանդդ է մեզի որ զերկնատուր անուռն մեր
Կըրել ի ձեզ չէք ուզեր :

Երկինք ի գլուխ ձեր կ'որոտայ զլւր վըճիւ .
Երբէք պիտի չըխը՛այէ ձեզ երկիր .
Եւ Պատմութիւնն՝ սրձանազրեց անողոք
Ձեզ դէմ զարդար մեր բողոք :

Օտարանալըդ կ'երեւի ձեզ պատիւ ,
Սյլ սյգ իսկ է ձեր բուն ամօթը լըրիւ .
Օտարայէք , հեռայէք սրչափ կա՛լիք ,
Միշտ էք Հայոց դասալիք :


Հայոց բանակն ո՞վ որ դըրժէ այլասէր ,
Նա Ազգութեան է ըսպանօղ վատչու էր .
Ազգին դրօշու հաւատարիմ չ'եղողին՝
Դէմ են երկիր եւ երկին :

ԸզՀայութեանդ եղծել կ'ուզէք վե՛հ կընիք .
Ուր ալ երթայք՝ անջինջ ըզկեղտ ձեր տանիք .
Սրհամարհանք , զըզուանք են ձեր դատակնիք .
Սէր , մեծարանք՝ ուստեք չիք :

Ձեր ազգութեան՝ դուք էիք ցաւ , նախատինք .
Ձըկայ ազգ մը որ արդ ժողովէ ըզձեզ յինք .
Ինչ եւ անուռն ձեզ տայք՝ անուռն դուք չ'ունիք ,
Ի ոչ սըրբազան Հայրենիք :

Դուք որ Հայուն շըքեզ անցեալն ուրացայք՝
Ո՞վ սինըքորք , ձեզ ապագայ մի՛ յուսայք .
Մեր վառ աչերն առ այն կ'ուզողին իբր ի լոյս .
Ձեր մեռեալ սիրտ՝ չ'ունի յոյս :

Ձեզբայդական անարդեցիք մեր սուրբ յարկ ,
Դայէք զըտնել ձեզ օտարէն երդ եւ վարկ .
Պիտի տեսնէք թէ ձեր ունայն էր երազ ,
Ու միշտ ծըվիք քան զաւազ :



« Ամենդ եղբարք էք հաւասար »

Առ մեզ պատգամ որոտացիր սիրաբար .
 եւ մերժեցիր Հայոց սրբաէն յաւիտեան
 Ըզձանրութիւն բըռնութեան :

Մեզի սահման սըւիր ըզՊարտք ,
 Մեր իրաւունքը ճանչցուցիր գոլ մեր փնօք .
 եւ արթընցան ոգիք այս վեհ բառերու
 Ըզգալ զիմաստ կենսատու :

Քո շընորհիւզ Հայուն մըտաց
 Լուծան կապանք , առնուլ սկսաւ շունչ կենաց .
 Շունչ՝ որ իրեն պարզեւեց նոր յանկարծ յոյս ,
 եւ մարդկութեան մէջ խրախոյս :

Դու զլուսասփիւռ քոյին թեւեր
 Հայոց զըժխեմ խաւարին մէջ պարզեցեր .
 Ըսիր , մոռցէք զանցեալ ողորմ ձեր պայման ,
 Դարձցին ձեր աչք յապագան :

Ապագայն ձեզ եթերաճեմ
 Ողոյն կուտայ , յայն նայեցէք յուսադէմ .
 Ի լալ սովրած ձեր այդ աչլին սրբրեցէք ,
 Հայեր , հերիք դուք հեծէք :

ԵՐԳ Թ .

Ի ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՏՕՆ

Ն Ո Ւ Պ

Ողջնյս քեզ սլ երջանիկ օր
 Որ կը ծագիս մեզ յեթերաց լուսաւոր ,
 Քեզ իմ Հայեր կը սպասէին մեծայնյս ,
 Ե՛կ տալ նոցա կեանք եւ լոյս :

Խաւար օրեր , օրեր արեան
 Շատ մեր հայեր ունեցան , շատ Հայաստան .
 Մեզ երանի՛ , երկինք ի հաշտ մեզ բաժին
 Ըզքեզ սլ վեհ օր սըւին :

Օր՝ որ ի ցոլս երկնաճաճանչ
 Բերիր մեզի զազատութիւն աննահանջ ,
 Ու զգերութեան կոտորեցիր խիստ շըղթաներ
 Յոր կապէին մեր թեւեր :

Ձեր հառաչանք բազմադարեան
Ցաւոյ հովտէդ մինչ յհնովայն բարձրացան .
Չւարթնոց երգոց մէջ խառնեցան ողբք յերկին ,
Շարժեցաւ գութ Անմահին :

Ահա Հրեշտակն Հայաստանեաց
Աւետաւոր ձեզ առաքի յեթերաց .
Յահեակ ձեռին շողայ պըսակ լուսազգեաց ,
Յաջ՝ դաշնագիր ձեր կենաց :

Այն Օրինացն է ձեր մատեան՝
Որ բղբազգիդ ունի ի ծոյ դրաւակսն .
Հոն ամիրտիեալ կան ձեր ր՛լոր յոյս , պարծանք ,
Հոն միայն ձեր , Հայեր , կեանք :

Օ՛ն փութացէք զըւարթագէմ
Ողջունեցէք ըզձեր Հրեշտակ երկնաճեմ .
Նորա թեւեր ձեզ սաւառնին հովանի ,
Գողաց ազգիդ թըշնամի :

Չերկիւղ սըրտէդ հալածեցէք ,
Եւ ինքզինքնիդ Հայ ըլլալնիդ ըրգացէք .
Ձեր իրաւունք պաշտպանեցէք լիուլի ,
Ձեզ Պարտքդ ըլլան պաշտելի :

Հայեր , ոտիք ձեր մէջ են բուն՝
Ատելութիւն , նախանձ , հերձուած , չարութիւն .
Ասոնց դէմ ճն ելէք ի խաղմ անարիւն ,
Յաղթող եւե չայութիւն :

Ձեր Կըրօնից նըշանն է Սէր ,
Ձեր Օրինաց գիրք՝ Միութիւն տայ պատուէր .
Հնապա , Սիրոյ եւ Միութեան զինուորներ
Բանակ մ՛եղիք անվեհեր :

Խաչակրութիւն մը Հայկական
Հաստատեցէք դէմ Անմիաբանութեան .
Ով ձեզի հետ այս սուրբ մարտին չէ կըցորդ՝
Նա չէ Հայոց ժառանգորդ :



ԵՐԳ Ժ.

ԱՐՇԱԼՈՅՍ

... ἀργένεια φάνη βεδογάκτυλος Ἡδός.
IAIΔΔ Παψφδ. Δ. 477.

Վարդեր ու վարդեր
Թերթի թերթի փլթթեր ,
Ի հապոյտ եթեր
Զխնափայլ ամպեր՝
Քայլերու դ անջեւ
Սրփուելով թեթեւ ,
Քեզ՝ բընութեան հետ՝
Յայս ժամ հեղաւէտ՝
Մընան մեծայոյս ,
Ո՛վ քնդցր Արշալոյս : —

(*) Մագեցաւ այլաձեւերն Վարդաման Արշալոյս :

Ահա շող ի շող
Շուշանաց ի քող ,
Զիւր սակենըշոյլ
Վարսեր հոյլ ի հոյլ
Ծուփ ի ծուփ խտփուս՝
Թողլով ի զեփուս ,
Եւ մարդըրտայեւ
Պարզելով թեւեր՝
Նազի Արշալոյս ,
Երկընքին այն կոյս :

Ահա վառ ի վառ
Ճակատուն գոհար ,
Եւ բըրերն անուշ
Քլթթելով քընքուշ ,
Զերկին եւ զերկիր
Գըրդէ սիրալիր .
Շըրթներուն իւր վարդ
Ի ժըրտա զըւարթ՝
Մազկանց թոյր ի թոյր
Հեշտից ցօղէ բոյր :

Ահա սոյլ ի սոյլ
Թըռնեկացըն բոյլ՝
Ճըռուողեն ընդ բոյս ,
Ողջոյն Արշալոյս .
Ողջոյն ո զմրոայլ
Փոխարկեւ ի փայլ ,

Ու զտըխուր երկիր
Գործես ցընծալիր .
Ո՛հ , յէից սղջոյն՝
Ա՛րշալոյս , ողջոյն :

Քեզ ամէն ոք տայ
Զիւր ձօն նախընծայ .

Քեզ՝ ըզվատիկադոյն ,
Քեզ՝ ըզսըբբագոյն .

Քեզ ամպ , սիւք , վըտակ ,
Ծագիւոնք եւ սոխակ ,
Ամէնք տան քեզ գով՝

Հային քո սիրով ,
Ո՛վ երկնային կոյս
Սիրոնն Արշալոյս :

Ո՛հ , դու որ սոյսպէս
Մեր սիրան ըզմայլես ,

Մեր բըբերն աղօտ
Մի թողուր կարօտ .


Երբ գերեզմանին
Յաղջամուղջ փակվին . . .

Այլ զանոնք քո լոյս
Եւ աչնց ոգւոյս

Շողշողն ի յոյս ,
Կուսանն Արշալոյս :



ԵՐԳ ԺԱ.



Ք Շ Ո Ւ Ա Ռ Հ Ա Յ Ե Ր

Ա.

Ամէն օր նոր ցաւ , ամէն օր արցունք ,
Հայեր , արտասուանց առած էք կընունք . . .
Ամէն դառնութիւն , վիշտք զըժոխըմբեր
Զեզ միայն պահված են , թըշուան Հայեր :

Հայրենիք ձեր սուրբ՝ աւերակ տըխուր ,
Վըբանն արիւնուռչտ կախված Քիւրախն թուր ,
Զ՛ուռնիք ըստացուածք , դողայք տիւ գիշեր .
Կեանք է ձեր կեանքը , ո՛վ թըշուան Հայեր :

Կնւլայք . . . բայց ո՛վ ձեր տեսաւ արտասուք ,
Ո՛վ կը լըսէ ո՛վ երբ հեծեծէք դուք .
Զեր ճակատագիր կարծված են վըշտեր ,
Որոնն փոյթ ձեր վիշտք , վան թըշուան Հայեր :

Բիրտ Սեւեռնացոյն պաշտպան Եւրոպայ ,
Վայրազ Մարտնուոյն բանակներ կուտայ ,
Իսկ ձեզ՝ կը նային աչօք անտարբեր .
Քնք են սիրաք ամէն՝ ձեզ , թըշուառ Հայեր :

Որո՞ւն հոգ թէ ձեր կոյս Եկեղեցի
Զաղրալից Քիւրտէն պըղծեալ աւերի . . .
Թէ՛ ձեր աղօթից հեա երկնանըւէր
Խառնի ծուխ արեան ձեր , թըշուառ Հայեր :

Որո՞ւն հոգ թէ ձեր քըրտունք դառնաշխատ
Բարբարոսաց ձեռք կողոպտին անդատ .
Որո՞ւն փոյթ թէ ձեր տուն , արաք են յաւեր . . .
Վըճուեալ չէ ձեզ լալ , իմ թըշուառ Հայեր :

Ո՞ւմ փոյթ թէ որդիքդ՝ իրր ըղխոտ հընձվին ,
Թէ՛ դըրկէդ կուսանք վարդից պէս խրլվին ,
Թէ՛ սուրբ առագաստ ձեր սըգայ գիշեր . . .
Է՛հ , միթէ մարդ էք դուք , թըշուառ Հայեր :

Միթէ դուք մարդ էք որ խուժն անօրէն
Հրացան վար դընէ , պատկառի ձեզուէն .
Միթէ դուք մարդ էք որ բիւր ձեր ցաւեր
Ի նկատ առնըվին , ան թըշուառ Հայեր :

Թո՞ղ երկիր իրմէ արիւնդ բըռնավէժ . . .
Թո՞ղ քընքուչ կանայք՝ թոռմին անվըրէժ . . .
Թո՞ղ քանդվին տաճարք եւ սուրբ ձեր վանքեր . . .
Օտարացն ուզած այս չէ , խեղճ Հայեր :

Օտարին փախաք այս չէ որ ո՞ն միշտ
Օր օրուան վըրայ ծանրանայք ի վիշտ ,
Որ եկեղեցիդ քայքայի յաւեր :
Եւ սոսիք զարնեն ծափ , թըշուառ Հայեր :

Օտարին խնդրածն այս չէ որ բընաւ
Զը մընայ Հայուն անուն եւ համբաւ ,
Կործանիք յայլոց , անտուն եւ յիւրեր ,
Կործանէք զիրեար , ո՞վ թըշուառ Հայեր :

Ի

Ա՛յսպէս են օտարք . — իսկ դուք աւելի
Միթէ գո՞ւթ ունիք ազգիդ եզկելի .
Հայրենեաց ցաւոց ո՞չ դուք անտարբեր
Օտարի նըման կը նայիք , Հայեր :


Ո՞չ սառած սըրտով եղբարցդ աղետից՝
Խուլ էք հառաչմանց նոցա մահալից . . .
Ոգիք ձեր՝ փոխան զգայմանց աղգասէր
Զեն լըցեալ ոխով , կըրիւք , ո՞վ Հայեր :

Եսու թիւն անգութ սըրտերնիդ գըռած ,
Ժանտ ազահութեամբ հարուստք կարկամած ,
Ա՛յն ատեն միայն կ'իմացվի կեանք ձեր .
Երբ ձեր եղբօր դէմ վառվիք , ո՞վ Հայեր :

Ո՛հ , բայց ձեր այդ կեանք որ տայ մահ եղբոր՝
 Նըզովք եւ կեանքիդ բերէ անաւոր ,
 Ո՞ւր , ո՞ւր Աղգուծիւն այսպէս կ'երթայ ձեր՝
 Թէ չէք միանար դուք , թըշուան Հայեր :

Թըշուան առաւել էք դուք վնճ այնչափ
 Որ թըշուանութեան ձեր չը դիտէք չափ . . .
 Աւանդ . մինչեւ ցերբ ի քուն մահաստուեր
 Պիտի չարթըննայք դուք , թըշուան Հայեր :

ԵՐԳ ԺԲ.



Հ Ա Յ Ո Յ Մ Ա Յ Ր Ե Ր



Հայոց մայրեր ,
 Սիրուն մայրեր ,
 Չէ , ձեզ միայն չէք ծըներ
 Ձեր զաւակներ :

* * *

Այն կաթ ու մեղր անուշ սըղայք՝
 Առ որ ըզունչ ծոցոյդ կուտայք ,
 Այն գայթ ի գայթ սիրուն սըղայք՝
 Որոց վերայ կը դուրգուրայք ,
 Ու երբ « Մայրիկ » կոչեն ըզձեզ՝
 Համբոյր տայք բիւր կարօտակէզ .
 Հայոց մայրեր ,
 Սիրուն մայրեր ,
 Չէ , ձեզ միայն չէք ծըներ
 Ձեր զաւակներ :

Այն կրակ ու բոց աշխոյժ որդիք՝
 Զըւարճութիւնք ձեր մայրենիք,
 Այն խելացի ժիր պատանիք՝
 Յոր ըղմայլմամբ ողւոյդ նայիք,
 Իբր ի սըրտիդ յոյսեր բոլոր,
 Պարծանք եւ զարդ ձեր փառաւոր .

Հայոց մայրեր,
 Սիրուն մայրեր,
 Չէ, ձեզ միայն չէք ծըներ
 Ձեր զաւակներ :

Կայ ձեզմէ զատ կայ ուրիշ մայր՝
 Ձեր ու որդւոցդ ամենամայր,
 Որ ձեր վախեր, վիշտ ու ցաւեր,
 Ուրախութիւն, փափաք, յոյսեր,
 Ու մայրենի զգացմունքդ անչափ՝
 Ձեր հետ եւ ինք կըզգայ ձեր չափ .

Հայոց մայրեր,
 Սիրուն մայրեր,
 Չէ, ձեզ միայն չէք ծըներ
 Ձեր զաւակներ :

Որ ձեր արդոց օրոցքին քով
 Ձեր հետ նըստի յոյս ըզյուսով,
 Որ առաջին նոցա քայլեր
 Կըհամբէ ձեր հետ սիրա յերեր,
 ' Ի երջանկութեան նոցա համար
 Կ'աղօթէ ձեր հետ անդադար :

Հայոց մայրեր,
 Սիրուն մայրեր,
 Չէ, ձեզ միայն չէք ծըներ
 Ձեր զաւակներ :

Այո՛ այդքան սիրոյն փոխան
 Սէր պահանջէ եւ Հայաստան,
 Հայաստան, մայր մեր ամենուն,
 Հայաստան, կեանք մեր սըրտերուն,
 Հայաստան, լոյս մեր մութ աչքին,
 Հայաստան, ս՛հ մեր յոյս վերջին :

Հայոց մայրեր,
 Սիրուն մայրեր,
 Չէ, ձեզ միայն չէք ծըներ
 Ձեր զաւակներ :

Ո՛հ, ձեր անուշ անուան հետ մէկ
 Եւ զՀայրենեաց սովրեցուցէք .
 Սովրեցուցէք որ զՀայաստան
 Ձեր հետ որդիք ձեր մայր ճանչնան .
 Ձեր հետ ըզնա մէկտեղ սիրեն,
 Ձեր եւ նորա սէր չըբաժնեն :

Հայոց մայրեր,
 Սիրուն մայրեր,
 Չէ, ձեզ միայն չէք ծըներ
 Ձեր զաւակներ :

Ա՛հ , դուք կ'երթայք , փափկիկ մայրեր ,
 Իսկ Հայաստան մնայ աներեր ,
 Բայց թէ զորդիս ձեր կըրթեցիք
 Ձեր հետ յիշել եւ զՀայրենիք ,
 Հայաստանի անուան հետ մէկ
 Ըզձերդ այլ ոչ մտնան երբէք .

Հայոց մայրեր ,


Սիրուն մայրեր ,

Ձէ , ձեզ միայն չէք ծըներ

Ձեր դաւակներ :



Ե Ր Գ Ժ Գ .



ՊԱՆԴՈՒԽՏՆ

ԱՌ

Մ Ի Մ Ա Ռ Ն Ի Կ



Միծառնիկ , ծիծառնիկ ,

Գո՛ւ էր ուրեմն անտէրունչ այն բունիկ՝

Ձոր այս երգին խորչ , — առաջին մըտնելու —

Տեսայ թափուր , եւ թափեց աչք արտասուս .

Արտասուս , զի յիշեցի ես տըխուր՝

Որ պանդըխտիս ալ բոյն այսպէս է թափուր :

Միծառնիկ , ծիծառնիկ ,

Ո՛հ , յինէ մի հարթչիւր , փութն քո բունիկ ,

Յիս՝ բարեկամ մի գըտանես եւ ընկեր .

Նրման քեզի պանդո՛ւխտ եմ ես , չ'ես տեսներ .

Պանդո՛ւխտ , գիտեմ թէ զի՛նչ քաչէ սիրտ կարօտ ,

Պանդո՛ւխտ , գիտեմ պանդըխտութեան ցաւ մեռտա :

Ծիծառնիկ , ծիծառնիկ ,

Երանի՛ քեզ , ահա գըտեր քո բունիկ .

Պանդըխտութեան քո ժամանակ՝ լըցաւ կարճ ,

Մոռցիր վըշտերն ու ճըռուողէ՛ նորնգւարճ .

Ի՛նձ թող ըզվիշտ՝ որ սո՛ն գիտեմ ոչ բընաւ

Թէ՛ երբ եւ իմ պանդըխտութեանս է զըրաւ :

Ծիծառնիկ , ծիծառնիկ ,

Քո յոյս դարունն էր որ գըտնես քո բունիկ ,

Իսկ ինձ՝ ճըմնոն է յարատեւ ու ճըմնո . . .

Հայրենեացս հետ կորեաւ դարունս վարդաբեր :

Վ՛ան , պանդըխտին մութ կ'երեւի լոյսն օտար ,

Օգ՝ անախորժ , ջուրը՝ լեղի , հացը՝ քար . . . :

Ծիծառնիկ , ծիծառնիկ ,

Ա՛խ , երբ դառնաս նորէն յանուշ յայս բունիկ՝

Պիտի լըսես իմ բարեւիս դողդոջ ձայն՝

Թէ՛ պանդըխտիս գըտնես խըրճիթ՝ լուռ , ունայն . . .

Թըռի՛ր յայնժամ գերեզմանին իմ հողիկ ,

Հէգ պանդըխտին բեր հայրենեաց մի ցօղիկ . . .

Ծիծառնիկ , ծիծառնիկ :



ԵՐԳ ԺԴ.

ՀԱՌԱՉԲ

Հ Ս Յ Պ Ա Ն Գ Խ Տ Ի Ն

Պանդըխտութիւն , պանդըխտութիւն ,

Ա՛հ , սըրտմաշուք պանդըխտութիւն .

Ո՞վ այնպէս լաւ ըզքեզ , սո՛ն , սով կըճանչնայ

Քան զորդին Հայկայ :

Ո՞վ տառապանքդ ու քո ցաւեր

Այնպէս երկար քաշել քաշեր՝

Որպէս հէգ Հայն՝ յոր կըթափես քո զամէն

Հին վըրէժդ ու քէն :

Որո՞ւ աչքէն այնչափ արցունք ,

Որո՞ւ սըրտէն այնչափ կայծունք ,

Որո՞ւ բերնէն այնչափ հառաչք արիւնթոր

Խըլես ամէն օր :

Աչքն որ բանայ յաշխարհ՝ առաջ
 Քեզ կրտեանայ՝ քեզ ձախ եւ յաջ .
 Դո՛ւ ես դայեակ Հայուն յաւուր ծընընդեան ,
 Դո՛ւ պատեա տապան :

Աչք լալագին՝ գըլու-լս խոնարհ
 Թախառելով յամէն յաշխարհ ,
 Հայն հեծեծէ , « Դո՛ւ ես արդեօք իմ երկիր ,
 « Զհարցս ունիս մոխիր » . . . :

Կամ երբ տեսնէ լերանց գօտիս՝
 Հառաչէ . « Դո՛ւ ես մեր Մասիս » .
 Եւ կամ մաքուր գետոց տեսեալ սահա արագս՝
 « Դո՛ւ ես իմ Արաքս » :

Բայց լեռն հայի սեւ սեւ յօնօք ,
 Եւ ոչ լըսէ զՀայուն ողոք .
 Եւ չըմարեր գետն այն ալեօքըն թաթաւ
 Հայուն ըզծարաւ . . . :

Ի՞նչ սըրտաբեկ գոյ առաւել ,
 Բոլոր զերկիր չուրջ թախառել՝
 Եւ ոչ լըսել եւ ոչ ըզգիւղ մի կամ տուն
 Հարցդ յանսուշ անուն :

Ո՛հ , ինչ ցաւ , ինչ քան դայն արխուր
 Քան չըզիտել թէ թազվիս սւր .
 Զըզիտել թէ կեանք արւողացդ արդեօք քով
 'Տի նընջես մահով :

Ի՞նչ քան դայն դառն՝ չ'ունել բընաւ
 Եւ ոչ մի թիզ աւազ կամ կաւ ,
 Եւ չըկարես ասել մահուդ յանկողին ,
 « Զքզ կըթողում , սրդեակք , ըզհարցս իմ գետին » . . .

Պանդըխտութիւն , պանդըխտութիւն ,
 Ա՛հ սըրտամաշնուք պանդըխտութիւն ,
 Ո՞վ այնպէս լաւ ըզքեզ , ո՛հ , ո՛վ կըճանչնայ
 Քան զորդին Հայկայ :



ԵՐԳ ԺԵ.

Հ Ա Յ Ա Պ Ր Ի Ն Ք

Հայ ապրինք, Եղբարք, մարդկութեան մէջը,
Հայ կրնքեր է մեզ Պատմութեան էջը.
Հայ անուամբ ըզմեզ կ'ողջունեն Երկինք. —
Ե՛ղբարք, Հայ ապրինք:

Հայ ապրինք. — Մեր հայրն է այն Գիւցազուն
Որ զԱզատութիւն սովրեցոյց մարդուն,
Ու մեզ վեհ Անուն մը արւաւ բաժինք. —
Ե՛ղբարք, Հայ ապրինք:

Մեր աշխարհն է սուրբ: — Մեր հողուն վրբան,
Աստուած է քալեր, հանելով զԱզամ.
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ Կնք. —
Ե՛ղբարք, Հայ ապրինք:

Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին օրրան.
Երկիր փրկութեանն է մերս Հայաստան,
Կըրօնից նախկին սեզան է Մասիք. —
Ե՛ղբարք, Հայ ապրինք:

Հայուն պերճ անուն՝ մէջ միայն յերկիր՝
Այլ եւ յեթերց մէջ շողայ լուսալիր.
Քաջ Հայկին աստեղք անմահն են յերկինք, —
Ե՛ղբարք, Հայ ապրինք:

Հայ ապրինք. — Ո՞ր ազգ կայ Հայուն նրման,
Որ ունենայ հին պարծանքներ սյսքան,
Ո՞ր ազգ Հայուն պէս չըքեզ Հայրենիք. —
Ե՛ղբարք, Հայ ապրինք:

Ըսէք, մը Աղբին չորս Առաքեալներ
Երկնից թագաւորն է դերպան դրկեր,
Ո՞ր թագաւորին հետ թղթակցեր Ենք. —
Ե՛ղբարք, Հայ ապրինք:

Ով կրնայ համրել Սրբոց մեր զանուանք,
Մեր պատմութիւնն է Նահատակաց ցանկ.
Մեր Եկեղեցին յերկրի է Երկինք. —
Ե՛ղբարք, Հայ ապրինք:

Քրիստոսի ունինք անդրանիկ օրհնէնք,
Հաւատոց եղանք միշտ ախոյեան մէնք.
Հայը զարմացոյց զերկիր եւ զերկինք. —
Ե՛ղբարք, Հայ ապրինք:

Մեր ազգ հետեւող է ճիշդ Յիսուսի,
Որ Խաչն սյուշափ դար առած է յուսի.
Ո՛չ, չքիսնարելի չ'ըլար գասալիք.
Եղբարք, Հայ ապրինք:

Այո՛ Խաչին կեանք՝ կեանք է վըշտալից ,
Այո՛ , Հայուն կեանք՝ կեանք է ցաւալից .
Բայց Խաչն՝ յաղթութիւն ունի վեհ կընիք .

Ե՛ղբարք , Հայ ապրինք :

Մեր քաղցր Հայրենիք , մեր թագ , գաւազան՝
Ամպեր են ծածկեր արեւի նըման .

Յուսացէք , արեւ կուտան մեզ Երկինք . —

Ե՛ղբարք , Հայ ապրինք :

Ո՛չ , ճակատագիր մեր չէ՛ միշտ տըխուր՝
Ըղթչուառութեան ուտել հացն ու ջուր .
Նոր երջանկութեան ապագայ մ՛ ունինք . . .

Ե՛ղբարք , Հայ ապրինք :


Հայ ապրինք , որ մեր որդիք ալ , Եղբարք ,
Կարենան պարծիլ որ գմեղ ունին հարք .
Զ՛ըլլանք Հայ անուան չ՛ըլլանք նախաախինք . —

Ե՛ղբարք , Հայ ապրինք :


Հայ ապրինք . — Օր մը յաղթական մահուն
Պիտի բարձրանայ անմահ Հայութիւն . . .

Ո՛հ , այն օր մեղի շնու ծագէ , Ե՛րկինք . . .

Ե՛ղբարք , Հայ ապրինք :



ԵՐԳ ԺԶ .



Հ Ա Յ Մ Ե Ռ Ն Ի Ն Ք



Ոչ եղբարք , ո՛չ , օտարներէն չըկայ յոյս .
Մի աչվընիդ մի դարձընէք յայս յայն կոյս .
Օտարն ըզձեզ թէ եւ սիրէ հիւրաբար՝
Օտարն՝ ան , միշտ է օտար :

Օտարը ձեր վիշտ կը դիտէ անգորով ,
Ի՞նչ փոյթ որ դուք թախիք արցունք արիւնով .
Ով որ Հայ չէ՛ Հայուն ցաւեր նա չըզգար ,
Ի՞նչ կը խարվիք անդադար :

Մի դուք ձեր յոյս մի աւանդէք օտարին ,
Մի խոր վերքերըդ ցուցանէք անդութին .
Արգահատմնրս կը յուսայք , օգնութիւն ,
Ձեր կը ծաղրեն մերկութիւն :

Գիտեմ ձեր բեռը ծանր է ծանր , սլ Հայեր ,
Բայց կը կարծէք զայն վերցընեն օտարներ .
Թողէք զօտար , տուէք եղբայր եղբօր թեւ ,
Եւ զօրացէք անդեղեւ :

Բաղդը դարձեր է ձեզի դէմ թըշնամի ,
 Մի վըհատիք , ցուցուցէք սիրտ Հայեցի .
 Չէ կարող բաղդ յաղթել աղբլին այն քաջի
 Որ բաղդին դէմ կը կըռվի :

Ձեր հայրերուն՝ ոչ չըզթայք ոչ սուսերներ ,
 Չըկար . ացին ընկձել ոչ միտք ոչ սրտեր .
 Ինչո՞ւ ձեր սիրտ այսօր դողայ տըկար , հէք ,
 Ի՞նչ , այն քաջաց որդիք չէք :

Ձէք դուք որդիք այն դիւցազանց աննըման՝
 Որ Հայրենեաց ձենձերեցան ի սեղան . . .
 Ձէք դուք որդիք այն մեծ Հայոց՝ որոց կեանք
 Են մարդկութեան իսկ պարծանք :

Դուք որ ունիք ձեզ պատմութիւն մ'աղբայլին ,
 Որոյ վերայ մեծ աղբեր իսկ նախանձին ,
 Ի՞նչու այսօր մոռցած զԱնցեալ ձեր փառաց
 Երանի՛ տայք օտարաց :

Օ՛ն , ով կըզգայ ի սիրտ եռանդ եւ ոգի՝
 Թողու՛ զօտար եւ իւր նախնեաց հետեւի .
 Մեր կեանքը հոն է ուր Կրօնից մեր սեղան ,
 Ա՛յն է Հայոց վառարան :

Ե՛ղբարք , Հայուն կեանքը երբէք չըմարիր ,
 Երկինք լեցուն են այն բոցով կենսաձիր .
 Որչափ տիրէ մըշտայաղթ Խաչ Քրիստոսի .
 Հայն ալ անոր հետ կ'ապրի :

Ի՞նչ կը վախնայք . . . - Գլուխնուդ վերայ չէք տեսներ
 Քառաթեւին դիւասարսուռ վեհ ըստուեր .
 Չայն սուրբ փայտին բուն շողեցին ձեր հարքը
 Կրենց վըսեմ արեամբը :

Դուք ալ Խաչին խարըսխեցէք ձեր յոյսը ,
 Եւ հաւտացէք պիտի ծաղի՞ ձեր լոյսը .
 Նա աղբութեանդ եզաւ պարիսպ ամբախակ ,
 Նա ձեր ըլլայ դէնք դրօշակ . . .

Ո՛չ , հընար չէ որ կորսըվի այն աղբը՝
 Որ հաւտարիմ մընաց Խաչին միշտ ոտքը .
 Նորա կեանքը պիտի տուէ այնչափ դար ,
 Որչափ Կրօնից կեանք՝ յաշխարհ :

Այն վեհ Կրօնից եւ Աղբութեան անունով ,
 Հայ եղբարք ձեռք ձեռքի տըւէք հուր սիրով .
 Ատելութիւն , քէն՝ մերժըվին ճն ի բնց ,
 Անիծեցէք զաղգատեաց . . .


Ամենուդ սիրտ՝ ըզգայ նոյն սէրն Հայրենեաց ,
 Ամենուդ միտք թըռչի յօգուտ համազգեաց .
 Ու ձեր յետին եղբօր արցունք ու ցաւ՝ միշտ
 Ըզգացէք ձեր իրրեւ վիշտ :

Օտարին հաց մեզի սընունդ չէ՛ բնաւ ,
 Օտարին ջուր՝ ոչ , չը մարեր մեր ծարաւ .
 Մեզի կենաց տըւող եւ մեր պահապան՝
 Է Աւազանն Հայկական :

Այն Աւագանն՝ այն Հայութեան կընքատուն ,
 Ո՛հ չ՛ուրանամք եղբարք յուսովք զաղիաղփուն . . .
 Եւ թէ մեր շունչ պիտի մարի վերջապէս .

Թո՛ղ մարի յայն սուրբ կըրկէս :

Թո՛ղ ամենքս ալ ընդունի նոյն գերեզման ,
 Վասընդի նոյն էր ամենուս ալ օրրան . . .
 Հայ ծընանք մեք , Հայ ապրինք , Հայ եւ մեռնինք ,
 Օ՛հ , Հայ մըտնենք եւ յերկիւնք :



ԵՐԳ ԺԷ.

Ի ԳԵՐԵԶՄԱՆՍ

Պ Ա Ն Գ Ո Ւ Խ Ն Տ Հ Ա Յ Ո Յ

« Ոսկե՛րք ցամաքեալք , լուար՛ւք : »

ԵԶՅԿԷԼ. ԼԷ. 4



Զրմեոն հասեր , եւ ես յերկիր մ'ընկած օտար՝
 Զեզ կը մտածեմ , պանդուխտ եղբարք իմ ցըրտահար .
 Բուք կը տեղայ , ծածկեց բոլոր լեռն ու ձորեր ,
 Արդեօք եւ ձեզ , պանդուխտ Հայոց գերեզմաններ .

Զորս հալածանք անագորոյն մեր թըշնամեաց՝
 Հուրն ու երկաթ վարեցին դուրս ի Հայրենեաց .
 Եւ կամ բազդին մըրրիկ հասաւ ըզձեզ խըլեց ,
 Ինչպէս թաթառ՝ ծառն ի յարտէն իւր բացընկէց :

Որ քարչ եկած անապատներ ու սեւ սարեր ,
 Ի Տապանէն դուրս նետված խեղճ աղաւնիներ .
 Զեզ չըզրտաք ո՛չ գազար ո՛չ մէկ հովանի ,
 Բայց՝ երբ դըրիք գըլուխդ ի բարձ ցնւրտ խաչքարի :

Ո՛հ ձեր արիւն , այդ բոցախառն Հայն արիւն `
 Զոր Հայաստան վառեց սրբախցդ ի բարախիւն ,
 Ո՛վ կարծէր , ո՞վ թէ ի պիղծ տիղմ օտար երկրի
 Սառնամանեաց մէջ թախիլելով պիտի մարի

Այն հառաչանք ` զոր մռնչէիք ի սրբախց ձեր ,
 Իբրու զորոտ ի սեւ ամպոց , ո՞վ հէզ հայրեր ,
 Երբ գողգոջուն ձեռքով որդւոյն ձեր մէկհատիկ
 Բզհողն օտար ի գերեզման կը փորէիք

Այն քան զազբիւր առատ հոսած ձեր արցունքներ `
 Հայոց մայրեր ` երբ ըզբընքուչ ձեր աղջիկներ
 Արիւնուշա ձեռք մը կը խըլէր ձեր սուրբ ծոցէն ,
 Իբր ըղկոկոն վարդի կորզած վարդենիէն

Այն յուսահատ ձեր կողկողանք ` հարսն ու փեսայ ,
 Երբ ձեր զանրոյծ սրբատերուդ կապ ` սուրն անխընայ
 Կրարէր նետէր մէկդ ի հիւսիս մէկդ ալ հարսն ,
 Զինչ զոյգ շուշան եւ վարդ խըզած արիւնթաթաւ

Այն ճիչք անմեղ խեղճ արդայոյն սրբ մինացած `
 Որու չորս կողմ կոհակաց պէս աղէտք դիզված ,
 Ու մայրենի չ'ունէր իրեն պարիսպ ծոցոյն ,
 Ինչպէս մէկ ձագ մը կորուսած իւր մօրը բոյն :

Այն կուսական ծաւի կամ սեւ սեւ աչուկներ
 Որ մարդըրտի պէս թափէին սուրբ կաթիլներ ,
 Երբ զազլը շունչ մը չըրթներուն վարդին վըրան
 Կ'անցնէր ` ինչպէս ծաղկանցընդ թերթ խորշակ ամուսն :

Այն անդադար հառաչախառն սղբք ու լացեր `
 Որով զօտար հող թըրջէիք , պանդուխտ Հայեր ,
 Ու ցանկալի Հայրենիքէդ հեռու ` անհաս ,
 Նախ քան ըզմահ մեռայք ընկած պըտուղք սըհաս :

Այն ցան եւ ցիր դէզ դէզ Հայոց խեղճ ոսկըրներ ,
 Որ անծանօթք ` չը ճանչցըված լըցիք խորշեր ,
 Ու չ'եղան մէկն որ չըլկոխէ , պագնէ գձեր հող ,
 Ու մէկ չ'եղան որ ձեր վերայ թափէ հայ ցոյ

Ո՛վ հարք եւ մարք , իմ եղբայրներ , անուշ քոյրեր ,
 Ահա եւ ես ձեր պէս օտար անխիւն մ'ընկեր .
 Զեր պէս եւ ես Հայաստանէն դուրս ` անժառանգ ,
 Ու չ'ունիմ յոյս որ իմ լըավի հոն արձագանդ :

Բայց ձեր արցունք ` կ'ողողէ իմ ալ աչվըներս ,
 Զեր հառաչանք ` կը սոչորէ դեղնած չըրթներս .
 Ի՛մ ալ ճակատ ըզձեր մահուան թափթըփէ քերտ ,
 Զեր սըրտերուն կ'ըզգայ ըզհուր եւ խեղճ այս սիրտ :

Ո՛հ , լրսեցէք խոր հողերէդ խրդդուկ զայս ձայն ,
 Հայեր , ուր ալ ընկած լինիք հէզ , լրուելեայն .

Ո՛հ , այս եղբօր ձայն է որ ձեզ զամէն կ'ողբայ ,
 Եղբօրդ հառանջ է որ ըզՀայսդ անվըրէժ՝ լնց

Ո՛չ .- մոռցված չէք , յոր եւ անկիւն մեռայք երկրիս .
 Ձեզ մեք Եղբարս , եւ Հայաստան՝ գիտէ Որդիս .

Ո՛չ .- ձեր արցունք չէ զուր թափված հայրեր , մայրեր .
 Ձեր սրբութեան վարդ չէ խամրեր , Հայոց Կոյսեր

* * *

Ա՛խ , այս կըրակ սըրտէս ըրխած կըրակ արցունք
 Հասնի ամէն մէկուդ , պանդուխտք իմ Հայկադունք .
 Հալեցընէ գերեզմանիդ ձիւնն ու սառոյց ,
 Ու միշտ սըփոխ ձեզ նոր գարուն կենսայարոյց :



Վ Ե Ր Ձ



ՅԱՆԱ

ՅԱՆԱ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՎԼՊՖ

ԵՐԳ Ա.	Հրեշտակն Հայոց	1
ԵՐԳ Բ.	Հայկ	9
ԵՐԳ Գ.	Արամ	15
ԵՐԳ Դ.	Արա գեղեցիկ եւ Նուվարդ	22
ԵՐԳ Ե.	Զարմայր եւ Շուշան	55
ԵՐԳ Զ.	Տիգրանուհի	45
ԵՐԳ Է.	Հսկայն Հայոց Տորք	48
ԵՐԳ Ը.	Վերջին Հայկազն , Վահէ	51
ԵՐԳ Թ.	Արտաշէս Մեծն , Տիեզերակալ	57
ԵՐԳ Ժ.	Արտաւազդ Ա. բանաստեղծ թագաւոր	67
ԵՐԳ ԺԱ.	Արտաւազդ Բ. Հայոց Վրիժաճան	77
ԵՐԳ ԺԲ.	Նախավկայունին Սանդուխտ	90
ԵՐԳ ԺԳ.	Կոյսն Հոփսիմէ	100



ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԵՂԵՐԳՔ

ԵՐԳ Ա.	Հայուն կեանքը	105
ԵՐԳ Բ.	Պանդուխտ առ ամսն	109
ԵՐԳ Գ.	Հայ մայր մը	111
ԵՐԳ Դ.	Նորածիլ տերուք	119
ԵՐԳ Ե.	Առ տաճարն Հայոց, առէն պանդխտին	122
ԵՐԳ Զ.	Հովիկ հայրենի	126
ԵՐԳ Է.	Թէ տային ինձի	129
ԵՐԳ Ը.	Աղղուրաց Հայեր	152
ԵՐԳ Թ.	Ի Սահմանադրական տօն	154
ԵՐԳ Ժ.	Արշալոյս	158
ԵՐԳ ԺԱ.	Թշուառ Հայեր	141
ԵՐԳ ԺԲ.	Հայոց մայրեր	145
ԵՐԳ ԺԳ.	Պանդուխտն առ ծիծառնիկ	149
ԵՐԳ ԺԴ.	Հառաչք Հայ պանդխտին	151
ԵՐԳ ԺԵ.	Հայ ապրինք	154
ԵՐԳ ԺԶ.	Հայ մեռնինք	157
ԵՐԳ ԺԷ.	Ի գերեզմանս պանդուխտ Հայոց	161

ՎՐԻՊԱԿՔ

	ՍԽԱԼ	ՈՒՂԻՊ
Էջ 807,		
41 20	սակերտին	սակրտին
50 12	տըվաւ	տըւաւ
85 4	ղրահեա	ղրահեա
92 21	Որ գեղով վե՛հ է քան զԱստղիկ	
112 22	Զերկրի	Զերկի
145 4	ստեք	ստեք
154 8	սովեցոյց	սովեցուց
155 4	ս՛չ	ս՛չ
155 11	Ե՛նք	Ե՛նք
158 6	Զրկար սցին	Զրկարացին

ՏՊԱԳՐԵԱԼ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

ՀԵՂԻՆԱԿԻՆ



ՔՆԱՐ ՊԱՆԴԻՏԻՆ	<i>Քերթնասոր</i>
ՎԱՐԳԵՆԻՔ	<i>Քերթնասոր</i>
ԱՐՇԱԿ Բ.	<i>Ողբերգութիւն</i>
ԱԼԱՖՐԱՆԿԱ	<i>Կատակերգութիւն</i>
ՅԱՆԳԱՐԱՆ	<i>Բառգիրք յանգաց Հայ լեզուի</i>
ԴԱՇՆԱԿՔ	<i>Քերթնասոր Լամարթիւնի</i>
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԱՆԴՐԱԼԵՌՆԱԿԱՆՔ	
ՆԱԽԱԿՐԹԱՆՔ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ	



2013

14624

